



1/30



3046 15/

811-ԱԿ

ՀԱՄԱՌՈՏ

ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՌԻՍԿ ՊԵՏԱՌԹԵԱՆ.

արարեալ

Դ ՊՐՈՓ. Յ. ԿՈՂԴԱՆՈՎԷ:

Դ ՊԵՏԱ ՀԱՅԱՋԳԻ ՄԱՆԿԱՆՅ

Լարգամեայ

Թափառ-ՔՆ՝յ Աստրախանայ Նազարեանց:

Դ հայրապետութեան ան ան Յովհաննու վեհաօտիճա-
նեալ սրբին Կաթուղիկոսի ամ Հայոց և Ապետի:

Յաւանդարտութեան Հայոց Աստրախանայ և Կովկասու-
մի Սերովէի սրբին Արք Եպիս և Ապետի:



Դ ՄՈՍԿՈՎ:

Դ Տպարարտի Տեղաւորի Տեղաւոր Լուսարարի:
1840.

12004

1246


25-5985

9(47)

ПЕЧАТАНО
съ Дозволенія Императорской Академіи Наукъ.

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ
съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цен-
сурный комитетъ узаконенное число экземпляровъ. Москва.
Юня 11 дня, 1840 года.

Ценсоръ и Кавалеръ Иванъ Снегиревъ.



ЕГО ПРЕВОСХОДИТЕЛЬСТВУ

Господину Попечителю ИМПЕРАТОРСКАГО
Казанскаго Университета и его Учебнаго Округа,
Тайному Совѣтнику и орденовъ Св. Владимира
2 ст. Больнаго Креста, Св. Анны 1 ст. укра-
шеннаго ИМПЕРАТОРСКОЮ Короною и 4 ст.,
Св. Стонислава 1 ст. и Прусскихъ: за заслуги и
желѣзнаго креста Кавалеру, имѣющему Золотую
Шпагу съ надписью: *за храбрость* и знакъ
отличія безпорочною службы за XX лѣтъ.

МИХАИЛУ НИКОЛАЕВИЧУ

МУСИНУ - ПУШКИНУ.

Искреннее приношеніе.



ВАШЕ ПРЕВОСХОДИТЕЛЬСТВО!



Почти два исключительно города въ Европейской Россіи: Москва и Астрахань, содержатъ въ себѣ разсадники образованія для юношей Армянской націи. Учрежденіе учебнаго заведенія для Армянъ въ первопрестольной Столицѣ нашей предоставлено было свыше извѣстнымъ всему отечеству благодѣтелямъ Лазаревымъ; въ Астрахани же возстановить и дать новое бытіе небольшому, но въ своемъ родѣ полезнѣйшему Училищу, судьба назначила Ваше Превосходительство. По этому недовольно. Истинно просвѣщенное око Особы Вашей прозрѣло даже потребность въ обученіи Литтературѣ Народа Армянскаго, хотя столь важной при ходѣ умственнаго образованія въ настоящую эпоху, но доселѣ забытой и не обращающей на себя вниманія ученой любознательности.

И такъ кому же, какъ не Особѣ Вашего Превосходительства надлежало мнѣ посвятить сей слабый трудъ мой, единственно для пользы Армянскаго Юношества предпринятой.

Примите Ваше Превосходительство этотъ переводъ, какъ чистѣйшую дань моего искренняго желанія, съ каковыми сердце мое и по сану моему и по внутреннему сознанию стремится къ пользѣ дѣтей моей Націи, и какъ чувство глубочайшей признательности, съ каковымъ честь имѣю быть

ВАШЕГО ПРЕВОСХОДИТЕЛЬСТВА!

Нижайшій Богомолецъ

Армяно-Грегоріанской церкви Священникъ

Ома Назаровъ.

ՅԱՌԱՋԱՌԱՆ

Չիք ինչ տարակոյս յայնմ՝ թէ ընթերցանուի Պատմունք երևելի ազգաց օգուտ մեծ ընծայարէրէ ըստ բարոյական և քաղաքական մասին յընթացս կենցաղաւարութեան մերոյ: Անդանօր դէմ յանդիման տեսանէ նրբամիտ ընթերցողն զարս առաքինիս և զմոլիս, զմեծագործս և զփոքրոգիս. որոց գործողութեց և վարուց ճիշդ խուզողութիւն եղեալ նորա՝ կարէ ժողովել զբարի բարին յամանս, և զխոտանն ՚ի բաց ընկենուլ:

Ռուսաստան է մի յերևելի Տէրութեանց աշխարհի. ազգ Ռուսաց ազգ մեծ և հզօր զարդարեալ բազմատեսակ բարեմասնութեք՝ դարձոյց յիւր վերայ զմիտս գրեթէ բովանդակ Յհի:

Պատմութիւն Տէրութեան և ազգիս այսորիկ չերևեցաւ յարդ ՚ի մերում լեզուի. որ բազմօք յոյժ հարկաւոր է և օգտակար. ըստ որում Հայք բնակելք ՚ի Ռուսաստան իբրու յերկրորդական հայրենիս իւրեանց ընդ բարերար հոգատարութ Օգոստատիառ Միապետի նորա՝ կապակցեալ են ընդ Ռուսաց և քրիստոնէական հաւատով, և սովորութ և պաշտամամբ և առևտրական հաղորդակցութեք:

Յայսոսիկ խորհրդածութիւնս հիմեալ զգիտաւորութիւն, և միանգամայն կամեւով պիտանի լինել մանկանց Հայոց՝ թարգմանեցի զայս համարօր Գեորգիոսէան Ռուսաց Պատմութեան

Տոբեանն 'ի հոյ լեզու յոճ զիւրիմաց և համբակայարմար.
 յոր ձեռնարկուի խորհուրդ ետ ինձ և Կարգաւար Ուսու-
 մնարանաց քաղաքիս Պարոն Րիբուշկինն, յայն սակս՝ զի
 աշակերտք Հայոց Աղաբաբեանց Ուսումնարանի Աստրա-
 խանայ ընդ կառավարութի նորա եղելոյ՝ յուսանիլն զՊատ-
 մութիւն Ռուսաց 'ի լեզուի նոցայ, դժուարութիւն մեծ
 կրեն ըստ անկիրթ և անհմուտ լինելոյ նոցայ լեզուին
 Ռուսաց:

Վարձ լիազոյն համարեցայ իմոցս վատտակոց, եթէ
 համբակք Հայոց քաղեսցեն յայտմանէ զշահեկանութիւնս:



ՀԵՄԵՌՕՏ ԳԾԵԳՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԸՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Հիմնեալ 'ի վերոյ գլխաւորապէս դարուց մարթ է զՊատմութիւն Ռուսաց բաժանեւ 'ի շրջանս այսու եղանակաւ:

Ըջ^ա Թ: Թ:

'ի սկզբանէ Ռուսաց Միապետուն յվախճան Եարոսլաւայ Թ. Վլադիմիրովիչի:

862—1054=192.

Ըջ^ա Թ: Թ:

'ի մահուանէ Եարոսլաւայ Թ. Վլադիմիրովիչի մինչև ջժամանակ ասպատակութեան թաթարաց 'ի Ռուսաստան:

1054—1224=170.

Ըջ^ա Թ: Թ:

Յառդատակուէ թաթարաց 'ի Ռուսաստան մինչև ջժամանակ ամբառնալոյ 'ի մեծ իշխանական դահ Մոսկովայ Յովհաննու Թ. Վասիլևիչի և ջազատուի Ռուսաստանի 'ի տիրապետութենէ թաթարաց:

1224—1462=238.

Ըջ^ա Թ: Թ:

'ի Յովհաննէ դ. յվերաբազմիւն 'ի Վահ Թ. Ռուսաց Տան Բոմանովայ:

1462—1613=151.

ԱՐՇԱՆ Է:

Դի ժամանակէ տաճարնալոյ Դի Պահ ամ Ռուսաց Տան
Բոմանովոյ ցժամանակ Պետրոսի ամ:

1613—1682=69.

ԱՐՇԱՆ Է:

Դի ժամանակէ Պետրոսի ամ. ցբազմիւն Դի Պահ ամ
Ռուսաց Կատարինէի թ:

1682—1762=80.

ԱՐՇԱՆ Է:

Դի ժամանակէ բազմալոյ Դի Պահ ամ Ռուսաց Կատա-
րինէի թ. ցվախճան թագաւորի Կայսեր Ալէքսանդրի ամ:

1762—1825=63.



ԹԱԳԱԿԱԼ ՏՈՒՆ

ՐԻՒՐԻԿԱՅ

ՇՐՋԱՆ ԼՈՒԱՋԻՆ:



Դ՛ սկզբնաւորուն Ռուսաց Միապետուն ցլախճան Լա-
րոսլաւայ ան. վաղիմիրովիչի:

Յերկրի՝ որ այժմ կացուցանէ զլայսերուն Ռու-
սաց, ՚ի հնունս բնակէին Սկիւթացիք, Սարմատա-
ցիք, Սլաւոնացիք, Փիւնացիք և այլ ազգք: Այսո-
քիկ ազգք գոլով յանկիրթ և ՚ի օոպու վիճակի,
թագուն մնացին յերեսաց Պատմուն. ուստի հին
Պատմաբանք և Աշխարհագիրք զսակաւ իմունէին
զնոցանէ զճանօթուն: Յոյնք գրեթէ ընդհանրապա-
անունանէին զայժմեան Ռուսսիա Սին-Սին. իսկ
Հռովմայեցիկ Սալմասթի:

Դ՛ վեցերորդ դարու յետ ծննդեան Քսի, Սլա. Սկզբնաւորու-
վոնացիք բնակիւք առ գետովն Դունայի՝ դիմեցին ինն Ռուս-
ի հիւսիս և յարեւելս Եւրոպիոյ: Բզմք ՚ի նոցա. Մալեպոն-
նէ բնակեցան յեզերս գետոց Դնեպրեայ, Սուլայ, յանդէս Քէ-
Օկայի և վոլխովայ և հիմնեցին զքաղաքսկիով, Սմո-
լէնսկ, Նովգորոդ և զայլս: Սլաւոնացիք Նովգո-
րոդայ ը երկար ժամանակ մնացին ը հասարակապետա-

ՌԵԷԷ
862—879.

կան Կառավարուք. և ՚ի վերջոյ հաւատի լեալ
Թէ մարդիկ կարեն լինել հանգիստ և բարեբաղդ
մի միայն ը Միապետական կառավարուք, սահմանե-
ցին հաստատել ղայնպիսի կառավարուի և ընտրե-
ցին իշխան զԱւարեկ (*) Ռուսն Րիւրիկ, որ եկեալ
՚ի Նովգորոդ ը եղբարց իւրոց Սինկլոսի և Տրու-
վորայ և ը այլոց բազմաց ընկալաւ զիշխանուի ՚ի
վերայ Սլավոնացւոց՝ որք հրաւիրեալն էին զնա-
այսպս եղաւ հիմն արդի Միապետուի Ռուսաց։ Յան-
ուանէ այսոցիկ Աւարեկառուսաց երկիր՝ յորում
բնակէին յայնմ ժամանակի Սլավոնացիք Նովգո-
րոդայ, անուանեցաւ Ռուսսիա։ Այս անուանակո-
չութիւն յընթացո ժամանակաց տարածեցաւ ը
ամբ երկիր՝ որ կացուցանէ այժմ զՏրուի Ռուսաց։

՚ի սմին ժամանակի համաշխարհիկք Րիւրիկայ
Ասկուդ և Դիր ազատեցին զԿիով ՚ի ձեռաց խա-
ղարայ՝ որք էին սերունդք ազգին Թաթարաց. հաս-
տատեցին ՚ի նմին քաղաքի զբնակուի իւրեանց և
ձեռն ՚ի գործ եղին զիմել պատերազմաւ ՚ի վերայ
Տրուլթեան Յունաց։ Րիւրիկ մեռաւ, կացուցեալ
հոգաբարձու ՚ի վերայ մանկահասակ որդւոց իւրոց
իգորայ և միանգամայն Կառավարիչ Ռուսսիոյ զա-
զգական իւր զՕլեղ։ Սա արկ ը իշխանուք իւրով
զՍմոլէնսկ, զԿիով և զամբ երկիրս և զտեղիս յազ-
բերայն Դնեպրեայ մինչև ցայժմեան Նահանգ Քեր-
սոնի։ Տեւեալ Կիովայ ևս անդ հաստատեալ զիւր
բնակուի, յարոյց զպատերազմ ըդէմ Յունաց։

ՕԼԷԷԷ
ՂԱՐԷԷԷԷ
ՐԱՐԷԷԷԷ
879—912.

(*) Աւարեկառուսք բնակէին ՚ի հարաւային արեւմտեան
յեզերս Բոնաիկեան նեղուցին։

Այս պատերազմ վախճան էստ այնպէս, զի Յոյնք
հաստատեցին զհաշտութիւն ը Օլեղայ, որ շահաբեր էր
վաճառականութեան այնր ժամանակի:

Ի սկիզբն իշխանութեան Իգորայ Դրեւլեանացիք սե- Իգոր:
րեալք յաղդէ Սլավոնացեաց նուաճեալք յՕլեղայ, 912—915.
որք բնակէին յայժմեան նահանգս Առլինսկի կո-
չեցեալ, յարուցին զազմուկ շիոթի: Ի սմին ժա-
մանակի Փեչենեգք աղդ ինչ ՚ի ցեղէ Թուրքմա-
նաց սկսան աւերել զհարաւային Նահանգս Ռուս-
սիոյ: Իգոր հնազանդեցոյց զամսին զնս և անկաւ ՚ի
չու ըդէմ Տէրութեան Եռնաց: Յոյնք զխաղաղութիւն
խօսեցան ը նմա, նորոգեցին զգաշն հաշտութեան, որ
եղեւն էր ը նս յՕլեղայ:

Իգոր սպանաւ ՚ի Դրեւլեանացեաց, որդի նր Սլե. Սլեպոպուկ:
տոսլաւ էր դեռ ևս ՚ի տղայական հասակի. ուստի 945—972.
կին Իգորայ Օլա ընկալաւ զկառավարութիւն Ռուսսիոյ:
Յայսօր ժամանակի Ռուսք էին կապաշտք: Օլա
հանդիսիւ ընկալաւ զհաւատն Քրիստոնէական ՚ի 955.
Կոստանդնուպօլիս, անուանեցաւ Հէղինէ և յետ
մահուանն դասեցաւ ՚ի թիւս սբոյ: Յետ ընդունե-
լոյ իւրոյ զհաւատ քրիստոսական, Օլա զիշխանութիւն
Ռուսաստանի յանձն արար բոլորովմբ որդւոյ
իւրում Սվէտոսլաւայ: Սա հնազանդեցուցեալ զխա-
ղարս՝ երաց զպատերազմ ըդէմ Բուլղարաց՝ որք
բնակէին յաջակողմն Իանոբայ գետոյն ՚ի տեղւոջ,
որ այժմ կացուցանէ զմասն Լերոպական Տաճկաս-
տանի և կոչի Բուլղարք: Անգանօր կամք եղէն նմա
հաստատել զիւր բնակութիւն ՚ի քաղաքն Պերեաս-
լավեց: Այս դիտաւորութիւն նր գրգռեաց զնա ՚ի
մարտ ը Տէրութեան Եռնաց, ուր յայնմ ժամանակի 970.
Թադաւորէր Կայսրն Եովհաննէս Զմէկի: Սվէտոս-

լավ յաղթեաց նց մերձ ՚ի քաղաքն յԱնդրիանու-
պօլիս, բայց առ Դորոստոլա (Սիլիստրիա) հան-
դիպեալ կոտորածի, հաշտեցաւ լէ Յոյնս, եւ յեր-
կրէ Բուլղարաց եւ առ Սեամբք Դնեպրեայ սպանաւ
՚ի Փեչենեգաց:

Ներքին խառ-
վումբներէ:
972—980.

Յառաջ քան զԽաղալ իւր ՚ի պատերազմ ՚ի
Բուլղարս, Սվետոսլավ բաժանեաց զՌուսսիա
յերիս գլխաւոր նահանգս կիովու, Դրելլանացւոյ
և Նովգորոդայ, զորս յանձնեաց կառավարութե
որդւոց իւրոց, Եարոպոլկայ, Օլեղայ և Վլադի-
միրի. ոչ անապան յետ մահու Սվետոսլավայ յա-
րեաւ պատերազմ ՚ի միջի որդւոց նր. և վերջացաւ
մահուամբ Օլեղայ և Եարոպոլկայ. ուստի Վլա-
դիմիր եղև Տերապետ բովանդակ Ռուսաստանի:

Վլադիմիր:
980—1015.

Այս իշխան բարձրացոյց զԿիւսս Ռուսաստանի
տիրեալ Գալիցիոյ և այլ տեղեաց՝ որք ենն լէ միջ
Բուղայ և Բալտիգ Ծովու: Բայց գերագոյն երախ-
տիք՝ զոր եցոյց նա Ռուսաստանի է այն, զի ընկա-
լաւ հանդիսիւ ՚ի Քերսոնես (*) զՔրիստոնէական
հաւատս, զոր ծանոց լինել թագաւորեալ լէ բո-
լոր Ռուսսիա: Պսակ այսր իշխանի՝ որ ՚ի մկրտուե
անուանեցաւ Վասիլի ընդ թագուհւոյն Յունաց
Լննայի ՚ի մտերիմ իմն հաղորդակցուի հաճ զՌուս-
սիա լէ Յունական Տէրուե, յորմէ գիտուիք և ար-
հեստք և ընդհանրապէս կրթուի սկսան մուտ առ-
նել ՚ի Ռուսաստան:

Ներքին խառ-
վումբներէ:
1015—1019.

Վլադիմիր բաժանեալ զՌուսսիա լէ միջ որդ-
ւոց իւրոց, մեռաւ ՚ի խորին ծերուե, ՚ի կառուցեալն

(*) Քերսոնես քաղաք այժմ ՚ի նահանգս Ղրիմու մերձ
՚ի Սեվաստապօլ:

իւր Десятиной Եկեղեցւոջ, և դասեցաւ յեկեղեցւոյն Ռուսաց 'ի համարս սբօք: Յետ վախճանի սբ յայտնեցան 'ի Ռուսաստան ներքին խռովարար պատերազմունք, Սվէտոպոլկ, որդի Եարոպոլկայ՝ որդեգրեալ 'ի Ալաիմիւրէ՝ կամեւով տիրել մեծիշխանական՝ Աթոռոյ Կիովու սպան զորդիս Ալադիմիրի, զԲորիս, զոր աղբն և զօրք կամէին նստուցանել 'ի մեծիշխանական Գահ, զԳլեբ՝ զիշխանն Մուրոմայ և զՍվէտոսլավ՝ զիշխանն Դրեվլանաց: Եղբայր սց Եարոսլավ իշխանն Նովգորոդայ հաւ զսուր ը դէմ Սվէտոպոլկայ՝ յաղծեաց նմա և սոփպեաց հեռանալ 'ի Ռուսաստանէ, և ինքն նստաւ յԱթոռ Մեծի իշխանի Կիովու:

'ի Ժամանակս այսց ներքին խռովուեց՝ Լեհք Եարոսլավէն 1019-1054. կորզեցին 'ի Ռուսսիոյ զբոլոր երկիրս՝ տիրակալելու 'ի Ալադիմիւրէ 'ի Չերմի (կարմիր) Ռուսսիա: (*) Եարոսլավ միացոյց զնս ը Ռուսաստանի. և բաց յայտնէ տիրեաց նա Լիվոնիոյ և երկրին Չուդայ. ուր հիմնեաց զքիւքն իւրեւլ, (այնէ՝ Տերպո). հաստատեաց զանդօրրուլ 'ի Ռուսսիա: Եարոսլավ ընդարձակեաց անդ զգիտուլիս, զարդարուլ և զքրիստոնէական հաւատ: Նա հրաւիրեաց 'ի Ռուսաստան զարս գիտնականս 'ի Յունաց, և շինեաց զուսումնարանս. շրջապատեաց զԿիով քարեայ պատուարօք. կառոյց զեկեղեցին սբ յի Սոփիայ Մետրոպոլտական, և զայլ բազում եկեղեցիս և զվանորայս. ինքնին անձամբ պարապէր 'ի Ժարգմանուլիս սբ գրոց 'ի Յունական լեզուէ 'ի Ռուս բարբառ, և փառաւորեցաւ անուամբ օրէնսդրի՝ 'ի լոյս ընծայել զԺողով օրինաց

(*) Եթմ նահանգք Վոլինսկի և Կամենեց-Պոդոլկի:

անուանել զայն իրաւունք Ռուսաց (Русская пра-
ва): Առ մահուամբ իւրով բաժանեաց զՌուսա-
տան ՚ի մասունս: Ըղձակերտ լեալ երջանկութեան
Ռուսաստանի, դուր յմերձ ՚ի մահ ՚ի մահիճս, խրա-
տեաց զորդիս կալ ՚ի խաղաղութեան և յանդո-
րութեան. մարմարոնեաց դադաղ, յորում եղեալ
էր մարմին այսր իշխանի, կանգնեալ է յեկեղեցւոջ
սըյն Սովիայ Աիովու և պահպանի յժամանակս մեր:

Ընդհանուր ծանօթութիւնք զվիճակէ Ռուսաստանի յայսմ շրջանի:

Յըլթացս այսր ժամանակի Առաւելորութիւն ՚ի
Ռուսաստան էր Միսպետական: Արիւնդուք հիմնել
զՄիսպետութիւն Ռուսաց՝ մուծին ՚ի նա զընդ-
հանուր օրէնս, զորս Եարոսլաւ ան. Ժաղովեաց, կա-
տարելագործեաց և ՚ի լոյս հաճ ուն ՚ի վերոյ ասա-
ցաւ, անուանեալ զայն իրաւունք Ռուսաց: Գլխա-
ւոր նպատակ այսոցիկ օրինաց էր՝ պահպանութիւն
անձանց և ընչից քաղաքացեաց ՚ի վերահաս վտան-
գից: Գործովք՝ որք վերաբերէին առ կրօն և բա-
րոյականութիւն, պարագէին անձինք եկեղեցականք,
ունելով ՚ի հրահանգութիւն ինքեանց յայսմ նուա-
զի զՍահմանադրութիւնս սըյն Հարց Յունաց և
զհոգևոր պարգադրութիւնս սըյն Ալադիմիրի: Գլուխն
եկեղեցական ուխտին էր Մետրապօլիտ, որոյ տեղի
բնակուի էր Աիով: Ռուսք այնր ժամանակի ունէին
զառւետուրս առաւելաւն ՚ի հարաւ ը Յունաստանի:
Նախկին զինուորական կրթութիւն Սլավենաւոյ

կատարելագործեալ էր 'ի Արեկառուսաց: Նկո-
րագրութիւն, Ճարտարապետութիւն և այլ գեղե-
ցիկ արհեստք փոխեցան առ նս 'ի Տէրութե Թոնայ:
Քրիստոնէական հաւատն լուսաւորեալ զՌուսս՝
կակղացոյց և զբարս նց:

ԱՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ:

Պի Մահուանէ Եարոսլավայ ան. Վլադիմիրովիչի մինչև
ցժամանակ ասպատակուե թաթարաց 'ի Ռուսաստան:
1054—1224=170.

Ետ մահու Եարոսլավայ ան. միաբանութիւն 'ի Իլէսլաւ:
մէջ որդւոյ խախտեցաւ ի փոյթ: Իգէսլաւ իշխան 1054—1077.
Վիտլայ՝ հալածեցաւ անտի յեղբարց իւրոյ 'ի Սվե-
տոսլավայ յիշխանէ Զերնիգովայ և 'ի Ասեվոլոդէ
յիշխանէն Պերէեսլավայ: Արջեցաւ սա ի Լեհաս-
տան և ի Գերմանիա և ապա նստաւ յԱթու-
Վիտլայ, և պատերազմեալ վս եղբօրն իւրոյ Ասե-
վոլոդի ի իշխանին թմուտարականի (*) Օլեղայ՝
որդւոյ Սվետոսլավայ, սպանաւ 'ի պատերազմին մերձ
'ի Զերնիգով: Սմա յաջորդեաց եղբայր նորա 1077—1093.
Ասեվոլոդէ, որոյ ժառանգ էր որդի նորա Իգէս- 1093—1113.
լաւ: Ժամանակ իշխանութեան երկոցունց սոցա
նշանաւոր է ներքին խռովութե պատերազմի, յո-

(*) Նահանգ թմուտարականի այժմ է Փանագորիա կղզին:



1476
1
3046 9869-57

Վլադիմիր
Մոնոմախ
1113—1125.

րոց վերայ յաւելան վիշտք 'ի սփռելոյ ժանտախտի
և յանդադար արշաւանաց Փոլովցեաց, որք էին
համասեռք փեչենեգաց: Հուսկ ապա 'ի Գաճ Կիւ-
վայ բազմեցաւ որդի (Վլադիմիր) Վսեվոլոդի
Վլադիմիր Մոնոմաքոս. որ հր իշխան քաջ և
միանգամայն հեզ և մարդասէր. անձնատուր մտե-
րիմ Ռուսաստանի սրտիւ և հոգեով: Սա երևելի
գտաւ յաղթութեք 'ի վերայ Փոլովցեաց, Չուդաց
և Լիվոնիացեաց: Ազնուականութի հոգեւոյ, բարութի
սրտի և դաստիարակեալ միտք տեսանին 'ի կտակա-
գրի, զոր աւանդեաց որդեաց իւրոց. ուր ազգէ նց
զմամ քրիստոնէական և զքաղաքական առաքինութիւնս:

Մստիսլաւ
1125—1132.

Վլադիմիրի Մոնոմաքոսի յաջորդեաց որդի նորա
Մստիսլաւ, որ 'ի ժամանակս իշխանութի իւրոց եցոյց
յինքեան զբոլմ տեսակս առաքինութեց հօրն իւրոց և
երևելի կացոյց զինքն յաղթութեք՝ զոր արար 'ի վե-
րայ Փոլովցեաց, Չուդաց և Լիվոնիացեաց:

Յետ մահուս Եթ ծագեցաւ խռովութիւն մեծ 'ի մէջ
սերնդոց Մոնոմաքոսի և Օլեղայ Սվետոսլավիչի
իշխանին Թմուտարականի, որոց հետեանք եղեն ը-
հանուր ներքին պատերազմունք. յորում ժամանա-
կի Մեծ իշխանութիւն Կիովայ տկարացաւ. իսկ իշխա-
նութիւն Սուզդալու կամ Վլադիմիրի առ գետովն
Վլեադմիր գտաւ զօրացեալ զինուորական սերազործու-

Գեորգի
1154—1157.

Թեամբ Գեորգեայն. (Դոլղորուկի) որդեաց Վլա-
դիմիրի Մոնոմաքոսի, և 'ի ժամանակս որդեաց Գե-
որգեայ՝ Անդրէի (Բոգոլիւկսկի) սկիզբն կալաւ ան-
ուանիւ Մեծ իշխանութիւնն:

Անդրէյ Բոգոլիւկսկի պահեաց զզինուորական փառս
հօրն իւր և հաւու յաղթութեք՝ զոր արար 'ի վերայ
Բուլղարաց առ գետով Առլդայի և Կամի. նա կարո-

ղացաւ ը բռամբ ածել զբժմ բաժանեալ իշխանութիւնս, որով առաւել ևս զօրացոյց զիւր մեծ իշխանութիւն Ալադիմիրի: Բայց ՚ի վերայ իշխանութեան Նովգորոդայ և Գալիցիոյ ոչ այնպէս տարածեցաւ իշխանութիւն նր:

Յաղթելով արտաքին թշնամեաց իւրոց՝ Անդրէյ ոչ կարաց պահպանել զինքն յանձնական (թշնամեաց) յիւրոց ազգականաց Կուչկովեանց: Սոքա սպանին զնա, և յայնժամ յետ բժմ տարաձայնութեանց ՚ի մասին ժառանգութեան Աթուոյ, ընտրեցաւ մեծ իշխան՝ եղբայր նր Ասելոլոդ. Գ. Գէորգեան: ՚ի Ասելոլոդ. Գ. Ժամանակս սր բզմբ ՚ի հիւսիսային իշխանաց (*) 1176—1212. խաղացին ըդէմ Փոլովեցւոց. բայց ՚ի պարտուել մատնեցան: ՚ի սմին ժամանակի իշխանուին Գալիցիոյ ևս առաւել զօրացաւ ՚ի բաժնէ իշխանուին Կիովայ, որ օր յօրէ տկարացեալ՝ հոսկ զկնի անկաւ հանդերձ գլխաւոր քաղաքաւ իւրով Կիովաւ ը իշխանութեամբ Լիտվանիացւոց իշխանին Գեդեմինայ ՚ի ժամանակս տիրապետութեան Թաթարաց ՚ի վերայ Ռուսաստանի յամի 4320: Ասելոլոդի Գ. յաջորդեաց որդի նորա Գէորգ ը. ՚ի ժամանակս սր 1212—1238. եղև ասպատակութիւն Թաթարաց ՚ի Ռուսաստան:



Ընդհանուր ծանօթութիւնք զվիճակէ Ռուսաստանի յայսմ շրջանի:

Այս բովանդակ շրջան նշանաւոր եղև գրեթէ ներքին խռովարար պատերազմօք, որք յոյժ նուաճե-

(*) Հիւսիսային իւրահանգ անուանիւր տարածութիւն Ռուսիոյ՝ ըստ գետոյն Ղեմնայի:

ցին զՌուսիա, յորմէ և անկան չլծով իշխա-
նութեան Թաթարաց: Գլխաւոր աղբիւր այսոցիկ
պատերազմաց էր բաժանումն Միապետական իշխա-
նութեան 'ի մէջ բաժմ մասնաւոր իշխանաց: Թէ-
պէտեւ Սկէտոսլաւ, Ալլադիմիր և Եարոսլաւ բա-
ժանեցին զՌուսաստան 'ի նահանգս և յանձնեցին
զայն կառավարութեան որդւոց իւրեանց. սակայն
գիտաւորութիւնն նց չէր բաժանումն Տէրութեան
'ի բաժմ տէրութիւն, այլ կամէին նք, զի որդիք հնազանդ
լիցին ինքեանց, իբրու տեարց իւրեանց և ծնողաց,
իսկ եղբարք երիցադոցն եղբօր, որ կոչիւր Մեծ իշխան:
Բայց և այնպէս հետեւում էր այսր բաժանման երեւե-
ցան վնասաբերք: Որդիք և սերունդք Եարոսլաւայ
նախանձեալ միմեանց ունէին զփոխադարձ թշնա-
մութիւն, և ամբն գրգռեալ 'ի փառամոլութիւն՝ զմտաւ-
ածէին ոչ զօրտէ հայրենեաց, այլ միայն զայնմանէ
թէ զխորդ կարասցեն ընդարձակել զիշխանութիւն
իւրեանց 'ի բաժնէ այլոց իշխանաց, և հասանիլ
գլխաւոր նպատակի փառամոլութիւն իւրեանց—Մեծ-
իշխանին Աթոռոյ. և մահաւանդ ժառանգութիւն Աթո-
ռոյն չէր դեռ ևս ճշտիւ սահմանեալ, մերթ եղբայր
զկնի եղբօր, և մերթ որդի զկնի հօր բազմէին 'ի
մեծիշխանական Աթոռ: Այս էր առիթն թշնա-
մանաց չմէջ սերնդոց Եարոսլաւայ. յորմէ ծագե-
ցաւ ատելութիւն Օլղովիչեանց առ ցեղն Մոնոմաքոսի:

Ատենական գործողութիւնք վաւերիւն և 'ի սմին
ժամանակի 'ի վերայ հիման Ռուսաց իրաւանց. փո-
փոխութիւն արարեալ ինչ յորէնս այն էր, զի իղկսլաւ
որդի Եարոսլաւայ եբարձ զմահապարտութիւնն, և
սահմանեաց պատժել զյանցաւորս ընդհանրապէս
առնլով 'ի նոցանէ զգումար դրամոց ըստ չափու-

յանքաւորութեան: Ի ժամանակէ անտի Անդրէի
 Բողոլիւպսկի մեծիշխանական զօրք ընկալան զան-
 ուանկոչութիւն Դվոր (պալատ) և որոց էինն Ի
 Թիւս նոյն Դվորեանին (պալատական): Առեւտուրն
 կատարիւր Ի հարաւային կողմն ընդ Յունաստանի,
 յարեւելս ը գետն Ալուքայ ը Բուլղարաց. յարե-
 մուտս ընդ Գերմանիոյ, իսկ Ի հիւսիս Ի ձեռն
 Նովգորոդայ և Պսկովայ ը քաղաքաց Անսայի (*):
 Գեղարուեստք ծաղկեցան Ի Ռուսիա և Ի սմին
 ժամանակի: Փորձառուի Ռուսաց բանաստեղծուէ
 այսր ժամանակի տեսանի Ի հասեալ ցժամանակս մեր
 շարագրուէ յերկոտասաներորդ դարէ, որէ (Слово о
 полку Игоревѣ.) բանք զգնդէն իգորայ, յորում
 նկարագրի արշաւանք իշխանաց Հիւսիսոյ ընդդէմ
 Փոլովկեցոց և առումն սոցա Ի գերութիւն միոյ
 յայոց իշխանաց: Ի սմին ժամանակի յայտնեցաւ
 առաջին Պատմագիր Ռուսաց կրօնաւորն վանաց
 Նիովայ սբն Նեստոր՝ ժամանակակից Մեծի իշխանին
 Նիովայ Սվէտոպոլկայ ան. Սա առաջին գտաւ յազգէ
 Ռուսաց՝ որ գրեաց զտարեգրութիւն Ռուսաց:

(*) Անսայք անուանէին քաղաքք Գերմանացոց, Համ-
 բուրգ, Լիւբեգ, Բրեմին և այլք բազուք, որք միաւորեալ
 անուանէին Անսայք. Ի Թիւս անդամոց նոցա էին և քա-
 ղաքք Ռուսաց Նովգորոտ և Պսկով:

ԱՐՁԱՆ ԵՐՐՈՐԴ:

Յասպատակուէ թաթարաց 'ի Ռուսաստան ցբազմին 'ի մեծիշխանական Աթոռ Մոսկովայ Յովհաննու ֆ. Վ. ակելիչի և ցազատուծիւն Ռուսաստանի 'ի Տիրապետու-
նէ թաթարաց:

1224—1462=258.

1224.

Յերկոտասաներորդ դարու յետ ծննդեան Քսի
թաթարք կամ Մոզուք ք բազում ժամանակս
ստպտոակ սիւնեալք 'ի հիւսիս յաշխարհէ անտի
Սինէացւոց 'ի Մոզու, 'ի Մանսուրա և 'ի Դաւ-
րիա, երևեցան աշխարհակալք: Առաջնորդ նց թե-
մուչին Չինկիսխան կոչեցեալ (մեծ խան) յաւարի
առնոյր զաշխարհն Սինէացւոց և զայլ ասիական
թազաւորութիւնս: Զօրագլուխք նք հասին մինչև
ցծովն Ազով և սկսան սպառնալ Ռուսաստանի:
Բազումք յիշխանաց Ռուսաց՝ յորոց միջի գլխա-
ւորագոյնք էին, Մստիսլավ Կիւիայ, Մստիսլավ
Գալիցկի և Մստիսլավ Չերնիգովայ ժողովեցին
զզօրս և 'ի վերայ հասին թաթարաց առ դետովն
Կալկայի (*): Անտանօր տուաւ պատերազմի, և զօրք
Ռուսաց յաղթեցան: Գլխաւոր պատճառ այոր
վատաբազդութեան էր անհամաձայնութիւն ծա-

(*) Գետն Կալկայ պիտի է Կալէց կամ Կալմիուս. որ
անկանի 'ի ծովն Ազովու մերձ 'ի քաղաքն Մարիուպոլիս:

գեաւ 'ի մէջ իշխանաց Ռուսաց. Թաթարք զհետ
պնդեալ մնացորդաց խորտակեալ զօրաց Ռուսաց՝
հասին մինչև ցՍուլա:

Յետ մահու շինկիսխանի, որդի նր օկտայ հրա-
մայեաց եղբօրորդւոյ իւրում Բադի խանին խա-
ղալ բնմ զօրօք 'ի Ռուսաստան: Բադի խան ան-
կաւ 'ի չու 'ի Կասպից ծովէ անտի 'ի վեր ըստ ըն-
թացից Աօլգայ գետոյն. ապա դիմեաց 'ի հիւսիսայ-
ինն արեւմուտ, և աւար հառ զՐիզան, զՄոսկով,
զԳոլոմայ, զԱլադիմիր և զայլ քաղաքս: Մեծ իշխանն
Գէորգ ք. եւ մարտիւ լռէմ նր առ գետովն Սիտի,
'ի պարտութիւն մատնեցաւ և սպանաւ: Բադի խան
աւերեաց զՏորթոկ, և սփռեաց զաւեր իւր գրեթէ
մինչև ցՆովգորոդ և մերձեցաւ յայժման նահանգս
Կալուգայի. ուր քաղաքն Կողելսկ եցոյց զընդդի-
մամարտութիւն քաջ. Բադի կործանեաց և զայն,
բայց ինքն ևս կորոյս զբազումս յիւրոց լաւագոյն զօ-
րականաց. ուստի յանձկուէ սրտին անուանեաց զայն
քաղաք չար: Անտի Բադի յառաջ խաղացեալ
գնաց յայժման նահանգս Աստրախանայ, և անտ
հաստատեաց զթագաւորութիւն Թաթարաց անուան-
եալ զայն Կապչակեան Արդայ:

1258.

Յետ մահու Գէորգեայ ք. 'ի մեծ իշխանական Գահ
Ալադիմիրի նստաւ եղբայր նր Եարոսլավ ք: 'ի
ամին ժամանակի Բադի կրկին երևեցաւ 'ի Ռուսա-
ստան և ուղղեաց զիւր գունդ բազմութիւն 'ի Կիով:
Բնակիչք դր քաջութ ընդդիմացան. բայց ամ ճիգն
նց մնաց լ վայր. Բադի հառ զԿիով, կողոպտեաց,
կործանեաց և հիմնայատակ արար: Անտի լարձա-
կեաց զբռնակալութիւն իւր և զասպատակութիւն
մինչև ցՍիւլղիա և ցլերինս Կարպատեան: Հուսկ

ապա ծանրացեալ գերեօք և աւարօք և եղեալ
հարկս 'ի վերայ ամենայն Ռուսաց՝ նուաճելոց ընդ
բռամբ՝ հանց ընդ Ալուգայ :

'ի սմին ժամանակի Ալէտք ընդ առաջնորդու-
թեամբ զօրագլխի իւրեանց Բերգերի և օժանդա-
կեալք 'ի Փիւնացւոց և 'ի Լիտվանիացւոց՝ յար-
ձակեցան 'ի Նահանգն Նովգորոդայ . իսկ իշխանն
Նովգորոդայ Աղէքսանդր, որդի Մեծի Իշխանին
Եարոսլավայ յաղթական գտաւ 'ի վերայ նոցա առ
Նելայ գետով : Սովաւ 'ի բաց մերժեաց զվտան-
գըն՝ որ սպառնայր Նովգորոդայ . և յաղագս այս-
պիսի սխրագործութե անուանեցաւ Նելսկի : Թա-
թարք նուաճեալ զՌուսաստան ընդ լծով իշխա-
նութե իւրեանց, արարին զիշխանս Ռուսաց և ըզ-
համայն Ռուսս հարկատուս : Առանց հաւանութե
և հաստատութե խանաց, ոչ ոք յիշխանաց Ռու-
սաց կարէր ելանել 'ի Գահ մեծիշխանական :

Իշխանք Ռուսաց պարտաւորեալ էին գնալ 'ի
բանակն առ խանս Թաթարաց, առ 'ի յայտնել
նոցա զհնազանդութիւն իւրեանց և յանձն առնել
զժողովեալ 'ի Ռուսաց զհարկս : Ինքն Աղէքսանդր
Նելսկի, որ յետ վախճանի հօր իւրոյ եղև մեծ
իշխան Ալադիմիրի, պարտաւորեցաւ արկանել զան-
ձըն իւր այսպիսի անարգանսոյ : (*) Նոքա չարաչար
վարէին ընդ Ռուսս, կողոպտէին, աւերէին զքա-
ղաքս և զգիւղս և հայրենիք մեր գտանէր 'ի խղճալի
յոյժ վիճակի : Բազումք յիշխանաց Ռուսաց Մի-

(*) Աղէքսանդր Նելսկի 'ի դառնալն իւր յԱրդայէն
վախճանեցաւ, ընկալեալ առ մահուամբ զկարգ կրօնաւո-
րի . մարմին այսր Իշխանի, զոր եկեղեցին Ռուսաց դասեաց
'ի Թիւ սրբոց, Թաղեցաւ 'ի Ալադիմիր :

քայէլ Չերնիգովայ, Միքայէլ Տվերի և այլք տան-
 ջեցան 'ի Թաթարաց յԱրդայ : Եւ բաց յայս-
 մանէ Լիտվանիայիք և Լեհք անդադար յարձա-
 կէին 'ի Ռուսաստան . 'ի մեծագոյն վատաբաղդու-
 թիւն բաժանեալ իշխանք պարապէին հանապազ
 'ի կազ և 'ի կռիւ ընդ իրեարս : Քաջայայտ երևի,
 զի ամենայն առիթ այսոցիկ նեղօակրութեց՝ էր բա-
 ժանուամբ Տէրութի 'ի մասունս 'ի մէջ իշխանաց .
 ուստի հարկաւոր էր բաւնալ զայն անկարգութի
 և զըզմանդակ Տէրութի միաւորեալ՝ յանձնել մի-
 ում գլխաւորագոյն իշխանի . որով հնարիւք մարթ-
 էր նոցա ազատել զՌուսաստան 'ի նեղութեց՝ որ
 տառապեցուցանէր : Չառաջին բարեյաջող փորձ
 յայսմ գերագոյն և ամենահարկաւոր գործառնու-
 թեանո, եցոյց Յովհաննէս Դանիլովիչ (Կալիտա) 1328—1340.
 Թոռն Աղէքսանդրի Նեվսկոյ : Այս իշխան ունե-
 լով ինքեան զխորհրդական յարբունի գործս իւր՝
 զսուրբն Պետրոս Մետրոպօլիտն Մոսկովայ, գուն
 գործեաց հաճոյ գտանիլ յաչս խանաց, էած ընդ
 իւրով իշխանութք զբաղումս 'ի մասնաւոր իշխա-
 նաց . յայսմ ժամանակէ հետէ սկսաւ իշխանութին
 Մոսկովայ վեհ հանդիսանալ քան զԱլադիմիրին,
 և անուանիլ մեծ իշխանութի, որ սահմանեցաւ լի-
 նել յայնմհետէ ժառանգական գլխաւորապէս 'ի
 տան իշխանաց Մոսկովայ : Որդի Յովհաննու Դա-
 նիլովիչի՝ Սիմէօն զհետ գնաց շաւղաց հօրն իւրոյ : 1340—1353.
 Բաժանեալ իշխանք անուանեցին զնա հպարտ . ըստ
 որում նորա՝ միտ եղեալ հաստատութե 'ի Ռու-
 սաստան Միապետութե, որ հարկաւորագոյն էր 'ի
 բարեբաղդութի, սկսաւ անուանիլ Մեծ իշխան ա-
 մենայն Ռուսիոյ :

Յետ մահու Սիմէոնի զմեծ իշխանութիւն 'ի Ռու-
 1355—1360. սաստան կալաւ եղբայր նորա Յովհաննէս ք. Իվանո-
 1360—1362. վիչ . զկնի սորա Դեմետր Կոստանդինովիչ իշխանն
 Նովգորոդայ : Հոռակ ապա 'ի մեծիշխանական ԳաՏ
 բազմեցաւ իշխանն Դեմետր ք. Իվանովիչ , թոռն
 Յովհաննու Դանիլովիչի մականուանելոյ (Վալիտա) :
 Սա հանգոյն հաւու իւր աշխատ եղև հաստատել 'ի
 Ռուսաստան զՄիապետական Կառավարութիւն , որով
 և ազատել զնա 'ի բռնակալութենէ թաթարաց :
 Բայց առ ժամանակօքս , յորում զբաղեալ էր նա
 այսուիկ սղգաօգուտ գործով և միաւորէր զբաժա-
 նեալ մասնաւոր իշխանութիւն ընդ իւրոյ իշխանու-
 թեան , մեծագոյն վտանգ արտաքին սպառնայր Ռու-
 սաստանի :

Զօրագլուխն խանի Մամայ յարձակեցաւ 'ի Ռու-
 սաստան , Դեմետր վաղ ընդ փոյթ ժողովեալ զգօրս ,
 և ընկալեալ զօրհնութիւն հիմնադրի վանաց Սրբոյ
 Երրորդութիւն Սրբոյն Սարգսի , գնաց ընդ առաջ
 նորա . յաղթեաց նմա առ գետովն Դոնի 'ի դաշտն
 Կուլիկով (*), և յաղագս այօր քաջութիւն ժառան-
 գեաց զմականունս Դոնսկի : Արդ՝ այս յաղթութիւն
 ոչ իսպառ ազատեաց զՌուսաստան 'ի լծոյ իշխա-
 նութիւն թաթարաց : Ո՛չ անագան թաքտամիշ բա-
 զում զօրօք եմուտ 'ի Ռուսաստան , տիրեաց Մոս-
 կովայ , արար անդ զարիւնհեղութիւն սոսկալի , և բո-
 լորովիմբ սւերեաց և յամայի կացոյց զայն և զայլ
 քաղաքս : 'ի ժամանակի իշխանութիւն որդւոյ Դեմետ-
 րեայ Դոնսկոյի՝ Աստիլ ք. պատահեցան երկու գըլ-
 խաւոր ասպատակութիւնք թաթարաց 'ի Ռուսաս-

(*) Յայժմեան նահանգս Դուլի 'ի գաւառն Եպիփանու :

տան՝ առաջինն Թաթերլանի, իսկ երկրորդն Եդի- 1389—1425.
 դեյի: Մոսկով հչ այնքան ՚ի նեղ անկաւ ՚ի հա-
 րուածոց այսոցիկ բռնակալաց, որպէս միւս քաղա-
 քքք, և մանաւանդ ՚ի հարաւային կողմունո զփորձ
 աւին համօրէն զօրութիւն ամեհի կատաղութիւն նոցա:
 Իշխանութիւն Ասիի ք. որդւոյ Ասիի ք. նշանա-
 ւոր է բազում վշտակրութք. յաւուրս սորա պա-
 տահեցաւ ժանտախտ, յարձակումն Լիտւանիաց-
 ւոց, ասպատակութիւն Թաթարաց և ներքին խռ-
 վութիւնք. ՚ի սմին ժամանակի զօրացաւ յարեւելս նոր
 թագաւորութիւն Ղաղանու: Հրամանատար նորա
 Ուլի-Ահմեթ եկն ՚ի Ռուսաստան և զբազում քա-
 ղաքս դարձոց ՚ի մոխիր: ՚ի միջի այս տառապանաց
 Ասիի ք. եզիտ զանհաշտ թշնամիս ՚ի մերձաւոր
 ազգականս իւր: Մին ՚ի նոցանէ Դեմետր Եմեակ
 կոչեցեալ՝ յարուցեալ ՚ի վերայ նորա զրկեաց զնա
 յաչաց. ՚ի պատճառս որոյ այս իշխան ՚ի պատմու-
 թեան մերում յայտնի է ընդ անուամբ Տեմի
 (մթին): Սա մեռաւ ծանրաբեռնեալ մարմնաւոր
 ցաւօք և հոգեւոր վշտօք զիւրոց և զհայրենեաց վա-
 տաբաղըութէն, թողեալ զմեծ իշխանութիւն որդւոյ
 իւրում Յովհաննու ք. զոյգ ընդ անուան դք Ռու-
 սաստան միաւորէ զյիշատակ ազատութիւն իւր ՚ի լծոյ
 իշխանութիւն Թաթարաց:

Ընդհանուր ծանօթութիւնք զվիճակի Ռուսաստանի յայսմ շրջանի:

Անտարակոյս իմն է այն, թէ Թաթարք զբաղ-
 մատեօակ վնաս հասուցին Ռուսսիոյ. բայց և այն-

պէս զոյգ ընդ նմին ոչ նկատելով յայն արարին և
 զշահեկանութի մեծ . ըստ որում թաթարք պաշտ-
 պանելով իշխանաց Մոսկովայ, որք հաճոյ գտանէ-
 ին յաջո նոցա տային զհամարձակութի վարելոյ բո-
 վանդակ իշխանութի Միապետի ընդ մասնաւոր իշ-
 խանս : Բազումք յայսց իշխանաց՝ տեսեալ զզարդա-
 ցեալ զօրութի իշխանաց Մոսկովայ, կամովին հնա-
 ղանդէին նոցա, և համարէին զինքեանս հպատակ
 նոցա : Ի վերայ այսր ամենայնի իշխանք Մոսկովայ՝
 Ժողովելով զհարկս ի մասնաւոր իշխանաց սահմա-
 նեալ վասն խանաց, գտանէին զառիթ սեպհակա-
 նելոյ անձանց զգանձս : Հարստացեալ այսպիսի ե-
 ղանակաւ՝ գնէին ի բազում մասնաւոր իշխանաց
 զկալուածս նոցա և միացուցանէին զայն ընդ Տե-
 րութի իւրեանց : Այսու օրինակաւ բացաւ ի Ռու-
 սաստան կրկին ճանապարհ առ իշխանութի Միա-
 պետական, որում հարկ էր զարթուցանել զազա-
 տութիւն Ռուսաց և զինքնագոյութի : Թաթարք
 տիրեալ Ռուսաստանի Ժողովէին միայն զհարկս . իսկ
 ի ներքին կառավարութի նր ոչ ձեռնամուխ լինէ-
 ին : Ուստի մեծ և մասնաւոր իշխանք ի տէրութիս
 իւրեանց վարէին յատենական գործս ըստ դիտողու-
 թեան իւրեանց հանելով զհրամանաթուղթս կամ
 զհրավարտակո, որովք դատաւորք ի վճռահատութիս
 իրողութեց պարտաւոր էին վարել : Չգոյին դեռ ևս
 որոշեալ զօրք . ի լինել պատերազմի Ժողովէին ըզ-
 զօրս, և ի վերջաւորին արձակէին զնոսս : Այս
 հանգամանք թերեւ եղև պատճառ յառաջագիմու-
 թեան զինու թաթարաց ի Ռուսաստան : Յաւուրս
 իշխանութի Դեմետրեայ Դոնսկոյի հրացանք գտեալ
 յարեմտեան Եւրոպայ, առ մեզ ևս եղէն ծանօթք :

Ըն այս շրջան վերաբերի ծագումն 'ի Ռուսաստան
խազախաց՝ որք զառաջինն երևեցան յայժմեան Մա-
լոուսիա և առ դրունս Դնեպրովու, և ապա յետ
Ժամանակաց բնակեցան յիշխանութի Բեզանու 'ի
տեղիս մերձ դետոցն Դոնի, Առլապի և Ուրալի և
առ ավին Ալով ծովու: Չ առևտուրս Ռուսք այսր
Ժամանակի առնէին ընդ արևելեայս 'ի ձեռն Ղա-
զանու և Արդայի, ընդ Կոստանդնուպոլիս 'ի ձեռն
Ազովայ: Իսկ ընդ հիւսիսային և արևմտեան Եւ-
րոպայ 'ի ձեռն Նովգորոդայ: 'ի վերջ այսր շրջա-
նի բնակիչք Նովգորոդայ և Պսկովու հատանէին
զարծաթեայ դրամս: Հետք ինչ կրթութի թէպէտ
և տկարագոյն երևեցան և 'ի սմին Ժամանակի 'ի
Ռուսաստան: 'ի Յունաստանէ բերէին զպէսպէս
տեսակս մատենից և ձեռագրաց: Գլխաւոր գերա-
պանժ յատկութի Ռուսաց այսր Ժամանակի էր ան-
դրդուելի հնազանդութի առ հաւատն: Գլուխք
եկեղեցականք (Մետրոպոլիտք) 'ի սկզբան բնակէին
'ի Կիով: 'ի 1299 ամէ 'ի Ալադիմիր: և 'ի Ժա-
մանակէ անտի Մետրոպոլիտին Պետրոսի 'ի Մոսկով:

ՇՐՋԱՆ ՉՈՐՐՈՐԴ:

Դ Յովհաննէ ք. Վասիլեվիչէ ցրադմիւն 'ի Պազ աճնայն
Ռուսաց Տան Բոմանովայ:

1462—1613=151.

Ընդ երկար Ժամանակ Ռուսաստան մտաց ընդ
իշխանութի Թաթարաց և թուէր՝ զի անկախութի
նորա իսպառ կորեալ: Հոսկ զինի յայտնեցաւ 'ի

նմա Միապետ, որում Աստուած նախասահմանեալ
 էր զփառս ազատելոյ զՌուսաստան յիշխանութե
 թաթարաց, զարթուցանել 'ի նմա զառաջին քա-
 ջութի նորա, և պատրաստել ունելոյ զգերագոյն
 տեղի 'ի մէջ Տէրութեց Եւրոպայ: Այս միապետ
 էր որդի Ասալի Տեմիի Կոչեցելոյ Յովհաննէս Դ.
 առաջին գլխաւոր սխրագործութի նորա էր՝ նուա-
 1462—1505. ճելն զՂազան և արկանելն ընդ պետութիւն իշխա-
 նաց Մոսկովայ: Ոչ անագան 'ի ներքս իսկ Ռու-
 սաստանի բացաւ Յովհաննու Ճանապարհ փառաց:
 Բնակիչք Նովգորոդայ ըստ թելադրելոյ այրի կնո-
 ջըն իսահակայ Բուլեցկեոյ Մարթայի՝ չկամեցան
 հնազանդիլ Յովհաննու, և վճռեցին անձնատուր
 լինել պաշտպանութե թագաւորին Լեհաց Կալի-
 միրի: Յովհաննէս հառ զզէն ընդդէմ նոցա, յաղ-
 թեաց նոցա, և հաստատեաց զՄիապետական իշ-
 խանութի: Հետեանք այսր գործոյ եղև, զի բա-
 զումք 'ի մասնաւոր իշխանաց ստիպեցան հնազան-
 դիլ Յովհաննու, և այլք կամովին ծանեան զիշխա-
 նութի նորա 'ի վերայ իւրեանց: 'ի սմին ժամանա-
 կի խան թաթարաց Ահմատ պահանջէր 'ի Յով-
 հաննէս զհարկս, որ զլացաւ տալ նմա զայն: Ահ-
 մատ վառեցաւ 'ի վրէժինդրութի, և յարձակե-
 ցաւ 'ի Ռուսաստան: Յովհաննէս գնաց ընդ առաջ
 նորա և յղեաց զմասն ինչ 'ի զօրաց իւրոց յԱր-
 դայ իսկ: Իմացեալ զայսմանէ Ահմատ դարձաւ 'ի
 փախուստ: Յայսմ ժամանակէ տիրապետութիւն
 թաթարաց 'ի վերայ Ռուսաստանի վախճան հառ:
 Յովհաննէս Դ. եղև իսկական հիմադիր մեծութե և
 փառաւորութե Ռուսաստանի. ընդարձակեաց զՏէ-
 րութի իւր 'ի հնազանդութիւն ածելով զհամօրէն

նահանգս Նովգորոդայ, Պերմի, Աւետկայի և երկ-
 րին Իւգորայ, իսպառ գրեթէ եբարձ ՚ի Ռուսաս-
 տան զմասնաւոր իշխանութիւն և հաստատեաց ըզ-
 կարգ և զանդորրութի յիւրում Տէրութեան : ՚ի
 Ժամանակէ յայտմանէ Եկեղաւ անուանիլ տէր, մեծ
 իշխան և ինքնակալ ամենայն Ռուսաց . ՚ի պատ-
 ճառս ամուսնանալոյ իւր ընդ Դշխոյին Սովիայ
 դստեր Թովմայի Փալէվոլոյի, ընկալաւ զերկգլխի
 արծուէնշանն : Այս ամուսնութիւն հիշան զՌուսաս-
 տան ՚ի մեայլ անծանօթութիւն, յորում անկեալ
 էր ՚ի տիրապետութիւն Թաթարաց, և երեւոյց ա-
 ըւմտեան Եւրոպիոյ : ՚ի Մոսկով եկին Դեսպանք
 ՚ի Հռովմայ . Կայսրն Մաքսիմիլիանոս, Սուլթանք
 Տաճկաց, Խանք Թաթարաց, Հասարակապետութիւն
 Ահնեալոյ և Թագաւորն Մաճառաց Մատթէոս
 Կորվինոս խնդրէին զկապ բարկամութիւն ընդ Ռու-
 սաստանի : Իսկ Խան Ղըիմու Մանգլի-Հիրէյ էր
 անփոփոխ մտերիմ նորա : Մոսկով պայծառացաւ
 շինուածովք ճարտարապետութեան, որ զայնու Ժա-
 մանակաւ ծաղկեալ էր յիտալիա : Թովհաննու Դ. 1505—1534.
 Եաջորդեաց որդի նորա Ասիլ Դ. հաստատեալ ըստ
 նմանութեան հօր իւր ՚ի Ռուսաստան զՄիապետու-
 թիւն . փացոյց ընդ Տէրութիւն իւրոյ զՊսկով, ըզ-
 Սմոլէնսկ, զԲելզան և զՀիւսիսային նահանգս : Սու-
 վաւ վերջացան ՚ի Ռուսաստան մասնաւոր իշխանու-
 թիւնք : Պատերազմ Ասիլ ընդ Լիտվանիացւոյ
 և Ղազանու փառաւորեցին զզէն նորա : Ղազան
 բազմիցս յարեաւ ընդդէմ Ռուսաստանի, և նուա-
 ճումն նր օչ սակաւ պատճառ եղև արեանհեղութիւն :
 Աւ ՚ի նեղ արկանել զՂազան և ծաղկեցուցա-
 նել զվաճառականութիւնն ներքին Ռուսաստանի

1542.

Ասիւ կարճեաց զհաղորդակցութիւն վաճառականաց Ռուսաց ընդ թագաւորութիւն Ղազանու, և որոշեաց զգլխաւոր տեղի վաճառաշահութեան նոցա յարևելս զքաղաքն Մակարեւ ևս Առլդայ գետով: Այս Տօնաւաճառ Մակարիոյ (այժմ՝ Նիժնիորոգայ) երևելի եղև յոյժ յընթացս ժամանակաց:

Եւտ մահու Ասպի դ. հրատարակեցաւ տիրապետ Ռուսաց մանկահասակ որդի նր Եովհաննէս դ. Ասիւելիւն ընդ հոգաբարձութիւն մօրն իւրոյ Հեղինայ և խորհրդարանին. Հեղինէ ոչ անագան վախճանեցաւ, և յայնժամ Շոյսկի մականուանեալ իշխանք սեպհականեալ ՚ի խորհրդարանի զնախագահութիւն սկսան բռնակալել ՚ի վերայ ամենեցուն: Յանկալով ածել ընդ իշխանութիւն իւրեանց զՏէրութիւն, գուն գործէին յանկուցանել յինքեանս զՄիապետն պատանի, կատարելով զամենայն բաղձանս նորա. և այսպէս ընտելացուցին զնա ընդ ամենայն մոլութիւն. յորմէ յառաջ եկն, զի Եովհաննէս հասեալ յարբունս հասակի՝ երևեցաւ ՚ի գահն այր մօլի և խիստ: Մինչ զի և պսակ նորա ընդ Անաստասեայ Բոմանովայ. որ էր ՚ի տոհմէ երևելի տան Զաքարեանց, զարդարեալ ամենայն բարեմասնութիւն հեզութեան և համայն առաքինութիւն ոչ շիջոց զեռանդն կրից նորա: Պատահեալն ՚ի Մոսկով զարհուրելի հրդեհ, որ զքաղաքն ողջոյն դարձոց ՚ի մոխիր, սաստիկս ներգործեաց ՚ի սիրտ նորա: Տեսեալ նորա յայնմ զպատուհաս Աստուծոյ՝ բոլորովիմբ փոխեաց զքնաւորութիւն իւր, և յայսմ ժամանակէ սկսանի շրջան զնուորական նորին փառաց, որ էր գործ բարձրագոյն հանճարոյ և առաքինութիւն նորա: Սկսաւ աշխատ լինել ՚ի հաստատել ՚ի Տէրութիւն իւրում ըլ-

Ճիշտ արդարութիւն, և յայս նպատակ ՚ի լոյս հաճ
 զիրաւաբանութիւն (Судебникъ) կամ զբովանդա-
 կութիւն օրինաց այնր ժամանակի, հաստատեաց զու-
 սուսնարանս, հրաւիրեաց ՚ի Ռուսաստան յայլ և
 այլ աշխարհաց զարս գիտնականս և զճարտարա-
 պետս, և գուն գործէր ընդարձակել զվաճառակա-
 նութիւն Ռուսաց : Ոչ անադան հնչիւն զինու եհատ
 զսնխուլ զբաղմունս նորա : Ղազան կրկին վրդո-
 վեցաւ : Յովհաննէս ժողովեալ զգօրս, մերձեցաւ
 առ Ղազան և սկիզբն արար պաշարման նորա : Այս
 պաշարութեն վախճան հառ առմամբ այնր քաղաքի
 և միաւորութիւն բովանդակ թագաւորութե Ղազա-
 նու ընդ Ռուսաստանի : Ո՛չ յետ բաղմաց ինչ ա-
 ւուրց և միւս թագաւորութիւն թաթարաց Ասորա-
 խանայ հնազանդեցաւ սրոյ Յովհաննու : Այս նոր
 աշխարհակալութիւն ոչ միայն բարձրացոյց զվառս
 Յովհաննու, այլ և յապահովի կացոյց զՌուսաս-
 տան ՚ի հարաւոյ, և եբաց նմա զնոր ճանապարհ
 վաճառաշահութե ընդ արեւելեայս : ՚ի սմին ժամա-
 նակի Ռուսաստան եմուտ յառեւտրական հաղորդակ-
 ցութիւն ընդ Անգղիոյ : Յայդպիսեաց միջի զրգու-
 ցաւ պատերազմ ընդ մէջ Ռուսաստանի և Շվե-
 տիոյ վասն Լիվոնիոյ : Յայնմ ժամանակի, յորում
 գէն Յովհաննու ՚ի վայր կործանէր զընկերութիւն
 Ասպետայն Լիոնիոյ Անաստասիա վախճանեցաւ,
 և տարաւ ընդ իւր ՚ի գերեզման զերջանկութիւն
 Ռուսաստանի : Յովհաննէս իբրու թէ ազատեալ
 ՚ի բռնութե՛ զոր առաքինութիւն կնոջ նր եղեալ
 էին ՚ի վերայ նորա, մատնեաց զանձն իւր հոսանայ
 կրից : Յայսմ հետէ երեւի նա իրաք, որով անուամբ
 մնաց և ՚ի Պատմութե : Այս միապետ մեռաւ ՚ի

1552

1553.

54 ամեայ հասակի կենաց իւրոց : Սա առաջինն յիշ-
 խանաց Ռուսաց օկիզքն կալաւ անուանիլ Թագա-
 ւոր : 'ի վերջ Թագաւորութեան սորա պատահեցաւ
 զերազանց իմն վասն Ռուսաստանի անցք : Երմակ
 որ ընդ երկար ժամանակ սլարապէր յասպատակու-
 թիւնս, 'ի մտի եղ ջնջել զյանցանս իւր գործով
 ճշգրիտ փառաց . հառ ետ 'ի ձեռս Յովհաննու ըղ-
 տարածութիւն այժմեան ասիական Ռուսաստանի (Սի-
 բերիոյ) 'ի լերանցն Ուրալու ցգետն իրտիշ : Ֆէո-
 դոր իվանովիչ, որդի Յովհաննու դ. նստաւ յետ
 1584—1598. մահու հօր իւր 'ի Գահ Ռուսաց : 'ի թիւս ան-
 դամոց խորհրդարանին այսր Թագաւորի էր Բորիս
 Ֆէոդորովիչ Գորդունով յերևելի սերնդոց, հան-
 ճարեղ, և մերձաւոր ազգական Թագաւորին Ֆէո-
 դորի իվանովիչի : (*) Այս Թագաւոր չունէր զզա-
 ւապուս, և ողջութիւն նորա հիւանդոտ գուշակէր
 զերազահաս վախճան նորա : Սա ունէր զեղբայր մի
 զեղբահասակ, զարքայորդին Դեմետր իվանովիչ : Յայս
 հանգամանս Գորդունով հիմնեաց զխորհուրդ փա-
 ռաւորութիւն իւր : Եղ 'ի մտի յետ մահու Թագա-
 ւորին Ֆէոդորի տիրել Աթառոյն Ռուսաստանի .
 և առ 'ի հասանել այսմ նպատակի ձեռներէց եղև
 յեղեռնագործութիւն . ըստ ուսուցանելոյ նորա՝ ար-
 քայորդին Դեմետր սպանաւ յՈւղիւն : Մահուամբ
 15 Մայիս 1591. Ֆէոդորի իվանովիչի հատաւ ցեղն Րիւրիկայ՝ Թա-
 գաւորեալ 'ի Ռուսաստան զամս 736 : Աստ արժան
 է նկատել, զի յաւուրս Թագաւորութեան Ֆէոդորի
 սահմանեցաւ 'ի Ռուսաստան յեկեղեցական դասա-

(*) Կին Թագաւորին Ֆէոդորի իրինա էր քոյր Բորիս
 Ֆէոդորովիչի Գորդունովայ :

կարգութե՛ր Պատիարգութի՛ն : Պատահեալն յայնմ
 Ժամանակի ՚ի Մոսկով Պատրիարքն Կոստանդնու-
 պօլսոյ Երեմիա բարձրացոյց ՚ի կարգ Պատրիարգի
 համայն Ռուսաստանի զԼ՛ւրբեպիսկոպոսն Բէղանու
 զՅովբ : Յետ վախճանի Թադաւորին Ֆետդորի Ի-
 վանովիչի, կին նորա Իրինա կամովին առանձնացաւ
 ՚ի վանս . յայնժամ Թադաւոր Ռուսաց հրատարա-
 կեցաւ Գողգունով : Այրս այս ջանիւք իւրովք առ
 բարին Ռուսաստանի ընծայեաց զանձն իւր արժա-
 նաւոր Լ՛թողոյ : Սա քաջալերեաց զհողագործութիւն
 և զվաճառականութիւն, շինեաց զուսումնարանս, ճիշտ
 պահպանեաց զարդարութիւն, կարգաւորեաց զգօրս,
 գիտաց պահպանել զխաղաղութիւն և զբարեկամութիւն
 ընդ այլոց Տէրութեց և ՚ի Ժամանակս սովու եցոյց
 զայնպիսի մեծամեծ հոգողութիւն վասն հպատակաց
 իւրոց, մինչ զի հնա՛ր էր ընծայել նմա զանուն հօր
 հայրենեաց, եթէ չէր նորա հասեալ Լ՛թողոյ ճա-
 նապարհաւ եղեռնագործութե՛ր : Լ՛մենեքեան գովա-
 բանէին զԳողգունով բաց ՚ի սեպհական խղճէ իւր-
 մէ : Սուրբ անմեղ արիւն արքայորդւոյն Դեմետրեայ
 ծանրաբեռնէր զհոգի նորա : Գոյլով անմաքուր ՚ի
 խղճմտանս, սկսաւ կասկածիլ զամենեցունց, ուրք
 զիւրեն հին, և դարձոյց զիւր բարկութիւն ՚ի բա-
 զում երեւելի տունս, և մանաւանդ ՚ի տուն Բոմա-
 նովեանց, որ ունէր ըստ կապոյ ազգականութեան
 ընդ Տանն Բիւրիկայ զմերձաւորացոյն իրաւունս ՚ի
 Դահն Ռուսաց : Բազումք յականաւոր արանց կրե-
 ցին զխիստ և զանիրաւ պատիժ : Ֆետդոր Նիկիտիչ
 Բոմանով մոծաւ ՚ի կարգ կրօնաւորի փոխեալ զա-
 նունն ՚ի ՖիւլարէԺ . զկին նորա Քսենիա Իվանով-
 նայ նոյնպէս ստիպեցին մտանել ՚ի կարգ առանձ-

նախան ապաշխարողաց ընդ անուամբ Մարթայի •
 զվեցամեայ որդի նոցա զՄիքայէլ, և զայլ Րոմա-
 նովեանս և զապգականս նոցա առաքեցին 'ի զանա-
 զան հեռաւոր վայրս • ամենեքեան պաշարեալ էին
 արհաւրօք, և ոչ ոք բանայր զըերան : Գողոունով
 յապահովի համարէր զանձն իւր՝ այլ յանկարծ իմն
 երևեցաւ վրէժխնդիր ռմի վասն անիրաւութեց նորա •
 տքեղայ մի Գրիգոր Օտրեպիեւ, որ բնակէր 'ի
 Մոսկով, սկսաւ ասել զանձնէ՝ թէ է արքայորդին
 Դեմետր : Երկուցեալ ընդ այս 'ի պատժոյ, փա-
 խեաւ 'ի Լեհաստան, և 'ի բաց եդեալ զկարգ
 կրօնաւորութե (այսու պատճառաւ 'ի տարեգիրս մեր
 անուանի կարգընկէց) (Разетрига) գնաց առ իշխանն
 Լեհաց Ալիշնեւիցկի և ասաց զանձնէ՝ թէ է որդի
 թագաւորին Ֆէոդորի իվանովիչի՝ (*) Դեմետր :
 Ալիշնեւիցկի և այլ երևելի իշխան Լեհաց Մնի-
 շեկ կալան զկողմն նորա : Ա երջինս հիմնեաց 'ի վե-
 րայ այսր գործոյ զձեռկերպութիւն իւրոյ փառասի-
 րութե • համարելով զայս ինքնակալ օրինաւոր ժա-
 ռանդ Ռուսաց թագաւորութե, ցանկայր տալ նմա
 զդուստր իւր 'ի կնութի : Զ անիւք այսր իշխանի և
 Ալիշնեւիցկեցիւց սուտ Դեմետր ընկալաւ զօգնութի
 'ի Լեհաց և եմուտ 'ի Ռուսաստան : Աստանօր
 զօրք նորա անդադար սկսան բազմանալ • վասն զի
 Ռուսք միշտ հաւատարիմ և անդդուելի հպատակ
 իւրեանց օրինաւոր թագաւորաց, կարծէին՝ թէ
 ինքնակոչս այս է որդի թագաւորին Ֆէոդորի : (**)
 Այն ինչ մերձենալ սկսաւ 'ի Մոսկով՝ Գողոունով

(*) Ոչ թագաւորին Ֆէոդորի, այլ Յովհաննու 7. ծա-
 նօթ. թարգ :

(**). Յովհաննու :

ի յուսաբեկութենէ և ի խայթելոյ խղճի մտաց վախճանեցաւ. նմա յաջորդեաց որդի նորա Ֆէոդոր Բորիսովիչ : Ո՛չ անագան և Մոսկով ընկալաւ զինքնակոչն ի տեղի արքայորդւոյն Դեմետրեայ : Ֆէոդոր Բորիսովիչ ընկեցաւ յաթոռոյ և սպանաւ : Սուտ Դեմետրեայ նմա ի Մոսկով . թագկապեաց և պսակեցաւ ընդ Մարինայի Մնիշեկ : 1605—1606.
Իսկ խաբեութիւնն ի լոյս եկն և ինքնակոչն սպանաւ : Թագաւոր Ռուսաց հրատարակեցաւ Աստիլ Իվանովիչ Շոյսկի : ի սկիզբն թագաւորութեանորա յայտնեցաւ այլ ինքնակոչ ի տեղի առաջնոյն և վաղ 1606—1610.
ընդ փոյթ բազում քաղաքք անցին ի կողմն նորա :

Զկնի սակաւ ժամանակի յայտնեցան ևս երկու ինքնակոչք : Յայնժամ ներքին խռովարար պատերազմունք ծագեցան ընդ համայն Ռուսաստան . ի վերայ վշտակրութեյ պատճառելոց յայնցանէ հասին և այլ նեղութիւնք յարշաւանաց Թաթարաց, Ղրիմու և ի վրդովմանց, զոր գործէին նորանոր զանազան ինքնակոչք : Ժամ բարեպատեհ համարեալ Լեհաց և Շվեդաց սկսան զպատերազմն ընդ Ռուսաստանի : Լեհք առաջարկեցին, որպէս զի Ռուսք ընկեցեալ յԱթոռոյ զՇոյսկի, կացրուցին իւրեանց թագաւոր զՎլադիսլավ զորդի արքային Լեհաց Սիգիզմունդոսի ֆ . Շվեդք կամեցան նրստուցանել ի Գոհ Ռուսաց զարքայորդին զՓիլիպպոս : Գտանելով յայսպիսի վշտալի հանգամանս՝ բնակիչք Մոսկովայ վճռեցին ընդունել զառաջարկութիւն Լեհաց : Պատրիարքն Հերմոգէն և Մետրաքոլիտն Ֆիլարեթ (*) ընդդիմացան այնմ . բայց

(*) Այն է՝ Ֆէոդոր Նիկիտիչ Բոմանով, որ հրամանաւ

ընդ վայր : Աստիւ իւլանուիւն ընկեցաւ յԱթոռոյ
 և եղև կրօնաւոր : Իշխանք և ժողովուրդն յղիցին
 առ Սիգիզմունդոս զդեսպանս, յորոց միջի գտաւ և
 Մետրապօլիտն Ֆելարէթ խնդրել զնա, զի առա-
 քեսցէ զըրդի իւր 'ի Մոսկով 'ի թագաւոր Ռու-
 սոյ : Աաղվաղակի երևեցաւ, զի արքայն Լեհաց
 Սիգիզմունդոս ոչ այնքան կամէր նստուցանել զըր-
 դի իւր 'ի Գահ Ռուսոյ, որչափ զկործանումն իս-
 պառ Ռուսաստանի : Լեհք մտեալ 'ի Մոսկով
 կողոպտեցին զայն և գործեցին 'ի նմա զզարհուրելի
 ճապաղիս արեան : 'ի սմին ժամանակի Սիգիզմուն-
 դոս պատուէր ետ ուղևորել զամենայն դեսպանս ե-
 կեալս առ նա, իբրու գերիս 'ի Լեհաստան : Յայ-
 սոսիկ աւուրս զօրադուլսն Շվեդաց Դեւագարդի
 աւար առնէր զնահանգն Նովգորոդայ : Թուեցաւ՝
 զի Ռուսաստան անկցի ընդ բեռամբ թշուառութեց՝
 հասելոց 'ի վերայ նորա . սակայն Նախախնամութիւն
 պահպանեաց զնա՝ առաքելով զօգնութիւն յայնմ
 կողմանէ, որում ոչ ոք ակն ունէր յայնժամ : Աննը-
 շան քաղաքացի Նովգորոդայ կողմայ Մինիչ Սու-
 խորուկի յայտնի ընդ անուամբս Մինին՝ շարժեալ
 սիրով հայրենեաց, համոզեաց զքաղաքացիս իւր 'ի
 զոհ մատուցանել զինչս և զանձինս իւրեանց վասն
 փրկութե հայրենեաց : Առանց յապաղելոյ ժողո-
 վեցան զօրք, որոց առաջնորդ կարգեցաւ Դեմետր
 Իշխանն Պօթարսկի : Համբաւ զայսմանէ զարթոյց
 և զմիւս քաղաքս, և յայնժամ յամենայն կողմանց
 զօրք սկսան ժողովիլ ընդ դրօշակաւ Պօթարսկոյ և

Գողունովի՝ առանձնացեալ ընկալեալ էր զկարգ կրօնա-
 ւորի . զդա սուտ Դեմետր հասոյց աստիճանի Սիտրապօլ-
 տութեան, իբրու զմերձաւոր ազգական իւր :

արժանաւոր վաստակակցի նորա իշխանին Տրուբեցկոյ : Իմացեալ զայսմանէ Լեհաց սպառնալեօք ստիպէին զՊատրիարքն Հերմոգէն գրել առ Պօժարսկին, զի արձակեսցէ զգօրս իւր • Բայց Հերմոգէն իբրեւ ճշմարիտ հայրապետ եկեղեցւոյն Ռուսաց՝ ոչ երկեալ 'ի սպառնալեաց, և մանաւանդ անուամբն Լստուծոյ օրհնեաց զամենեօին՝ որք առնուին զգէն 'ի պաշտպանութի հաւատոյ և հայրենեաց :

Զարագնեալ ընդ այն Լեհաց՝ սովամահ արարին զՀերմոգեն : Ընդ այն ժամանակս Պօժարսկի մերձենայր 'ի Մոսկով : Գեթմանն Լեհաց Ժուկեվսկի պատերազմեցաւ ընդ նմա, և յաղթեցաւ • Պօժարսկի պաշարեաց զՄոսկով, յորում գտանէին Լեհք • որք նեղեալ 'ի սովոյ՝ անձնատուր եղեն : 'ի յիշատակ այօր ազատութե Մոսկովայ 'ի Լեհաց, Ռուսք կարգեցին զտօն, որ ամ ըստ ամէ կատարի 'ի 22 Հոկտեմբերի 'ի փառս Լստուածամօրն Կազանսկի կոչեցելոյ : Եկեղեցականք, իշխանք և Ժողովուրդն Վլադիմիրն 'ի վախճանի ազատել զանձինս յարտաքին և 'ի ներքին թշնամեաց ընտրութք ինքնակալ թագաւորի : 'ի խնդութեն և յերախտագիտութե ամքն կամեցան դնել զթագն 'ի գլուխ Պօժարսկի իշխանին : Եայօմ նուազի Պօժարսկի հաւատարմացոյց զժամանակակիցս իւր և զյետագայս՝ թէ պատերազմեցաւ ընդ Լեհս ոչ վասն օգտի իւր, այլ մի միայն վասն բարօրութեան Ռուսաստանի : Զառաջարկեալն թագ յերախտագէտ Ռուսաց հեռացոյց յիւրմէ և խորհուրդ ետ դնել զայն 'ի գլուխ Միքայէլի, որդւոյ Ֆեոդոր Նիկիտիչի Րոմանովայ, որ միաւորեալն էր կապանօք մերձաւորագոյն արենակցութի ընդ Տան Րիւրիկայ ըստ կապոյ ա-

մուսնութիւն թագաւորին Յուլիանոս $\overline{70}$ ընդ Անաստասեայ Ռոմանովայ : Ամենեքին աղաղակեցին , եղիցին Միքայէլ թագաւոր մեր , յայնժամ պատանին Միքայէլ բնակեալ ընդ մօր իւրում 'ի վանս Իփատեայ 'ի Կոստրում , եկն՝ համաձայն դտեալ փափազանաց ամենայն Ռուսաց՝ 'ի Մոսկով , և հանդիսիւ օծաւ 'ի թագաւոր :

ԹԱԳԱՆԱԿԱՆՆԵՐ ՏՈՒՆ

ՐՈՄԱՆՈՎԵԱՆՑ :



ՇԲԻՆ ԶԻՆԳԵՐՐՈՐԴ :

'ի բազմելոյ 'ի Գահ ամենայն Ռուսաց Տան Բամանովեանց ցժամանակ Պետրոսի ան :

1613—1682=69.

Թագաւորութիւն Միքայէլ Ֆէոդորովիչի :

1613—1645=32.

Բազմեալ 'ի Գահ ամենայն Ռուսաց՝ Միքայէլ Ֆէոդորովիչ արդարացոյց զականկալութիւն Ռուսաց , վասն զի և յամս պատանեկութիւն իւրոյ եցոյց ըզհաստատութիւն ինքնակալ իշխանութիւն 'ի բարեկարգութիւն հասարակաց բարւոյն : Խռովութիւնք ցարդ տեւալք 'ի նահանգս Նիժնի-Նովորոդայ և Ղազանու և

առաւելապէս 'ի հարաւային Ռուսաստանի, ուր առաջնորդ խաղախաց Զարուցկի պաշտպանէր Մարինայի Մնիշեկ և որդւոյ նորա, յաջողութեւն ունաւ ճեցան : Խաղաղութիւն հաստատեցաւ 'ի ներքս Ռուսաստանի : Միքայէլ կամեցաւ հաշտեցուցանել ըզ-
 Ռուսաստան վասն բարեւաւութիւն նորա ընդ այլազգի Տէրութեաց : Այսու դիտաւորութեւն դաշն խաղաղութեւն եղ ընդ Շվեդիայի Ստոլբուլ : (*) Ըստ վօրութեւն դաշնոս պարտաւորեցաւ ըստ հանգամանաց ժամանակին 'ի բաց կալ 'ի Լեֆլանդիոյ, և թողուլ 'ի ձեռս Շվեդաց զինգերմանլանդիա և Վարբելիս : Ընդ Լեհաստանի խօսեցան զհաշտութիւն ընդ ամս 14 և ամիսս վեց 'ի գիւղն Դէոլլին կամ Սվետկով : Ըստ այնմ Ռուսաստան նոյնպէս ստիպեալ յիւրոց հանգամանաց ժամանակին եթող Լեհաստանի զՍմոլէնսկ, զՉերնիկով, զՆովգորոդ, Սեւերսկ, Ստարոգուբ և զայլ բազում քաղաքս : Բայց այս կորուստ վարձատրեցաւ այնուիկ, զի հօրն Միքայէլի Ֆիլարեթի՝ որ նեղեալ տանջուր 'ի Լեհաստան 'ի գերութեւն, տուաւ սղատութիւն : Եկն 'ի Ռուսաստան, բարձրացաւ յաստիճան Պատրիարքի, և սկիտանի եղև իւրով իմաստութեւն և սրբութեւն վարուց բարեշինութեւն Ռուսաստանի : Պատերազմ ծագեալ կրկին ը մէջ Ռուսաստանի և Լեհաստանի դադարեցաւ հաշտութեւն 'ի քաղաքն Աւաղմայ 'ի վերայ հիման ըստ մեծիմասին դաշինն Դէոլլինայ : 'ի ժամանակէ յայտմանէ Միքայէլ հոգայր միայն ղբարեկարգութեանէ իւրոյ թագաւորութեւն : Յայնմ

1617.

1619.

(*) Յայտման նահագս 'Նովգորոդայ մերձ 'ի քաղաքն Տիւվին առ հարաւային մասամբ գետոյն Սեսի :

Ժամանակի, յորում վաճառականք Ռուսաց դիմէին
 ՚ի հեռաւոր վայրս Սիբերիոյ, և հիմէին անդ ըզ-
 քաղաքս Ենիսեյսկ, Եակուտսկ, Իրբիթ և վայլս,
 առ կատարելագործելոյ և յառաջադէմ առնելոյ
 զառւետուրս Ռուսաց, դաշն կապեաց ընդ Անգղիոյ,
 ընդ Գաղղիոյ, Բուռսսիոյ և Տաճկաստանի : Ընդ-
 հանրապէս այս Միապետ արար վասն բարութեան
 Ռուսաստանի զայն ամենայն, որչափ ինչ մտնի էր
 սպասել յիմաստունն ՚ի բարեմիտ թագաւորէ, որ
 ունիցի զանխարդախ սէր առ հպատակս իւր :

Թագաւորութիւն Ալէքսէյ Միքայէլովիչի :

1645—1676=31.

Ժառանգ Միքայէլ Ֆէոդորովիչի եղև որդի նորա
 Ալէքսէյ : ՚ի թիւս մօտաւոր անձանց նորա առ
 Գահն գտանէր Բօրիս Իվանովիչ Մորոզով : Այս
 իշխան՝ որում հաւատայր թագաւորն Ալէքսէյ իբ-
 րու դաստիարակի և մերձաւոր արենակցի իւրոյ, (*)
 չարաչար վարեցաւ և զոյգ ընդ համախոհից իւրոց
 ընդ Պլեշէեիւայ և Տրախանիոտովայ և այլոց մի
 միայն վասն անձնական շահասիրութե իւր եղ զպէս-
 պէս ծանր հարկս ՚ի վերայ ժողովրդեան : Եայս-
 մանէ ծագեցան վրդովմունք ՚ի Մոսկով, յորում
 Ժամանակի և Տրախանիոտով, Պլեշէեիւ և այլ բա-
 ղում իշխանք և քաղաքացիք սպանան : Մորոզով

1648.


(*) Թագաւորն Ալէքսէյ էառ ՚ի կնութի զդուստր իշ-
 խանին Իլիոյ Միլոսլաւսկոյ զՄարիա. իսկ Մորոզով
 զբոյր նորա :

և Միլոսլավսկի սղտեցան ՚ի մահուանէ այնու
 պատճառաւ, զի էին սղտեցանք թագաւորին : ՚ի
 նմին իսկ ժամանակի գրեթէ և յայնմ իսկ առթէ
 եղև խռովութիւն ՚ի Պսկով և ՚ի Նովգորոդ .
 վերջինս այս լեալ է թելադրութեամբ չարամիտ
 վաճառականի ուրումն Նովգորոդայ Առկ անուա-
 նելոյ, որ յարոյց զժողովուրդն ընդդէմ բովանդակ
 այլազգի վաճառականաց : Յետ դադարեցուցանելոյ
 զայսոսիկ խռովութիւն, Ալէքսէյ դարձոյց զհոգողու-
 թիւն իւր ՚ի հաստատութիւն արդարութե ՚ի Ռու-
 սաստանի : Այսու մտօք Նա ՚ի լոյս էած զբովան-
 դակութիւն օրինաց, անուանեալ զայն հաշիւէնէ
 թագաւորի Ալէքսէյ Միքայելովիչի : ՚ի ժամանա-
 կի աստ յայսմիկ զօրութիւն Ռուսաստանի ընդար-
 ձակեցաւ գերապանծ իմն ստացուածով . Գեթման
 (այնէ՝ առաջնորդ կամ գլուխ) խազախաց Մալո-
 ռուսիոյ, Բողդան խմբնիցկի երդուաւ ՚ի մշտնջե-
 նաւոր հպատակութիւն թագաւորին Ալէքսէյ Միքա-
 յէլովիչի, և յայնժամ Մալոռուսիա միաւորեցաւ
 ընդ Ռուսաստանի : Նահանգք Կիովայ, Չերնիգո-
 վայ և հիւսիսային Նովգորոդայ նոյնպէս ծանեան
 զիշխանութիւն Ռուսաց Միապետի : Այս իրողութիւն
 յարոյց զպատերազմն ընդ մէջ Ռուսաստանի և Լե-
 հաստանի : Չօրք Ռուսաց մտին ՚ի Լիովանիա,
 տիրեցին Աիւնայի, և սպառնային ևս Աարշավայ :
 Յայնժամ Լեհաստան առաջադրեաց զդադարումն
 մարտին և խօսեցաւ ՚ի հաշտութիւն ՚ի գիւղն Լնդ-
 բուսով մերձ Սմոլէնսկայ յամս երեքտասան : Թա-
 գաւորն Ալէքսէյ պահեաց զիշխանութիւն իւր ՚ի վե-
 րայ Մալոռուսիոյ և նահանգաց Կիովայ, Չերնի-
 գովայ, Նովգորոդայ և Սմոլէնսկայ : ՚ի միջի այս-

պիսի յառաջադիմութիւն զինու Ռուսաց, թագաւորն
 յանկնկալն պահու խռովեցաւ աններելի դործովք
 հպատակի իւրոյ՝ Պատրիարքին Նիկոնի։ Այս այս
 յինքն յանկուցեալ իւրով հանճարով և առաքի-
 նութք զանկեղծաւոր սէր և զանսահման հաւատար-
 մութիւն իւրոյ թագաւորի, օկսաւ հակառակ կողմ
 հրամանաց, զոր թագաւորն տայր առանց յառա-
 ջագոյն խորհրդակցելոյ ընդ նմա․ դատաստարտէր
 զՍահմանադրութիւն, (Ուղոժենիէ) ընդդիմանայր
 հրամանաց՝ որովք թագաւորն զմանս ՚ի կալուա-
 ծոց վանաց, որք բազմութիւն էին յայնժամ, միա-
 ցոյց ընդ արքունականին, և հուսկ ապա ոչ հայե-
 լով, զի թագաւորն ջանահար լինէր պահպանել
 ընդ նմա զհամաձայնութիւն, ազատակամ եթող զհոտ
 իւր։ Առ քննելոյ զայս իրողութիւն արարաւ ժողով,
 հրաւիրեալ յայն զՊատրիարքունս Աղէքսանդրիոյ
 և Անտիոքայ։ Նիկոն իբրու հակառակորդ կամաց
 թագաւորի, ընկեցաւ ՚ի Պատրիարքութեւն և առա-
 քեցաւ ՚ի վանս Թերապոնդոսի (յայժման նահան-
 գըս Առողղեայ)։ Յաւուրս յայտոսիկ առաջի կոյցին
 թագաւորին նորանոր վիշտք և հոգք Տէրութեան։
 Մերձ ՚ի Դոն գետն երևեցաւ աւաղակապետն Բա-
 զին, որ ՚ի բովանդակ Ռուսաստանի առնէր զվար-
 հուրելի սպանութիւն և զաւերութիւն, յաւարի առ-
 նոյր զբազում քաղաքս առ գետովն Առլդայի, մինչ
 զի և Մոսկով կայր ՚ի վտանգի։ Յուսկ յետոյ ե-
 ղեւնագործս ըմբռնեցաւ և պատժեցաւ։ Երջանիկ
 էր յայնժամ Ռուսաստան, զի յայսպիսի դիպուա-
 ծըս, այլազգի Տէրութիւնք պահպանէին զնազաղու-
 թիւն ընդ նմա։ Լեհք կրկին հաստատեցին զհաշ-
 տութիւնն Անդրուսուլայ․ Խան Ղըիմու Խոսեյո-

զեռազաղութի ընդ Ռուսաստանի, իսկ Թագաւորն
 Իմերեթի և Այուկա Խան Ղալմուկաց մտին ընդ
 իշխանութիւն Թագաւորի Ռուսաց :

Այս հանգամանք բացին Ռուսաստանի զնոր ճա-
 նապարհ վաճառաշահութիւն ընդ արևելիայս . հիւ-
 սիսային արևելեան կողմունք Սիբերիոյ եղեն ծա-
 նօթ յայնմ ժամանակէ, յորում Սիմոն Դեշնով
 հանց ընդ նեղուցն՝ որ քաժանէ զԱսիայ յԱմերե-
 կոյ, որ և անուանի այժմ Բերինգեան : Ասան յա-
 ռաջադէմ առնելոյ զվաճառականութիւն ընդ Սի-
 նէայիս հիմնեցան ՚ի Սիբիր քաղաքք Ներչինսկ և
 Իրկուտսկ, և յօրէ յայտմանէ Ռուսք սկսան գնալ
 ՚ի Պեկին : Թագաւորն գուն գործէր ընդարձակել
 զառևտուրն Ռուսաստանի ընդ արևմտեան Եւրո-
 պիոյ, և այսու դիտաւորութիւն ոչ ումք յեւրոպա-
 կան ազգաց տայր զառանձին իմն իրաւունս ըստ առ-
 ևտրական գործոց ընդ Ռուսաստանի . այլ առ հա-
 սարակ նոցա շնորհեալ էր զմիատեսակ զիրաւունս և
 զառանձնաշնորհութիւն . վասն սիւսելոյ զլուսաւորու-
 թիւն ՚ի Ռուսաստան հաստատեցաւ ՚ի Մոսկով
 Ճեմարանն Զաիկոնոսպսկի :



Թագաւորութիւն Ֆէոդորի Ալէքսէյեւիչի :

1676—1682=6.

Թագաւորն Ալէքսէյ Միքայելովիչ եթող զերես
 որդիս զՖէոդոր, զՅովհաննէս՝ ծնեալ յառաջին
 կնոջէ ՚ի Մարիամայ Միլոսլաւսկոյ, և զՊետրոս
 ծնեալ յերկրորդ կնոջէն ՚ի Նատալիա Արիլովնայ
 Նարիշկինէ : Կտակաւ իւրով ծանոյց ժառանգ զէ-

1677. րէց որդին իւր զՖէոդոր : Խազախք Չապորոժսկի կամովին անձնատուր եղեն 'ի հպատակութիւն այս թագաւորի : Ուստի ծագեցաւ պատերազմ 'ի Մէջ Ռուսաստանի և Տաճկաստանի, որ վերջացաւ հաշտութիւն եղելով յամս քսան . ըստ այնմ Ռուսաստան ստացաւ զերկիրս առ լերամբք Չապորոժսկի : Թագաւորն դաշն եղ ընդ Լեհաստանի . ըստ զօրութիւնորա հաշտութիւն Լնդրուսովայ ձգեցաւ մինչև ցամա 1693 : Յապահովի կացուցեալ զՏէրութիւն իւր յարտաքին թշնամեաց՝ թագաւորն դարձոյց զիւր միտս 'ի ներքին վիճակ նորա : Առարկայք ջանից նորա եղեն հաստատութիւն արդարութիւն, բարեկարգութիւն 'ի քաղաքական կառավարութիւն, թեթեալ բեռնութիւն հարկաց, տնտեսութիւն 'ի շուայլութիւն, արթնութիւն ազգային գործունէութիւն, տարածումն վաճառականութեան և լուսաւորութիւն : Այս վերջին դիտաւորութիւն հաստատեաց 'ի Մոսկով ըզ-Նիւմարանն Սլաւենա-յոյն-լատինական : (Славено-Греко-Латинская Академія): Բայց գերապանծ յիշատակ թագաւորութիւն նորա է բարձունք ժառանգակալութեան (*), որով մինչ ցայն ժամանակ ոչ ծառայութիւն, այլ վսեմութիւն ծննդեան կամ տոհմի տային զգերազանցութիւն յարքունի պաշտամունս : Թագաւորն Ֆէոդոր վախճանեցաւ 'ի 29 ամեայ հասակի, ոչ յայտնեալ՝ թէ որ յերկուց եղբարց իւրոց լիցի ժառանգ Աթոռոյ : Ուստի և Ռուսաստան մնաց անժանօթ իւրոյ վիճակի : Աերին Տեսչութիւն պատրաստէր նմա զՊետրոս Ի . և զոյգ ընդ նմա գերջանկութիւն Ռուսաստանի :

(*) Իշխանութիւն կամ պաշտօն յորդուց յորդիս ոչ ըստ ծառայութեան և արժանաւորութեան ստացեալ :

Բնդհանուր ծանօթութիւնք զլիճակի-
Ռուսաստանի 'ի Յովհաննէ Դ. մինչև
յՊետրոս Կ:

Յորժամ բարձան մասնաւոր իշխանութիւնք և
հաստատեցաւ 'ի Յովհաննէ Դ. և յորդեղ նորա 'ի
Ասլէ Դ. Միապետութիւն, Ռուսաստան ազատե-
ցաւ 'ի ներքին խռովարար հարուածոց, և սկսաւ
զօրանալ 'ի կարողութիւն իւրում: Ժողովուրդն յիւրն
սեպհական երջանկութիւն և յանդորրութիւն դադա-
րեցաւ 'ի ձեռնամուկսն լինելոյ 'ի դործս Տէրութիւն:
Բովանդակ իշխանութիւն ծայրագոյն 'ի ժամանակէ
անտի Յովհաննու Դ. միացաւ յանձն Միապետաց,
որք այնուհետև սկսան անուանիւ տէր, մեծ իշխան
և ինքնակալ. իսկ 'ի ժամանակէ անտի Յովհաննու
Դ. (Թագաւոր (Царь) մեծ իշխան և ինքնակալ ա-
մենայն Ռուսաց: Օրէնսդրութիւն կատարելագոր-
ծեցաւ 'ի ժամանակէ անտի ընծայելոյ 'ի լոյս իրա-
ւաբանութեան 'ի Թագաւորէն 'ի Յովհաննէ Դ. և
սահմանադրութիւն յԱլէքսէյ Մեքայէլովիչէ: Բաց
յայտմանէ 'ի լոյս ընծայեցան և բազում օրէնքս-
դրութիւնք 'ի մասին ասլահովութիւն անձանց և ընչից
իւրաքանչիւր քաղաքացւոյ: Բարձունքն ժառանգա-
կալութիւն եբայ ամենայն խոհական և առաքինի ան-
ձանց զճանապարհ առ ստացունքն փառաց և պատուոյ
յարբուսի պաշտաման: Չինուորականութիւն բար-
ւոքեցաւ ջանիւք Յովհաննու Դ. և Յովհաննու Դ.
որ հաստատեաց զզօրս անուանեալս նետաձիգ 'ի Մի-
քայէլէ և յԱլէքսէյ: Բայց և այնպէս այն հա-
մեմատութիւն զինուորականութիւն ազգաց արեւմտեան
Եւրոպիոյ դեռ ևս էր 'ի մանկութիւն: Ռուսք այսօր

Ժամանակի առնէին զառւետուրս 'ի Հիւսիս 'ի ձեռն Սպիտակ ծովու, յԱրեւմուտս ընդ Լիտվանիացւոց Լեհաց և Գերմանացւոց. 'ի Հարաւ ընդ ձեռն Կասպից ծովու. իսկ յԱրեւելս ընդ Սիբիր մինչև ցաշխարհն Սինէացւոց և յարեւմտեանն Ուկրաինոս : Կեդրոն վաճառականութեան էին Մոսկով, Մաքարիել առ Գետովն Աղդայի և Արխանգելսկ : 'ի սմին ժամանակի եմուտ 'ի Ռուսաստան գործածութի մետաղական դրամոց : Եառուրս Եովհաննու ֆ. սկսան հատանել զդրամս հոպէէ. իսկ 'ի ժամանակս Թադաւորին Ալէքսէյ Մեքայէլովիչի «ռուբլ» : Արիստոտել Բոլոնսկի՝ հրաւիրեալ 'ի Եովհաննէ ֆ. 'ի Մոսկով, ծանօթացոյց մասամբ իւրից զՌուսաստան ընդ գեղարուեստից, որ ծաղկեալն էր յայնժամ յիտալիա : Նա կառոյց 'ի Մոսկով զհոյակապ եկեղեցի 'ի փառս վերափոխման սրբոյ Աստուածամօր, և զպարիսպս Կրեմլեայ, զպալատս և զայլ պէսպէս քարեայ շինուած :

'ի նկարչութեան Ռուսք ցուցին զմեծ ջերմեռանդութի և զնախանձայութի. բայց դեռ ևս զճաշակ սակաւ. որք շատանային միայն նկարագրութի պատկերաց սրբոց : 'ի տասն և եօթներորդ դարու երեւցաւ 'ի Ռուսաստան Թատրոնական բանաստեղծութի արհեստ, որոյ իմաստ ըստ մեծի մասին էին անցք յիշատակեալք 'ի սք գիրս : Մեծ մասն մատունադրաց Ռուսաց էին եկեղեցականք և գրուածք նուցա հոգեւորք : Ընդհանրապէս յառաջադիմութիւն լուսաւորութի Ռուսաց 'ի սմին ժամանակի ոչ հայեւով յայն, զի 'ի Կիով և 'ի Մոսկով գտանէին ճեմարանք էր նուազ և յամր : ՈգւոյՊ ետրոսի Թ. սահմանեալ էր ծաղկեցուցանել և փութացուցանել

ղայն : 'ի ժամանակէ Թադաւորին Ֆէոդորի գլուխք
եկեղեցւոյ էին Պատրիարքունք : Յեկեղեցին Ռու-
սոց ցժամանակս Թադաւորին Ալէքսէյ Միքայելո-
վիչի տիրէր անդորրութիւն և համաձայնութիւն : Բայց
'ի սմին ժամանակի 'ի պատճառս ուղղելոյ դեկեղե-
ցական գիրս Պատրիարքին Նիկոնի, եմուտ 'ի Ռու-
սաստան Հերետիկոսութիւն, յորմէ յառաջ եկին
քաղում աղանդք անուանեալք հերձուածողաց և
հնակրօնից : (Раскольниковъ и Старообрядцевъ).

ԱՐՁԱՆ ԱԵՑԵՐՐՈՐԴ:

'ի ժամանակէ Պետրոսի ան. ցբազմին 'ի Պահ ամենայն
Ռուսաց կայսրուհւոյն կատարինէի ք:
1682—1725=43.

Թադաւորութիւն Պետրոսի ան. Ալէքսէյեվիչի:

Թադաւորութիւն Պետրոսի ան. զմեծ և զհատու-
նեղործութիւն եցոյց 'ի վերայ Ռուսաստանի ըստ
քաղաքական, մտաւոր և մինչ զի գործնական մա-
սին. ամենեքեան տեսին 'ի Ռուսաստան գնոր իմն
կերտուած և զնոր կեանս :

Պետրոս ան. ծնաւ յերկրորդ կնոջ օրպէս 'ի վե. 30 Մայիս
րոյ անսացաւ Թադաւորին Ալէքսէյ Միքայելովիչի : 1672.
Պնդութիւն կազմուածոյ մարմնոյն, ծաղկեալ առող-
ջութիւն, վառ երեւակայութիւն, սրութիւն մտաց և զար-
մանալի ունակութիւն իմանալոյ զամենայն տային նմա

զյայտնի գերեկայութիւն առաջի եղբօր նորա Թու-
հանու, որ էր բարեհոգի և հիւանդոտ : Աստի
յիտ վախճանի թաղաւորին Ֆէոդորի ամենեքեան՝
ի թիւս որոց և ինքն արքայորդին Թովհաննէս վըճ-
ռեցին նստուցանել ՚ի Գահ ամենայն Ռուսաց ըզ-
Պետրոս : Քոյր մանկահասակ արքայորդեաց սպա-
ռադինեաց զնետաձիգս ընդդէմ Պետրոսի և ընդ-

15 Մայիսի
1682.

դէմ համայն Նարիշկինեանց : Եայնժամ ծագեցաւ
զարհուրելի աղմուկ շփոթի ՚ի Մոսկով, յորում
ժամանակի հեղաւ բազում անմեղ արիւն : Հուսկ
սպա կարգաւորեցին նստուցանել ՚ի Գահ զերկոսին
արքայորդիս . թաղադրութիւն նոցա կատարեցաւ,
23 Յուլիի
1682. Սոփիա հրատարակեցաւ կառավարիչ Տէրութեան :
Թաղուհին Սոփիա ինքն ևս երկնչէր ՚ի զարհուրելի
զօրութենէ նետաձգաց, ուստի հարկ եղև նմա ըստ
զանազան բարենշան պատճառաց հեռացուցանել
զնոսա ՚ի Մոսկովայ, զոր իմացեալ նետաձգաց կրկին
յարուցին զխռովութի : Դուռն ըմբռնեալ յերկիւղ
հեռացաւ ՚ի Սարգսեան վանս սրբոյ Երրորդութի :
Ընդանօր մի միայն Ա երկն Տեսչութին պաշտպան
գտաւ Պետրոսի իւրով սուրբ հովանաւորութեամբ .
յայնմ ժամանակի, յորում նետաձիգք կամէին սպա-
նանել զնա, թաղաւորական հեծելազօրն եմուտ ՚ի
վանս, նետաձիգք նկուն եղեն և խոստովանեցան
զյանցանս իւրեանց : Դուռն ներեաց նոցա և միայն
գլխաւորագոյնք ՚ի նոցանէ մատնեցան մահու : Ըյսմ
այսպէս եղելոյ՝ Պետրոս եհաւ հնգետասանամեայ հա-
սակի . բնակեալ ՚ի գիւղն՝ նա ըստ խորհրդոյ իւ-
րումս սիրելոյ Լեփորտի Գեոնովրացոյ կարգեաց
անդ զկանոնաւոր զօրս անուանեալ Պօտեշնի : (По-
тешными).

'ի բազմանալ նոցա, մասն ինչ 'ի նոցունց բե-
 րաւ 'ի գիւղն Սեմնովսկի, և այսոքիկ զօրք եղեն
 Հիֆն երկուց գլխաւոր այժմեան կայսերական զնդից
 Գվարդիոյ Պրէֆէրտէնսկի և Սեմնովսկի կոչեցե-
 լոց: Թագուհին Սովիա ոչ երբէք դարձոյց զմիտս
 իւր առ այն. բայց 'ի վախճանի տեսեալ՝ թէ բազ-
 մանայ թիւ նորոգ կարգաւորեալ զօրաց, և թէ սէր
 ազգին առ Պետրոս օր յօրէ զօրանայ, սկսաւ յայտ-
 նապէս ցուցանել զիւր ատելութի առ թագակալ
 եղբայր իւր, և խորհուրդ չար սպանութի խորհե-
 ցաւ զնմանէ: Իմացեալ զայս Պետրոսի հեռացաւ
 'ի վանս Սարգսեան սրբոյ Երրորդութի: Բազումք
 'ի մտերիմ հպատակաց յայտնեցին զիւրեանց պատ-
 րաստականութի մեռանիւ վասն նորա: Սովիա եր-
 կեաւ և վճռեաց հաշտիւ ընդ նմա: Բայց Պետրոս
 ոչ հաւանեցաւ ընդ այն, և հրամայեաց առաքել
 զՍովիա 'ի վանս կուսանաց Մոսկովայ. անդ ըն-
 ծայեցաւ Սովիա 'ի կարգ կուսութի ընդ անուամբ
 Շուշանայ: Յայնժամ Պետրոս ընդ մօրն իւրոյ և
 ընդ կնոջ Եւդոկիայ Ֆեոդորովնայի Լոպուխինայ
 եկն 'ի Մոսկով: Թագաւորն Յովհաննէս եւ ընդ
 առաջ նորա ուրախութիւն, և յանձն արար նմա զինք-
 նակալութեանն իշխանութիւն: Յայսմ ժամանակէ
 սկսանի փառք Պետրոսի ւն. և զոյգ ընդ նմա փառք
 Ռուսաստանի: Պետրոս մեծացոյց և կատարելագոր-
 ծեաց զզօրս իւր զօրութիւն մեծի հանճարոյ իւր և
 ջանիւք այլազգեաց, զորս նա հրաւիրեաց 'ի Ռու-
 սաստան. եղ հիֆն նաւատորմղին և կառոյց յԱր-
 խանգելսկ զտեղի նաւաշինութի: Յետ այսոքիկ եղ
 'ի մտի վճռաբար 'ի վերջ հասուցանել փառք ըղ-
 շարունակեալ պատերազմ Ռուսիոյ ընդ Տաճկաս-

1689.

1698.

տանի : Աստուկակիցք նորա յայսմիկ ձեռնարկութի
 էին Լեւորտ Ընթանդացի, Գորդոն, Գոլովին
 և Անետկեցի Դելիմա . բայց առաջին ձեռնար-
 կութիւն Ռուսաց ընդդէմ Ազովայ եղև անյաջող :
 Դարձ արարեալ 'ի Մոսկով, Պետրոսներկայ գտաւ
 մահուան եղբօրն իւրոյ Յովհաննու : 'ի սմին ժա-
 մանակի եղև սով 'ի Ռուսաստան . ուստի Պետրոս
 խոհական միջոցօք պահեաց զազգ իւր յայսմ նե-
 ղութի . որով և շահեցաւ զէր ամենայն հպատա-
 կաց իւրոց : Ջկնի այսորիկ բազմացուցեալ զցա-
 մաքային և զծովային զօրս իւր, խաղաց կրկին տն-
 դամ 'ի վերայ Ազովայ և տիրեաց այնմ քաղաքի :
 Տաճիկք արարին ընդ նմա հաշտութիւն և Ազով
 միաւորեցաւ ընդ Ռուսաստանի : Առ 'ի պահել առ-
 յապայն զայս քաղաք յիւրում իշխանութի, Պետ-
 րոս խորհեցաւ կառուցանել զնաւատորմիդ 'ի վերայ
 Ազով ծովու, և այս դիտաւորութեամբ հիմնեաց 'ի
 Աորոնիժ զտեղի նաւաշինութի : Գուն գործեալ
 ստանալ զհարկաւոր ծանօթութիւն, Պետրոս ճա-
 նապարհորդեաց յայլ և այլ երկիրս, և ընդ ամե-
 նայն տեղիս մեծաւ աչալըջութիւնկատէր զամենայն
 որ շահաբեր և հարկաւոր էր Ռուսաստանի : Ըղ-
 ձակերտ լեալ գիտութիւն արհեստի նաւաշինութեան
 գնաց 'ի Հոլլանդիա, և անդ 'ի գեղջն Սարդամ
 'ի տեղւոջ նաւաշինութիւն եմուտ 'ի թիւս շինողաց
 նաւու ընդ անուամբ Պետրոսի Միքայելովայ, և
 հաւասար ընդ նոսա աշխատէր՝ կատարելով զամե-
 նայն գործ : 'ի Հոլլանդիոյ Պետրոս դիմեաց յԱն-
 դղիա, ուր ևս առաւել կատարելագործեաց վիճն
 յարհեստի նաւաշինութիւն, և մեծաւ մտառութեամբ
 զննեաց զղինարանս, զտեղիս դրամահատութեան,

Կալէսպէս գործատունն : Թողեալ զԱնգղիա՝ Պետ-
 րոս դարձաւ 'ի Հոլլանդիա, և անտի ճանապար-
 հորդեաց 'ի Դրեզքեն, 'ի Ա Եննա. ուստի կամեցաւ
 գնալ յիտալիա : Բայց խռովութիւն ծագեալ 'ի
 Ռուսաստան, ստիպեաց զնա դառնալ 'ի Մոսկով :
 Այս աղմուկ շփոթի գործեցաւ նոյնպէս 'ի նետա-
 ձգաց : Մեծարանք՝ զոր ցուցանէր Պետրոս կանոնա-
 ւոր զօրաց իւրոց գեր քան զնոսա, խտացոյց զսիր-
 տըս նոցա հակառակ արքայիս և հակառակ ամենայն
 կարգաւորութեց նորա : Զորքին գունդք նետա-
 ձգաց՝ որ բանակեալ էին 'ի սահմանս Լիտվանիաց-
 ւոց, խաղացին 'ի Մոսկով սպառնալով բնաջինջ
 առնել զամենայն այլազգիս : Գորդոն՝ որ հրամանա-
 տար էր 'ի Մոսկով, նկուշ արար զնոսա : Պետրոս
 հրամայեաց ճիշտ խուզողութեամբ քննել զամենայն
 հանգամանս այսր մեծի գործոյ, և համարելով յայսմ
 վայրի զգթութիւն տկարութի, պատուէր ետ մահու
 մատնել զամենայն յանցաւորս : 'ի սմին ժամանակի
 զկին իւր զԵւդոկիա Ֆէոդորովնայ գտեալ հաղորդ-
 յայնմ գործողութե՝ արձակեաց զնա. նա ընծայե-
 ցաւ 'ի կարգ կրօնաւոր կանանց ընդ անուամբ Հե-
 ղինեայ : Խիստ 'ի գործս դատաստանի արդարութե,
 չէր ապերախտ առ այնոսիկ, որք հաւատարմութե
 ծառայէին նմա. 'ի վարձ փոխարինի նոցին երախ-
 տեաց, կարգեաց զնշան սրբոյն Անդրէի Առաքելոյ :
 Աղլվաղակի յետ այսորիկ հարաւ սիրտ Պետրոսի
 մեծաւ տրտմութե : Մահն յափշտակեաց 'ի նմանէ
 զարժանաւոր սիրելիս նորա՝ զԳորդոն և զԼ եփորտ : 1696—1699
 Բայս զայս՝ զգալի վասն Պետրոսի կորուստ փոխա-
 նակեաց անձամբ Մենշիկով՝ (Ալէքսանդր Դանի-
 ւովիչ) այլ անմոռանալի 'ի Պատմութե մերս հայ-

րենեաց, և՛ ըստ մեծամեծ երախտեաց, զոր եցոյց
 նմա, և՛ ըստ փոփոխութիւն վիճակին իւրոյ : Նպաս-
 տաւորեալ խոհականութիւն, եռանդեամբ և աշխա-
 տասիրութիւն Մենշիկովայ, Պետրոս վճռաբար ձեռն
 էարկ 'ի կրթութիւն ներքին վիճակի Ռուսաստանի :
 Արար փոփոխութիւն 'ի Պալատն արքունի, եբարձ
 զամենայն ծանրացուցիչ հին սովորութիւնս, և զամե-
 նայն աւելորդ շքեղութիւնս : Ընդ ամենայն տեղիս
 անձամբ տայր օրինակ խոնարհ կենցաղաւարութիւն, և
 ցուցանէր զցանկութիւն մերձ լինելոյ առ ժողովուրդն :
 արգել զխոնարհիւն առաջի իւր 'ի ծունկս, ինքնին
 կարգաւորէր զօգտակար արհեստս, ինքն ստորագրէր
 զգաշնագրութիւն և զթուղթս առ Միապետս այլոց
 Տէրութեց : Չօրք բազմապատկեցան և 'ի կարգ
 մուծան ըստ օրինակի Եւրոպական զօրաց, և 'ի սմին
 վայրի կրկին հրատարակեցաւ բարձունս ժառանգա-
 կալութիւն, և հաստատեցաւ հիմնել զամբարձումն
 յատրիճանս ոչ 'ի վսեմութիւն ծննդեան կամ տոհ-
 մի, այլ յերախտիս և յաւագութիւն 'ի ծառայու-
 թիւ : Արքունի մուտք յաւելան առանց ծանրաբեռ-
 նելոյ զժողովուրդն 'ի պատճառս մուծանելոյ 'ի
 կարգ զժողով հարկաց և յանձն առնելոյ զայն փոր-
 ձեալ 'ի հաւատարմութիւն անձանց : Պատուիրեցաւ,
 զի առ հասարակ ամենայն ազնուականք և պաշտօնա-
 կալք զգեցցին զհանդերձս ըստ օրինակի այլազգեաց,
 և սափրեսցեն զմօրունս, ամուսինքն և հարք ազատս
 կացուցեն զկանայս և զդստերս 'ի մշտնջենաւորն
 առտնին արգելանաց, զի կանանց՝ որք կրեն զհան-
 դերձս այլազգի՝ թոյլ տացի գնալ 'ի թատրոնս և
 'ի ժողով կաթաւչաց և այլն : 'ի սմին ժամանակի
 թոյլ տուաւ այլալգի արունց մտանել յամուսնու-

Թիւն ընդ կանանց Ռուսաց, և արանց Ռուսաց ի
այլադքի կանանց • պատուիրեցաւ, զի քահանայք ի
երկիւղիւ խիստ պատժոյ մի պատկենցեն առանց հա-
ւանութեան աղջկանն : Կամելով վերածել զՌուսս
յաստիճան կրթեալ ազգաց, Պետրոս յորդորէր
զաղնուականս Ռուսաց առաքել զորդիս իւրեանց
յայլ երկիրս, իսկ 'ի Ռուսաստան հնարս հնարէր
վասն կրթականութեան ազգին : 'ի Մոսկով շինաւ
տպարան և տպագրեցան զանազան մատեանք վերա-
բերեալք առ գիտութիւն Մաթեմատիկայի, Պատ-
մութե, Աշխարհագրութե, Նաւաշինութե, Նա-
ւագնացութե և այլոց : 'ի Մոսկով և յայլ քա-
ղաքս կառուցան ուսումնարանք : 'ի վերջ 1699 ամի
սկզբնաւորութի տարւոյն սահմանեցաւ հաշուել ոչ
'ի միոյ Սեպտեմբերի, որպէս հին մինչ ցայնայր,
այլ 'ի միոյ աւուրն Յունւարի : 'ի սմին ժամանակի
Պետրոս յետ մահու Պատրիարքին Ադրիանոսի կա-
մեցաւ բառնալ 'ի Ռուսաստան զՊատրիարքութիւն •
այսու պատճառաւ ոչ զոք ընտրեաց յաջորդ իշխա-
նութեան Ադրիանոսի, և հրամայեաց կացուցանել
զընկերութի 'ի հոգեւորական անձանց ընդ անուամբ
Սրբազան Ժողովոյ, և դնել 'ի վերայ նորա զկառա-
վարութի պաշտամանց Պատրիարքին : 'ի միջի այ-
սոցիկ ազգաօգուտ ճգանց իւրոց Պետրոս ետես ըզ-
նոր իմի գերապանծ սխրագործութիւն՝ որք փորձեալ
զանկշուելի արութի, զհամբերութիւն, զհանճար
և զսէր առ Ռուսաստան, պատկեցին զնա անմահա-
կան փառօք և հաստատեցին զզօրութի Ռուսաստա-
նի : Զայսու ժամանակօք յԱթոռն Շվեդաց նըս-
տեալ հր կարողոս Ժք. Պետրոս մտերմեար ցան-
կայր պահպանել ընդ նմա զկապ բարեկամութի •

Պապեպոս
Է Շվեդաց
1701—1721.

բայց սուկայն ատելութիւն Տէրութե Ըվէտաց (*) առ նա և զօրութի նորա՝ որ սպառնայր հիւսիսայինն Եւրոպայ զվտանդ, հաւաստի արարին զՊետրոս ՚ի հարկաւորութե՝ լինել պատրաստ ունելոյ զգէն ընդդէմ Ըվէտիոյ: ՚ի վերայ այսր ամենայնի չէր մտնէր Պետրոսի հանդարտահայեաց լինել, իմացեալ՝ թէ Ըվէտիա ժամ պատեհ համարեալ զխառն հանգամանս Ռուսաստանի ՚ի բաց կորզեաց ՚ի նմանէ ընդդէմ դաշինն Ստոլբովայ զհին կալուածս նորա՝ զերկիրս առ ավամբ Ծովակին Փիւնացոց: Դիտաւորութի յետս դարձուցանելոյ զայն տեղիս, ուր հնարաւոր լիցի նմա կառուցանել զնաւատորմիլ ՚ի վերայ ջրոց Բալթիկ ծովու և մուծանել զՌուսաստան ՚ի հաղորդակցութի ընդ արեւմտեան Եւրոպիոյ էին հանապազօրեայ մտածմունք նորա: Առ հասանելոյ այժմ հասնէր էր միայն զինու. ուստի պատերազմն ընդ մէջ Ռուսաստանի և Ըվէտիոյ էր անսկիւնչելի: Առ այս նպատակ թաղաւորն Լեհաց (կայսրընտիրն Սաքսոնիոյ Օգոստոս ք. և թաղաւորն Դանիոյ Փրիտերիկոս մտին ՚ի կապակցութի ընդ Ռուսաստանի: Առաջինն եղեալ էր ՚ի մտի միացուցանել ընդ Լեհաստանի զԼիֆլանտիա. իսկ երկրորդն խորհէր տիրել զքսութե Հոլստէյն - Հոտտորպու, որոյ իշ-

(*) ՚ի ժամանակի Ճանապարհորդութե իւր Պետրոս յօստար աշխարհ յանցանել իւրում ընդ Ռիգայ, (այս քաղաք էր յայնժամ ընդ Իշխանութք Ըվէտաց) յայտնապէս ետես զատելութի կառավարութե Ըվէտաց առ Ռուսաստան: Ոչ Պետրոսի և ոչ որոց ընդ նմա էին թոյլ առաւ տեսանել զքաղաքն, և Պետրոս ոչ այլազգ ել անտի, եթէ ոչ արկեալ զանձն իւր ՚ի ներքոյ մեծամեծ վտանգից:

խանն Փրիտերիկոս Դ. Էր աղգական Կարողոսի Ժք. ուստի պատերազմն՝ որ առաջի կայր Ռուսաստանի ընդ Շվեդիոյ, տարածեցաւ ընդ համայն հիւսիսային կողմունս, և այսու պատճառաւ ՚ի Պատմութիւն ունուանի հիւսիսային մեծ պատերազմն. զոր սկսաւ Դանիա յարձակմամբ յիշխանութիւն Հոլստէյն-Հոտտորպու, և ապա Լեհք մտին ասպատակութիւն ՚ի Լիփլանդիա : Գիտացեալ զայս Կարողոսի Ժք. վաղվաղակի կազմեաց զնաւատորմիլ և ժողովեաց զգօրս, մերձեցաւ առ Քոպենհագեն, և միով մարտիւ ստիպեաց զԴանիա առնել զհաշտութիւն ՚ի Թրալանտալ : Դանիա պարտաւորեցաւ չելանել ՚ի պատերազմն ընդդէմ Շվեդիոյ ՚ի դէմքեղեալ մարտին, և ոչ միտել զձեռս յիշխանութիւն Հոլստէյն-Հոտտորպու : ՚ի Դանիոյ Կարողոս Ժք. խաղաց ՚ի վերայ Լիփլանդիոյ : Համբաւ գալստեան նորա ստիպեաց զԼեհս թողուլ զպաշարուսն Ռիգայ : Յայնժամ Օգոստոս ք. խնդրեաց ՚ի Պետրոս Զօգնութիւն : Պետրոս յայտնեաց զպատերազմն Շվեդիոյ : Ձօրք Ռուսաց ընդ առաջնորդութիւն Միապետի իսկ իւրեանց և զօրագլխաց նորա, Տրուբեցկոյի, Բուտուրլինի, Աեյտի, Գոլովինի և այլոց մտին յինգերմանլանդիա. և սկիզբն առին պաշարման Նարվայի :

1701.

Պետրոս հարկաւոր համարեալ տեսութիւն առնելոյ ընդ Օգոստեայ, յանձն արար զգլխաւոր իշխանութիւն զօրաց Դիւկ դե Կրուայ, և ինքն գնաց ՚ի Լեհաստան : Կարողոս ուղղեաց զչուիւր ՚ի Նարվայ : Սկսաւ պատերազմն, և ՚ի քառորդ ժամու վիճակ նորա վճռեալ եղև : 8,000 ՚ի զօրաց Շվեդաց հարին 438 հազար զօրս Ռուսաց. և չեն ինչ զարմանք. ըստ

որում զօրք **Ը**վէտաց էին հմուտք 'ի գործս պատերազմի, և ընտելք 'ի յաղթութիւն. իսկ գունդն Ռուսաց կացուցեալ ըստ մեծի մասին 'ի նորընտիր զօրականաց: Համբաւ զայսմանէ ոչ թալկացոյց զքաջութիւն սրտի Միսայելի Ռուսաց: Յետ պատերազմին Նարայի. Կարոլոս ժք. դիմեաց 'ի **Լ**եհս եղեալ 'ի մտի ընկենուլ **յ**Աթուոյ զՕգոստոս ք. և նստուցանել զՍտանիսլավ **Լ**եշչինսկի: Ժամբարեպատն համարեալ Պետրոսի, իսկոյն լրացոյց զթիւ զօրաց իւրոց և ետնոցա զթնդանօթս: **Ը**երմեւտով եմուտ 'ի **Լ**իֆլանդիա և տիրեաց անդ բազում քաղաքաց. յառմանն Մարիենբուրգայ վարեցաւ 'ի գերութիւն մանկամարդ օրիորդ, որ յետ ընդունելոյ զուղղափառ հաւատս, անուանեցաւ Կատարինէ **Լ**էքսիովնայ և եղև կին Պետրոսի ւ. և Կայսրուհի Ռուսաց (*): 'ի սմին ժամանակի Պետրոս տիրեաց Նոտենբուրգայ (**Ը**լիսելբուրգ) և առ գետովն Նեվայի եդ զհիմն **Ս**. Պետերբուրգայ. և առ 'ի պատասպարել զայն յարշաւանաց **Ը**վէտաց կառոյց 'ի կղզին մերձ **Ծ**ովակին **Փ**իւնացւոց զամբոցս Կրոնսլոտ և Կրոնշտատ: Մինչդեռ Պետրոս յայսպիսի իրս պատաղեալ էր, Ռուսք տիրեցին Նարվայի և զոյգ ընդ նմա բովանդակ ինգերմանլանդիոյ: Յայնժամ ծանեաւ Կարոլոս ժք. զլտանգն՝ որ սպառնայր **Ը**վէտիոյ: Բռնադատեալ զՕգոստոս ք. հրաժարիլ **յ**Աթուոյ **Լ**եհաց, ուղղեաց զգէն

16 Մայիս
1703.

(*) Պետրոս ւ. պսակեցաւ ընդ Կատարինէ **Լ**էքսիովնայի 'ի 1707 ամի. 'ի 6 մարտի 'ի 1711 հանդիսիւ հրատարակեաց զնա կին իւր, իսկ 'ի 1724 ամի անուանեաց Կայսրուհի և Թագ կապեաց:

իւր 'ի խորս Ռուսաստանի, և յուսացեալ յօգնականութի Գեթմանի (գլուխ կոմ առաջնորդ) անձնատուր եղելոյ ինքեան, Մալոռուսսիոյ խաղախաց Մաղեպի՝ յարձակեցաւ 'ի Մալոռուսսիա: Գերապանձ յաղթութի արարեալ Պետրոսի օ. 'ի վերայ 27 Սեպտեմբ. 1708. զօրսպետի Շվէտաց Լեվենգաուպոյի 'ի Լեանի (*) անուանեալ տեղոջ, գուշակեաց Շվէտաց զկորուստ 'ի Մալոռուսսիա: Պետրոս զհետ պնդեցաւ Կարոլուսի ժք. մարտ ետ ընդ նմա առ Պօլտավայի և 27 Յունիս 1709. յաղթութի մեծ և անմոռանալի վասն Ռուսաստանի գործեաց 'ի վերայ նորա: Փառք և մեծութիւն Ռուսաստանի հաստատեցաւ. զօրութիւն Շվէտիոյ մերձ եղև 'ի կործանումն: Յայտմանէ հետեւեցաւ, զի Դանիա յայտնեաց զհաշտութիւն Տրալանդալուան վաւեր. Կայսրընտիրն Սաքսոնիոյ Օգոստոս ք. կրկին բաղմեցաւ 'ի Գահ Լեհաց. իսկ Պետրոս տիրեաց բովանդակ Լիթվանդիոյ: Յետ պատերազմին Պօլտավայի, Կարոլուս ժք. փախստեամբ գնաց 'ի Մուտալիա, և ապաստան եղև 'ի պաշտպանութիւն Տաճկաստանի, որ ըստ յորդորանաց նորա յայտնեաց Ռուսաստանի զպատերազմն: Ակնկալութի՝ զոր Կարոլուս ժք. հիմնեաց յայտմ մարտի, յանհարինս խաբեաց զնա. վասն զի յայնմ ժամանակի, յորում Պետրոս օ. հանդերձ զօրօք իւրովք պաշարեալ էր առ Պրուտ գետովն 'ի բազմաթիւ զօրաց Տաճկաց, և 'ի մեծի վտանգի կայր, և զոյգ ընդ նմա համայն Ռուսաստան, Կատարինէ Ալէքսիովնայ ազատեաց զամուսին իւր զքաջն Պետրոս՝ և զՌուսաստան յայնմ վտանգէ (**): Զանիւք նորա Տաճիկք եղին

(*) Յայտման նահանգս Մաղիլովայ մերձ 'ի Պրոպոյսկ:

(**) 'ի յիշատակ այսր երախտեաց, զոր եցոյց Կատարինէ

զգաշն խաղաղութե ընդ Ռուսաց . ըստ զօրութե
որոյ Պետրոս հաճեցաւ դարձուցանել նոցա զԱզով
և զկառուցեալն առ ափն Ազով ծովու զամրոցն Թա-
ղանրոգի կործանել : Զէր օգտակար վասն Ռուսաս-
տանի այս հաշտութի . սակայն ըստ հանգամանաց
Ժամանակին , հարկ էր նմա համարել զայն ինքեան
մեծ բարեբաղդութիւն :

Զկորուստ Ազովայ և զոյդ ընդ նմա տիրակա-
լութի իւրոյ 'ի վերայ Ծովուն Ազովայ , Պետրոս
փոխանակեաց երկրակալութի 'ի Հիւսիս : Աստա-
նօր անդադար շարունակէր մարտն . Սաքսոնք և
Դանեցիք մտին 'ի Պոմերանիա Շվեդաց . Արքայն
Պոլսաց , Փրիտերիկոս Ալեքեմ . Թապցոյ ըզ-
գորս իւր ընդ զօրաց Ռուսաց և Լեհաց : Ռուսք
միջամուխ եղեն մինչև ցամրոցն Հոլստէյն - Հոտտոր-
պու Տեննինգենի : Եւ քանզի Դանիա զքաղաքս ա-
ռեալս 'ի Շվեդաց գհրեմին և զԱլեքեմ դարձոց
Անգղիացւոց յաղագս միաւորելոյ զայնս ընդ նահան-
գին Հաննովերայ , իսկ Շվեդիա ոչ համայձայնէր
ընդ այն . ուստի և Արքայն Անգղիացւոց իբրու
Այսրընտիր Հաննովերայ հաղորդ գտաւ 'ի հիւսի-
սային պատերազմի : Կարոլոս ԺԷ . թողեալ զՄոլ-
տավիա և շուտափութութե անցեալ ք բոլոր Իւրո-
պա եկն 'ի Ստրազդունդ : 'ի նեղ անկեալ անդ ,
եկն հուսկ տպա 'ի Շվեդիա : Մտերիմ նորա Հերձ,
Նախարարն դրան Հոլստէյն - Հոտտորպու խորհուրդ
եռ նմա խօսիլ զհաշտութի ընդ Պետրոսի Թ . Յայնմ
Ժամանակի , յորում սկզբնաւորեալ էր զայսմ առ-
արկայէ դաշնախօսութիւն , Կարոլոս ԺԷ . 'ի պատե-

Ռուսաստանի՝ Պետրոս Թ . սահմանեաց զնշան սրբոյն Կա-
տարինէին 'ի 21 նոյեմբերի 1714 ամի :

րազմին ընդ Դանից սպանուալ ՚ի Նորվեգիա միւրձ
 ՚ի քաղաքն Փրիդրիքսդալ : Կառաւարուին Շվետաց
 ՚ի մահ դատապարտեաց զՀերձ . և արարեալ զհաշ-
 տութի ընդ Անգղիոյ, Պոլսոսիոյ և Դանիոյ, իօկ
 ընդ Լեհաստանի տուեալ զդադարդումս մարտի՝
 դարձոց զբուլանդակ զօրութի իւր ընդդէմ Ռու-
 սաստանի : Պետրոս ոչ ինչ երկեալ յայնմանէ և
 շարունակեալ անձանձոյթ զպատերազմս ցայնւոյր
 հասոց զՇվետիա, մինչև խօսեցան զհաշտութիւն
 ընդ նմա : Ըստ զօրութի որոյ՝ եղելոյ ՚ի Նիշտատ
 (՚ի Ֆինլանդիա) Ռուսաստան ստացաւ զԼիֆլան. 50 Օգոստ.
 դիա, զԼյուլանդիա, զինգերմանլանդիա, զԿարելիա, 1725.
 զմասն ինչ ՚ի Ֆինլանդիոյ ընդ Ալեքորգ քաղաքին
 և զԿլգլիս՝ որք ենն ՚ի խորշա Ծովակին Փիււեացւոց,
 զԼյուլլ, զԴագօ և զայլս : Ասան այսպիսի սխրագոր-
 ծութի իւրոյ՝ Պետրոս հաճեցաւ ընդունել զառա-
 ջարկեալն նմա ՚ի դիմաց համայն Ռուսաստանի ըզ-
 Տիտղոս Մեծ Կայսր կամ Իմպերատոր և Հայր հայ-
 րենեայ : ՚ի Ժամանակս պատերազմին ընդ Շվետաց
 Պետրոս անդադար հանապազորդէր զսկսեալն գե-
 րապանծ գործ կրթութի Ռուսաստանի : Ճիգն՝ զօր
 դնէր ՚ի շինութի Ս. Պետերբուրգայ, եցոց զան-
 շուշտ նորին դիտաւորութի տիրակալելոյ ՚ի վերայ
 Բալտիգական Ծովու, և բանալ Ռուսաստանի զա-
 նարգել և զբարեյաջող հաղորդակցութի ընդ արեւ-
 մտեան Տէրութեց Եւրոպիոյ : Նաւաշինութին ՚ի
 Ս. Պետերբուրգ անդադար գործիւր . գիտութիք,
 ճարտարապետութիք, հողագործութի և վաճառակա-
 նութինն քաջալէրէին : Լ. զ ՚ի կառավարել զամե-
 նայն զինուորական, զքաղաքական և զեկեղեցական
 գործս հաստատեցաւ Սինկղիտոս, սրբազան Սիւնհո-

դոս և Ատեանք : Ամենայն բերաւ 'ի շարժումս և
 յառաջ մղիւր 'ի կատարելագործութի . վասն զի
 առաջնորդիւր բարերար կամօք և հանճարով Պետ-
 րոսի, կենագործեալ եռանդազին սիրով առ Ռու-
 սաստան : Առ 'ի զօրացուցանել զներքին վաճառա-
 կանութիւնն Ռուսաստանի, Պետրոս միացոյց զճովն
 Բալդիգ ընդ Ասսպից ծովուն 'ի ձեռն Ա իշնեւորոյ-
 կի Ատակին, և 'ի մտի եդ միաւորել զգետն Առ-
 խով ընդ Նեւայի 'ի ձեռն Լադոգայ Ատակին .
 իսկ յաղագս տարածելոյ զՌուսաւորութիւն 'ի մէջ
 1724. հպատակաց իւրոց հիմնեաց 'ի Ս. Պետերբուրգ ըզ-
 Ճեմարան գիտութեանց : Խռովութիւն ծագեալ 'ի
 Պարսկաստան, յորում վայրի բազումք 'ի վաճառա-
 կանաց Ռուսաց՝ որք բնակէին յայնմ Տէրութեան,
 սպանան, ստիպեաց զՊետրոս ւն . խաղալ զօրօք
 անդր : Նատիրեաց Տերբենդու : Պարսկաստան ըզ-
 դաշն խաղաղութե հաստատեաց ընդ Ռուսաստանի,
 տուեալ նմա զմասն երկրի իւրոյ առ ափամբ Աս-
 պից ծովու : Դարձ արարեալ Պետրոսի 'ի Ս. Պե-
 տերբուրգ, զգաց յանձին իւրում զտկարութի, և
 կամուով ազատել յաւուր միում զմարդիկ 'ի ջրա-
 հեղձոյց լինելոյ 'ի Ծովակին Փիւնացւոց 'ի գեղջն
 Լախտի (մերձ 'ի Ս. Պետերբուրգ) հիւանդացաւ :
 Այս դիպուած փութացոյց զմահ նորա, որ եհատ
 զմեծագին աւուրս վասն Ռուսաստանի այսր Միսպե-
 տի 'ի 53 ամեայ հասակի կենաց նորա :

Բոյս բարուց Պետրոսի ւն:

Բոյս բարուց Պետրոսի ւն. տեսանի 'ի գործս նո-
րա: Սա 'ի բովանդակ Տէրութիւն իւրում եղև ա-
ռաջին զօրագլուխ, առաջին օրէնսդիր, առաջին նա-
ւորդ, առաջին սկսանող և կատարիչ ամենայն աղ-
գասօգուտ գործոց: Գոլով ինքնիշխան Միապետ
ունէր զմաքուր և զեռանդագին սէր առ իւր հաւա-
տակս. բնակէր 'ի միջի նոցա իբրու խիստ արդա-
րադատ և միանգամայն բարի և քնքուշ հայր 'ի
մէջ զաւակաց իւրոց: Անկեղծութիւն, մտերմութիւն,
քաղցրութիւն և սիրելութիւն 'ի կենցաղավարութեան
էին յատկութիւնք նորին բնաւորութեան. մի միայն
յանցաւորք օրինաց երկնչէին 'ի Թագաւորէս, և
կարի իսկ յերաւունս. վասն զի ինքն գոլով ճիշտ
օրինապահ, իրաւամբ էր անողոքելի 'ի գործս ար-
դարութիւն. և յայսպիսի դիպուածս ոչ զոք խնա-
յէր: Իսկ հանճար, անբծութիւն, աշխատասիրութիւն,
անշահախնդրութիւն և ամենայն առաքինութիւնք գտա-
նէին 'ի նմա զբարձրագոյն պաշտպան, զհովանաւոր
և զմտերիմ բարեկամ: Առ 'ի շարժել յամենեսին
զնախանձ առ պաշտօն արքունի, պատուեաց զկո-
չումն սոսկցինուրականի իւրով ծառայութեամբ 'ի
գնդին Լեփորտի, և վերացոյց յաստիճան փառաց
և բարձրագոյն պաշտամանց զարս յատկացեալս բնա-
կան ձրիւք և առաքինութիւն, ոչ հայելով 'ի ծա-
գումն ազգի նոցա: 'ի ժողովն օգոստոսփառ ընտա-
նեաց իւրոց անձամբ ցուցանէր զօրինակ ընտանե-
կան առաքինութեաց, և կաթողին սիրով սերէր զտ-
մուսին իւր և զզաւակունս: Իբրև ճիշտ տնտես
Տէրութիւն տարածէր զխնայութիւն 'ի վերայ չնչին


ևս իրաց • խստութիւն քննէր զընթացս ի կենցաղաւորութիւն իւրոց հպատակաց • պատժէր զարս վատնիչս և զստացողս հարստութեց անիրաւ միջոցօք : Աշխատուի նիւ էր անդուլ • յօրինեաց զըզմ օրէնսդրուիւ և զկանոնս , յորոց բազումք և ցայսօր ժամանակի ունին զըսկանդակ վօրութիւն իւրեանց • ունէր ըզթղթակցութիւն ընդ Տէրութեց այլոց • մարզէր ըզդօրս իւր • գրեթէ յամենայն աւուր գտանէր ՚ի Սինդղիտոսի և յԱտենի ծովակալութեան • հասու լինէր շինութիւն նաւուց , այց աւնէր ուսումնարանաց , անկեղանոցաց , գործարանաց և առ հասարակ ամենայն արուեստականաց • պատաղեալ էր զշինութիւն Ս • Պետերբուրգայ • ժողովէր զհայրենի ժամանակագրութիւնս • կացուցանէր զՄատենարան և զԴասչիճհին դրամոց • ՚ի կարգ ածէր զՊատկերս և զնաւան Քաբինեթն • պարսպէր յարուեստ վերաբուժական և ճախարագործի , յորում ոչ ոք գտաւ նմա համեմատ • յուսումն լեզուին Գերմանացոց • յընթերցմունս լատին հեղինակաց , ՚ի սրբագրութիւնս թարգմանութեց դպրոցական մատենից յայլադգի լեզուաց ՚ի Ռուսաց բարբառ : Ժամանակակիցք և յետագայք ետուն Պետրոսի Թ • զմականունս Մեծ ըստ ամենայն իրաւանց • վասն զի Պետրոս Թ • ստացաւ զայն անուանակոչութիւն իւրով գործովք , որ եդին զհաստատուն հիմն մեծութիւն և փառաւորութիւն Ռուսաստանի :

Թագաւորութիւն Կայսրուհւոյն Կատարինէի Թ :

1725—1727=2.

Պետրոսի Թ • յաջորդեաց զուգակից նորա Կատարինէ Թ • Ալէքսիոսայ , և եցոյց զանձն արժանաժա-

ռանգ իշխանութի մեծի առն իւրոյ 'ի կատար հաս-
տուցանելով զամենայն դիտաւորութիւնորա : Հաս-
տատեաց զծայրագոյն խորհրդարան, եբաց հանդի-
սիւ զկառուցեալն 'ի Ս. Պետերբուրգ 'ի Պետրոսէ
ւմ. զՃեմարան դիտութեց. հաստատեաց զպատուա-
նշան սրբոյն Աղէքսանդրի Նեւսկւոյ՝ սահմանեալ
'ի Պետրոսէ ւմ. արար զհաստատուն դաշնադրութի
ընդ Աւստրիոյ, և ընդ Սինէացիս հաստատեաց ըզ-
դաշն վաճառաշահութի. բազմացոյց զնաւատոր-
միլն և զցամաքային զօրս Ռուսաստանի. և հուսկ
ապա խորհելով զգարութե և զանդորրութե Ռու-
սաստանի 'ի լոյս Կաթ զկարգադրութի յաղագս Ժա-
ռանգութի Աթոռոյ ամենայն Ռուսաց : Ըստ այսմ
կարգադրուե մերձաւորագոյն Ժառանգ հրատարակե-
ցաւ թոռն Պետրոսի ւմ. Պետրոս՝ որդի արքայորդ-
ւոյն Ալէքսեայ, որ ծնեալն էր յառաջին կնոջ
Պետրոսի ւմ. յԵւդոկեայ Ֆէոդորովայէ : Յետ եր-
կամեայ թաղաւորութի Սատարինէ ւմ. վախճանե-
ցաւ 'ի 45 ամեայ հասակի կենաց իւրոց : Սա շա-
հեցաւ զսէր Ռուսաց և զյարգութի բովանդակ Եւ-
րոպիոյ. վասն զի եցոյց յինքեան զամենագեղեցիկ
գաղափար ամենայն բարձրագոյն առաքինութեց :



Թագաւորութիւն Պետրոսի ք. Ալէքսեյեւիչի :

1727—1750=5.

Յամենայն գերազանց յատկութիւն մտաց և սրտի
Սատարինէի ւմ. Ռուսաստան զդաց զկորուստ Պե-
րոսի ւմ. յայն սակս, զի յետ վախճանի նորա կեր-
պաւորեցան երկու զօրաւոր կողմունք Մենշիկովայ
և Դոլզորուկեանց : Թէպետ և Սատարինէ ւմ. թա-

քաւորեաց իբրու թէ ոչ ինչ նշմարեալ զայնմանէ,
 որով և պահպանեաց ՚ի Պալատան իւրում զհամա-
 ձայնութիւն և ընդ բովանդակ Ռուսաստան զանդոր-
 րութիւն. առկայն յետ վախճանի նորա այս կողմունք
 սկսան սաստիկս ներգործել. վասն զի ՚ի Գահ Ռու-
 սաց բազմեցաւ մետասանամեայ Պետրոս ք. Աւէք-
 սէյովիւն. որ ՚ի պատճառս մանկական հասակին ոչ
 կարաց ցուցանել յանձին զներգործութիւն իշխանուի
 ինքնակալի, և սանձահարել զփառամոլութիւն իշխա-
 նաց, որք զիւրեւ էին: Մենշիկով ինքեան սեպհա-
 կանեաց զբովանդակ իշխանութիւն ՚ի խորհրդարա-
 նի. որոշեաց մանկահասակ կայսերն զբնակութիւն
 յիւրում տան. նշանախօսեաց նմա զգուստրն իւր
 Մարիա. և երեւէր հասեալ ՚ի ծայր բարեբաղդուն
 և իշխանութիւն. բայց սակայն մեծամտութիւն և փա-
 ռամոլութիւն կորուսին զնա: Ատելի եղև Կայսերն.
 զըկեցաւ յամենայն փառաց և առաքեցաւ ՚ի Սիբիր,
 և ՚ի Բերեզով վախճանեաց զկեանս իւր: Կայսրն
 դեռահասակ կրկին նշանեցաւ ընդ իշխանուհւոյն
 Կատարինէ Աւէքսիովնայի Դոլղորուկով: Հակառա-
 կորդք Մենշիկովայ՝ Դոլղորուկեանք վեհ հանդի-
 սացան. բայց ոչ ընդ երկար. կայսրն հիւանդացաւ,
 և մեռաւ ամաց տասն և հսկից ՚ի տրամութիւն ամե-
 նայն Ռուսաց, որք անուանէին զնա ակնկալութիւն
 իւրեանց: Յաւուրս արքայութեան դէր հաստատե-
 ցան առևտրական և ընդհանրապէս բարեկամական
 հաղորդակցութիւն Ռուսաստանի ընդ Սինէացիս:
 ՚ի սմին ժամանակի Լէւոպա պատաղեալ էր զհարց-
 մամբ՝ թէ յիրաւի՞ իցէ այն, զի Ասիա բաժանի
 յԱմերիկոյ նեղուցիւ, ընդ որ՝ ուպէս ՚ի վերոյ առա-
 ցաւ, էանց ոմն Սիմոն Դեշնով՝ ՚ի ժամանակի թա-

գաւորութիւն Լիքքօէյ Միքայելովելի : Յաղագս որոշելոյ զայս հարցումն Պետրոս Թ. կարգեաց զքննիչս, որք 'ի ժամանակս Պետրոսի Թ. կատարեցին զեղեալն 'ի վերայ իւրեանց զսարտաւորութիւն : Կապիտան Բերինգ հանց ըստ հետոց Դեշնուլայ և անուանեաց ըղնեղուցն՝ որ բաժանէ զԼսիա յԼմերիկոյ ըստ իւրում անուան Բերինգեան :

Թագաւորութիւն Կայսրուհւոյն Աննայի Թ. Իվանովնայի :
1730—1740=10.

Յետ մահու Պետրոսի Թ. ծայրագոյն խորհրդարանն վճռեաց նստուցանել 'ի Քաճ ամենայն Ռուսաց զգուտորն եղբօր Պետրոսի Թ. Թագաւորին Յովհաննու Լիքքօէյովելի զայրի իշխանուհին Կուրլեանդիոյ զԱննա : Յայսմ նուագի Դոլղորուկեանք առաջարկեցին սահմանել զկանոնս առ չափաւորելոյ զիշխանութիւն ընտրեալ Կայսրուհւոյն. սակայն Եկեղեցականք, աղնուականք, զօրք և ժողովուրդն հակառակ կացին այնմ. յորմէ հետեւեցաւ կործանումն Դոլղորուկեանց : Ընկալեալ զմիահեծան իշխանութիւնն Կայսրոյն առ Դրան իւր զառանձին խորհրդարան, զոր անուանեաց Քաթինէն. յորում գլխաւորք էին արք արժանաւորք՝ վատակակիցք 'ի մեծամեծ գործս Պետրոսի Թ. Մինիխ, Օստերման և այլք : Աննա եղբ. դաշն ընդ Պարսից և դարձոյց նոցա ըղտիրակալեալ 'ի Պետրոսէ զերկիրս. իսկ զիսխորէնն Պարսիկք թողլ ետուն Ռուսաց ունել զազատ նաւազնացումիւ 'ի վերայ Կասպից ծովու և առնել զվաճառաշահութիւն 'ի Տէրութիւն իւրեանց : 'ի սմին

- Ժամանակի մեռաւ Արքայն Լեհաց Օգոստոս ք. ՚ի պատճառս ընտրելոյ նմա զԺառանգ՝ գոյացան ՚ի Լեհաստան երկու գլխաւոր կողմունք. մին ՚ի նոցանէ կամէր նստուցանել ՚ի Գաճ Լեհաց զՕգոստոս՝ զկայսրընտիրն Սաքսոնիոյ. իսկ միւսն զՍտանիսլաւ Լեշչինսկի։ Աննա և դաշնակից նորա կայսրն Գերմանացոց կարողութեամբ կալան զկողմն առաջնոյն։ Առ ՚ի պահպանել զիրաւունս նորա ՚ի Գաճն Լեհաց, զօրք Ռուսաց խաղացին ՚ի Լեհաստան ընդ առաջնորդութեմ Լաստիայ, ՚ի տեղի որոյ ընդ փոյթ կարգեցաւ Մինիխ։ Այս զօրապետ պաշարեաց զԴանձիգ. ուր գտանէր Լեշչինսկի։ Դանձիգ առաւ, և Լեշչինսկի փախստեամբ ապրեցաւ. Օգոստոս ք. նստաւ յԱթոռ Լեհաց։ Յետ այսորիկ 10,000 ՚ի զնդէ Ռուսաց խաղացին ՚ի Լէյն յօգնութի կայսերն կարողութեամբ։ Նոքա ՚ի զարմանս ածին զԵւրոպա զինուորական կարգաւ և բազումս օգնեցին հաշտութեան Աննայի. ըստ այնմ ՚ի մէջ այլ բանից, կողմն Լեշչինսկեոց հաւանեցաւ ընդունել թագաւոր Լեհաց զկայսրընտիրն Սաքսոնիոյ զՕգոստոս ք.։ Գաղղիա կամեցաւ նստուցանել յԱթոռն Լեհաց զԼեշչինսկի. բայց տեսեալ՝ թէ չի՞ք այնմ հնար գրգռեաց զՏաճկաստան ՚ի պատերազմ ընդդէմ Ռուսաստանի. որով առաւել ևս փառաւորեցաւ Ռուսաստան։ Մինիխ տիրեաց Պերեկոպսկի գծից (*) և Օչակովայ. արար զփառաւոր յաղթութի ՚ի գիւղն Ստավուլին։ Զօրք Ռուսաց առին զամբոցն խոտին և մտին ՚ի Մոլդավիա։ ՚ի սմին ժա-

(*) Պերեկոպսկի գիծը անուանէին խորին վիհք և ամուրք՝ կառուցեալ ՚ի Տաճկաց. ՚ի Ռաւրիդեան կիրճս ընդ մէջ Սեաւ և Ազով ծովու։

մանակի զօրագլուխն Լաստի տիրեաց Ազովայ. դաշ-
նաւորք Ռուսաց Աւստրիացիք չեղեն նոյնպէս բա-
րեբաղդ յայսմ մարտի : Հարուածեալ նոցա՝ արա-
րին զհաշտութի ՚ի Բելգրադ ընդ Տաճկաց, առ-
որ և Ռուսաստան վճռեաց մերձենալ, պահեալ առ-
իւր զԱզով և զմասն երկրին, որ սահմանակից էր
Ղրիմու : ՚ի ժամանակի թագաւորութե Աննայի ՚ի
վերջ հասուցաւ վտակն Լադոգայի՝ սկսեալն ՚ի
Պետրոսէ Թ. հաստատեցան այլ ևս երկու խումբք
Գլարդիա անուանեալ զօրաց իզմայելովսի և Կոն-
նի : Հիմնեցաւ ՚ի Ս. Պետերբուրգ խումբն Քատե-
տաց. որ այժմ անուանի առաջին խումբ Քատե-
տաց : ՚ի հանքս Քուրիլանայ և Կատարինբուրգայ
բացաւ հանք ոսկեայ : ՚ի սմին ժամանակի նաւորդք
Ռուսաց Բերինգ, Շպանբերգ և Չիրիկով արարին
զծովագնացուի ընդ Ծովն Սառնամանեայ. և նկա-
րադրեցին զԱզով Կուրեւեան և Ալէքսեան և ա-
ներկբայ հաստատեցին զբաժանումն Ասիոյ յԱմե-
րիկոյ Բերինգեան Նեղուցիւ :



Վառավարութիւն Ռուսաստանի Իշխա- նուհւոյն Աննայի :

Յայնմ ժամանակի, յորում Հվէտք ՚ի մտի ե-
դեալ էին յայտնել Ռուսաստանի զպատերազմ, ալ ըն-
կալութք դարձուցանելոյ յետս զամենայն երկիրս՝
որք թոյլ տուեալ էին Պետրոսի Թ. ըստ հաշտուի
Նիշտադու, Թագուհին Աննա վախճանեցաւ : Առ-
մահուամբ իւրով հրատարակեաց ժառանգ զթոռն
իւր զմանուկն Յովհաննէս՝ զորդի քեռդատեր իւր

Աննայի և առն նորա Անտոնի Դքսին Բրաունշվից-
գայ : Կառավարիչ Ռուսաստանի՝ ցհասանել յար-
բունս հասակի մանկահասակ Կայսերն՝ կարգեցաւ
Բիրոն, Դուքսն Կուրլեանդիոյ : Բայց ոչ անագան
Բիրոն գործակցութեամբ Մինիխի զրկեցաւ յիւրմէ
բարձրագոյն կոչմանէ և առաքեցաւ ՚ի Պելիմ (*):
Չկառավարութի Ռուսաստանի ընկալաւ մայր Կայ-
սերն Դքսուհին Աննա : Սա գոլով հեղ, բարեմիտ
յոյժ երկչոտ և տատան՝ ոչ կարաց միահեծան տի-
րապետութե կառավարել զՌուսաստան : Այսու
պատճառաւ առ Դրան Կայսերն կայացան զանազան
կողմունք : Մինիխ և Օստերման ատէին զմիմանս :
Կարողութի Մինիխայ զարհուրեցուցանէր զխնամա-
պետուհին. վասն որոյ և հեռացոյց զնա ՚ի Դրանէ :

1741.

՚ի միջի այսոցիկ Շվեդք սկիզբն առին զլինուորա-
կան ներգործութեց. Չօրագլուխն Լասսի ետ նո-
ցա զսաստիկ հարուածս մերձ ՚ի Ալեմանշտրանդ :
Սովին դիպուածով վախճան հառ երկբայական թա-
գաւորութի Կայսերն Յովհաննու : Բազումք ՚ի Ռու-
սաց չէին բաւական տեսանելով ՚ի Գահ Ռուսաց
զմանուկ՝ զորդի այլազգի Դքսի, մինչ Եղիսաբեթ
գոլստը Պետրոսի Թ. որոյ յիշատակ սուրբ էր ամե-
նեցուն, ունէր զմերձաւորագոյն իրաւունս առ Գահն
Ռուսաց, յորմէ իբրու թէ հրաժարեցուցեալ էր
խալառ : Եղիսաբեթ չէր փառամոլ, և սիրէր զա-
ռանձնական կեանս. վասն որոյ և ոչ ՚ի միտ բերէր
զճայրագոյն իշխանութիւն. սակայն բաղումք հաւա-
նեցուցին զնա, որք կաթողին եռանդեամբ լի էին
առ Տունն Պետրոսի : Եղիսաբեթ հաճեցաւ բազմիւ

(*) Բազաբ յոյժման նահանգս Պերմի :

յԱթոռ հօրն իւրոյ: Մանկահասակ Կայսրն Յովհաննէս և ծնողք նորին պահեցան • Օտերման առաքեցաւ 'ի Բերեզով • իսկ Մինիս 'ի Պելիմ • ուստի հրամայեցաւ դարձուցանել զԲիրոն յԵարոսլավ: Եւս փոփոխութի եղև 'ի 25 նոյեմբերի 1741 ամի:

Ռազաւորութիւն Կայսրուհւոյն Եղիսաբեթի Պետրովնայի
1741—1761=20.

Կայսրուհին Եղիսաբեթ Պետրովնայ վեհ հանդիսացոյց զԹազաւորութի իւր հեզութիւն, իմաստութիւն, բարեբարութիւն և բարեյաջող յառաջադիմութիւն զինու Ռուսաց: Ավետք սկսան հանապազորդել ըզպատերազմի ընդ Ռուսաստանի 'ի վնաս իսկ իւրեանց • քանզի զօրք Ռուսաց ամենայն ուրեք հարուածս հասուցանէին նոցա: Հուսկ յետոյ արարին զհաշտութիւն 1743.
յԱբո. Ավետք ետուն Ռուսաստանի զմասն Ֆինլեանդիոյ ցգետն Կիւմեն: 'իմտի եդեալ մնալ միշտ 'ի կուսական վիճակի, Եղիսաբեթ հրատարակեաց ժառանգ զքեռորդի իւր՝ զՊետրոս Կարոլոս Ուլրիխ՝ ծնեալ յԱննայէ Պետրովնայէ 'ի Դքսուհւոյն Հոլտէյն-Հոտտորպու: Նա եկն 'ի Ռուսաստան, ընկալաւ զուղղափառ հաւատս և անուանեցաւ Պետրոս Ֆեոդորովիչ: Կայսրուհին ամուսնացոյց զնա ը իշխանուհւոյն Լնհալտ-Յերբստու, որ ընկալեալ զՅոյն-Ռուսաց դաւանութիւն՝ անուանեցաւ Կստաւրինէ Լէքսիովնայ: Եւսմ այսպէս եղելոյ՝ գրգռեցաւ պատերազմի մեծ յԵւրոպա, որ յայտնի է 'ի պատմագիրս ընդ անուամբ Եօթնամեան: Ատրժառիթ նորա էին վեճք՝ ծագեալ յԱմերիկա ընդ միջ

1756.

- Գաղղիացւոց և Անգղիացւոց վասն Գաղթականաց,
 և դիտաւորութիւն Ալստրիոյ՝ որ սեպհականեւ կա-
 մէր զՍիւելիա, յառաջ քան զայս տուեալն արքա-
 յին Պառուսաց Փրիտերիկոսի ը: Եղիսաբէթ կամե-
 ցաւ օժանդակ լինել այսմ դիտաւորութիւն Ալստրիոյ
 և յղեաց առ Սայսրուհին Մարիա Թերեզիա զօգ-
 նական զօրս ընդ առաջնորդութիւն Ապրակսինայ :
 Սոքա մտին 'ի Պառուսիա. և արարին զյաղթութիւն
 1757. 'ի վերայ զօրաց Պառուսաց 'ի Հռոս-Լչերնսդորփ: 'ի
 միւսում նուազի Ռուսք արշաւեցին 'ի Պառուսիա
 ընդ առաջնորդութիւն Ֆերմորի. որք տիրեցին Քե-
 նիգսբերգու և կործանեցին զամրոցն Պեստրին. իսկ
 1758. յետ սպառերազմին 'ի Յորնդորփ, Ֆերմոր՝ որ ան-
 ձին սեպհականեալ էր զյաղթութիւն, պարտաւորե-
 ցաւ տեղի տալ : Երրորդ չու Ռուսաց 'ի Պառուսիա
 եղև ընդ առաջնորդութիւն Սալտիկովայ, և յայն-
 ժամ զօրք Ռուսաց դործեցին զվճռաբար յաղթութիւն
 1759. 'ի վերայ զօրաց Պառուսաց 'ի Քուներսդորփ: 'ի
 ժամանակի յառաջագիմութեան զինու Ռուսաց 'ի
 25 Իեկտեմ. Պառուսիա, Սայսրուհին Եղիսաբէթ վախճանեցաւ:
 1762. Սա բազումն օժանդակեաց բարօրութիւն և փառա-
 ւորութիւն Ռուսաստանի. ուստի երևելին յասպարիզի
 բանաստեղծութիւն հայրենակից մեր՝ Ժամանակակից
 այսր Թադուհէոյ, Людмила իրաւամբ գովաբանեաց
 զԹադաւորութիւն սորա: Սա եբարձ զմահապարտութիւն.
 հաստատեաց զգլխամատեղի աղնուական և առւտրա-
 կան. կառոյց 'ի Մոսկով զՀամալսարան. իսկ 'ի
 Ս. Պետերբուրգ զՍոււմբ ծովամարտիկ նորաւարժ
 նաւաստից և զՃեմարան ազատական արուեստից. կա-
 ռոյց 'ի Ս. Պետերբուրգ զբազում մեծամեծ եկե-
 ղեցիս. զարդարեաց զայն քաղաք բազում շինուա-

ծովք. յաւուրս Թադաւորութեան սորա բարբ ժո.
զովըդեան Ռուսաց յայտնի կակղեցան :



Թադաւորութիւն Կոյսերն Պետրոսի ք. Ֆէոդորովիչի
ի 25 դեկտեմ. 1761—ց6 յուլ. 1762—ամիսք վեց :

Թադաւորութի Պետրոսի ք. ընդ սուղ ժամա-
նակ տեւաց. բայց նշանաւոր է բազում բարերար
սահմանադրութիւնք վասն Ռուսաստանի: Այս Միա-
պետ պարգեւեաց Ազնուականաց Ռուսաց զբազում.
իրաւունս և զարտօնութիւն. հաստատեաց զփոխա-
դարձ դրամատեղի. իջոյց զգին աղի ՚ի Թեթևաբեռ-
նութի ժողովըդեան. դարձոյց յաքսորանաց զբա-
զումս, ՚ի Թիւս որոց և զՄինիս և զայլս: Արա-
րեալ զհաշտութի և զկապակցութի ընդ Պոլսոսիոյ,
Պետրոս ք. սկսաւ առնել զպատրաստութի պատե-
րազմի ընդդէմ Դանիոյ. որում շարժառիթ գտաւ
այն, զի Դանիա ջանահնար լինէր տիրել Դքսուհի
Հոլշտէյն-Հոտտորպու. որոյ ժառանգ էր Պետրոս
ք: Եւ ահա ամենայն ինչ պատրաստ էր ՚ի պատե-
րազմ. յանկարծ իմն Պետրոս ք. հիւանդացաւ և մե-
ռաւ, Թողեալ զկնի իւր զյիշատակ Թադաւորի բա-
րեհաւուց և մարդասիրի :



ՀՐԶԱՆ ԵՕԹՆԵՐՐՈՐԴ :

—

Դ բազմեց ՚ի Պաճ ամ Ռուսաց Կայսրուհւոյն Կատարինէի ք. Ալէքսիովնայի ցվախճան Կայսերն Աղէքսանդրի ան
1762—1825=63.

—

Թագաւորուի Կայսրուհւոյն Կատարինէի ք. Ալէքսիովնայի:
1762—1796=34.

1761. Առաջին արքայական գործք Կատարինէի ք. եղեն
Հաստատելն զբարձուքն խորհրդական Դիւանին քըն-
նողական գործոց, և բնակեցուցանելն ՚ի բազում
արգաւանդաճող յանմարդաբնակ ՚ի նմին ժամա-
նակի տեղիս Ռուսաստանի ղզերմանայի գաղթա-
կանս: Սինկղիտոսն փոխակերպեցաւ բաժանմամբ
1763. ՚ի բաշխուածս (на Департаменты), և ՚ի վերայնք
եղաւ պահպանութիւն արդարութեւն ՚ի Ռուսաստան.
շինականք՝ որք պատկանէին վանաց, միաւորեցան
ընդ արքունականաց (*): ՚ի Մոսկով Հաստատեցաւ
Ժողով (Коммисія) ՚ի պատգամաւորաց (ի Դիւանա-
տատաց), հրաւիրելոց յամենայն նահանգաց Ռու-
սաստանի յաղագս յօրինելոյ զնոր ընդհանրական
սահմանադրութիւն: Կատարինէ ետ նոցա զառանձին
խրատս, որ ծանօթ է ընդ անուամբս Նախը, որ
մնացէ ցյաւիտեան յիշատակ բարձրագոյն հանճա-
րոյ և բարութեւն հոգւոյ և սրտի Թագուհւոյս: Յետ
այսորիկ գործք Լեհաստանի դարձուցին յինքն ըզ-

(*) Շինականք վանաց յայնժամ համարէին 91,000,000.
մի միայն վանաց Սարգսեան սրբոյ Արքորդութեւն պատկա-
նէին 100,000:

միտս Կատարինէն թ: Յետ մահուան արքային իւրեանց Օլոստոսի Կ. Լեհք կամեցան ընտրել 'ի տեղի նորա զվոխանորդ. յայնժամ ընդ բոլոր Լեհաստան ծագեցան կռիւք, երկպառակութիւք և ներքին աղմուկք: Գաղղիա կամեցաւ նստուցանել յԼեթոռ Լեհաց զԴուքսն Գաղղիոյ. բայց Ավստրիա և այլ Տէրութիւք հակառակ կացին այնմ: Այսու պատճառաւ պատերազմն էր անփախչելի:

Առ 'ի չԹողուլ զայն և հաստատել 'ի Լեհաստան զանդորրութիւն, Կատարինէ պարգևեաց այնմ Տէրութիւն զարքայ, որ ընտրեցաւ 'ի բնական Լեհաց, Ստանիսլավ Պոնիատովսկի: Բալլամք 'ի Լեհաց ընդդէմ կացին այնմ, և հաստատեցին զընկերութիւն՝ անուանեալ Քոնֆեդերացիա: Այս ընկերութիւն պաշտպանեալ 'ի կրօնաւորաց յսեան կարգի և 'ի Գաղղիոյ, յարոյց 'ի Լեհաստան, զսաստիկ հալածանս ընդդէմ այսպէս անուանեալ Դիսսիտենդաց (*), զորս Կատարինէ թ. ընկալաւ ընդ հովանաւորութիւն իւրով: Յայսմանէ ստիպեալ նորա հարկաւոր դատեցաւ 'ի գործ դնել զգորութիւն զինու ընդդէմ Լեհաց: Չորք Ռուսաց կոտորած հասուցանելով Քոնֆեդերատաց, մտին 'ի Լեհաստան: Յայսոսիկ իրողութիւն խառն գտաւ Տաճկաստան, և ըստ Թելադրելոյ Գաղղիոյ և Քոնֆեդերատաց, յայտնեաց զպատերազմ Ռուսաստանի: Բայց այս պատերազմն վասն Ռուսաստանի եղև նորագոյն ճանապարհ փառաց: Չորք Ռուսաց տիրեալ խոտինայ, Բենդերի և այլոց սահմանակից նահանգաց

1768.

(*) Դիսսիտենդ անուանէին 'ի Լեհաստան նոքա, որոց կարծիք զկրօնէ չէին համաձայն ընդ ամենայն սահմանադրութեանց Հռոմէական եկեղեցւոյն:

Տաճկաստանի, մօտին ՚ի Մոլտավիա և ՚ի Ասա-
 խիա: 17,000 ՚ի զօրաց Ռուսաց ընդ սպարապետութե
 Ֆելդմարշալի Կոմսին Բիւմանցովայ՝ արարին զկա-
 տարեալ յաղթութիւն ՚ի վերայ 150 հազարաց գնդին
 1770. Տաճկաց առ գետովն Քազուլի: Կոմսն Օրլով ՚ի
 հօւր ծախեաց զնաւատորմիւն Տաճկաց ՚ի նաւա-
 հանգստին Չեսմենու: Այլ գունդ Ռուսաց ընդ
 առաջնորդութե Դոլղորովիին տիրեաց Պերեկոպո-
 կի անուանեալ գծից, և յառաջ խաղաց մինչև
 ցըրիմ: Կատարինէ վարձատրեաց զԴոլղորովի ընդ
 այս փառաւոր սերադործութիւն մականուամբ Դրիմա-
 կի: Ոչ հայելով յայն, զի յայնմ ժամանակի երե-
 ւեցաւ ՚ի Մոսկով ժանտախտ, և մի ոմն ՚ի սոսկա-
 կան խաղախաց Պուզաչեով՝ անուանեալ զինքն Կայսր
 Պետրոս Գ. յարցց զմեծ աղմուկ ՚ի ժողովրդեան,
 զինուորական ներդործութիւնք ՚ի Տաճկաստան շա-
 րունակէին անդադար: Բիւմանցով ՚ի բազում սլա-
 տերաղմունս յաղթող գտանէր: Չայսու ժամանա-
 կօք Սուլթով զօրութե զինու նուաճեաց զԲոն-
 ֆեդերատս Լեհաց. և յայնժամ եղև առաջին բա-
 ժանուսն Լեհաստանի ընդ մէջ Ռուսաստանի, Ավ-
 ստրիոյ և Պոլսոսիոյ: Ռուսաստան ստացաւ զհին
 ժառանգութիւն իւր զերկիրս՝ որք են ընդ մէջ Դնեպ-
 րեայ և արևմտեան Դալինայի կամ Բելոռուսիոյ (*):
 Այս գործք և անցանիլն զօրաց Ռուսաց ընդ սպա-
 րապետութե Բիւմանցովայ ընդ Դանոբ ստիպեցին
 զՏաճկաստան հաշտիլ ընդ Ռուսաստանի: Թերա-
 կղլին Ղըիմ հրատարակեցաւ լինել անկախ յիշ-
 խանութե Տաճկաց: Ընդ այս փառաւոր սերադոր-
 ծութիւն Բիւմանցովայ Կատարինէ զարդարեաց զնա

(*) Այժմեան նահանգք Վիսոպակոյ և Մոյիլեվայ:

մականուամբս Ձադունայսկի: Պսակեալ զինուորա-
կան փառօք՝ Կատարինէ դարձոյց զմիտս իւր ՚ի ներ-
քին վիճակ Կայսերութիւն իւր: Բաժանեաց զայն ՚ի
կոնսակալութիւն (՚ի նահանգս և ՚ի գաւառս), և վս
կառավարելոյ զայնս ՚ի լոյս էաժ զնոր կարգադրուի:
՚ի սմին ժամանակի խորհելով զքարօրութեք բուն-
դակ Եւրոպիոյ հաստատեաց զօպառազինեալ չէզո-
քութի (вооруженный Нейтралитетъ), որոյ նպատակ
էր պառսպարել յամենայն վտանգից զվաճառակա-
նութիւն և զնաւագնացութիւն ընդհանրապէս ամե-
նայն Տէրութեց Եւրոպիոյ. մինչ զի և զայնոցիկ՝
որք չէին ՚ի դաշնաւոր յարաբերութիւն, և կամ
պատերազմէին ընդ միմեանս: Փառք և ապահովուի
Ռուսաստանի ևս առաւել հաստատեցան: Խսանս
Ղրիմու զիջեալ յառաջարկութիւն Ռուսաստանի՝
հրաժարեցաւ ՚ի տիրապետութեք Ղրիմու. և յայն-
ժամ այս թերակղզի առանց արիւնհեղութիւն միա-
ւորեցաւ ընդ Ռուսաստանի: Այս գործ է պտուղ
հանճարամտութիւն անմոռանալի ՚ի տարեգիրս մեր
իշխանին Պոտեմկինի: Կատարինէ դնաց ճանապար-
հորդութեք յայս միաւորեալ ընդ Ռուսաստանի նա-
հանգ, և անուանեաց զայն Տաւրիդ. իսկ զՊոտեմ-
կին իշխան Տաւրիդեան: Տաճկաստան անհանգիստ
սրտմտութեք հայէր ՚ի միաւորութիւն Ղրիմու ընդ
Ռուսաստանի, ուստի և յայտնեաց նմա զպատե-
րազմն. ՚ի ժամանակին յայնմիկ զէն Ռուսաց ծած-
կեցաւ նորագոյն փառօք: Սուլորովն տրար զփառա-
ւոր յաղթութիւն ՚ի Քինբուրն. Պոտեմկին օժան-
դակեալ ՚ի Սուլորովայ՝ տիրեաց Օջակովի. Բիւ-
մանցովն դարձոյց ՚ի փախուստ զխումբն բաղմա-
թիւ Տաճկաց և Թաթարաց. Սուլորով տիրեաց


1780.

1788.

խոտինայ, և արար զյաղթութիւն մեծ առ դետովն
 Բիմնիկի (ի Ալալաքիա)։ Ընդ այն յաղթութիւն Աս-
 տարինէ պարգևեաց նմա զանուանակոչութիւն Բիմ-
 նիկսկի։ Ո՛չ անազան այս դիւցազն յերկիւղ Տաճ-
 կաց և ՚ի զարմանս բովանդակ Եւրոպիոյ, տիրեաց
 Իսմայիլայ, ամրոցի՝ որ յաչս Եւրոպացւոց թուէր
 անառիկ և յուսարի պարիսպ Տէրութե Տաճկաց։
 Այս յառաջագիմուլիք զինու Ռուսաց հաստատե-
 ցին զտիրապետութիւն Ռուսաստանի ՚ի ջուրս Սեաւ
 և Միջերկրական ծովու։ Անգղիա ոչ ցանկայր այսմ.
 ուստի և յորդորեաց զՇվէտիա յայտնել զպատե-
 րազմ Ռուսաստանի։ Այս պատերազմ ևս ձեռնտու
 դտաւ յառաւելութիւն փառացն Ռուսաստանի։ Ո՛չ
 հայելով ՚ի բազում դիւցազնական արդարեւ սխրա-
 գործութիւնս արքային Շվէտաց Հուստավայ 4. զին-
 ուորական ցամաքային և ծովային զօրութիւնք Աս-
 տարինէի վեհ հանդիսացան յաղթութե ՚ի վերայ
 Շվէտաց, և ցայնվայր հասուցին զնոսա, մինչև
 խնդրել նոցա զհաշտութիւն, որ և հաստատեցաւ ՚ի
 գեղջն Ա Երեւախ։ Ըստ այնմ վերահաստատեցաւ
 հաշտութիւն Աբովայ։ Զէն Ռուսաց ստիպեաց ըզ-
 Տաճկաստան հաշտիւ ընդ Ռուսաստանի. դաշն խա-
 ղաղութե եղաւ յեաշ։ Տաճկաստան ետ Ռուսաս-
 տանի զՕչակով և զամենայն երկիրս՝ որք էին ընդ
 մէջ Բուղայ և Դնեստրեայ։ ՚ի ժամանակս այսր պա-
 տերազմի ք Տաճկաց՝ Լեհք կրկին յարեան ընդդէմ
 Ռուսաստանի. առ ՚ի նուաճել զայս ազգ, Ռուս-
 սիա և Պոլսոսիա վճռեցին առնել զկրկնակի բա-
 ժանուհն Լեհաստանի. որով բաժանմամբ միաւո-
 րեցան ընդ Ռուսաստանի արևելեան այնր ժամա-
 նակի մասունք Լեհաստանի (այժմ նահանգք Մինս-

կւոյ, Առլինսկւոյ և Կամենեց-Պոտոլսկւոյ): Լեհք
 համաձայնեցան ընդ այս • բայց յետ սուղ ինչ մի-
 ջոցի կրկին աղմկեցան, և 'ի միում գիշերի 'ի սուր
 սուրերի մաշեցին 'ի Արշալ զգալումս 'ի զօրաց
 Ռուսաց, մինչ նոքա 'ի քուն էին: Ասալիսի գոր-
 ծողութի նոցա ստիպեաց զԿատարինէ յառաջ վա-
 րել զզօրս իւր 'ի Լեհաստան ընդ առաջնորդութի
 Ֆերդէնի և Սուվորովայ: Ֆերդէն հասոյց զգալում
 հարուածս Քոնֆեդերատաց և արար կալանաւոր
 զգլխաւոր սպարապետ նոցա զԱրստիւշկո • իսկ Սու-
 վորով յամայի կացոյց զվերջին ապաստան նոցա ըզ-
 Պրագա: Յայնժամ եղև երրորդ (վերջին բաժա- 1795.
 նումն Լեհաստանի ընդ մէջ Ռուսաստանի, Ավս-
 տրիոյ և Պոլսոսիոյ): 'ի վերայ հիման նորա Կա-
 տարինէ միացոյց ընդ Ռուսաստանի զերկիրս ցգետն
 Բուդայ (որ անկանի 'ի Ախլայ) և Նեմանի կամ
 Մեմելի (այժմ նահանգք Ալիւնայի և Գրոդնայի):
 Ոչ անագան յետ այսորիկ և Կուրլենդիա յօժա-
 րակամ եմուտ 'ի հպատակութի Կատարինէի: Յայնմ 1676.
 ժամանակի, յորում ղէն Ռուսաց լուսաւորիւր վա-
 ռօք 'ի Պարսիկս, և զօրք Ռուսաց ընդ առաջնոր-
 դութի Կոմսին Զուբովայ տիրեցին Տարբանդայ,
 և հասին ցնորն Շամախի, Կատարինէ վախճանե-
 ցաւ 'ի 68 ամեայ հասակի կենաց իւրոց: Արքայութի
 նորա բաղումս յաջողեաց բարձրութի զինուորա-
 կան փառաց, երջանկութի և լուսաւորութի Ռու-
 սաստանի: Կատարինէ ընդարձակեաց զսահմանս իւ-
 րոյ Տէրութի, և ապահովացոյց 'ի կողմանէ Տաճ-
 կաց, հաստատելով զտիրապետութի իւր 'ի Սեաւ Ծո-
 վոս • 'ի լոյս էած զբաղում բարերար կարգադրութի,
 թեթեւացոյց զխստութի քրէական օրինաց, պար-

գևեեաց հպատակաց իւրոց զբաղում իրաւունսն և զառանձնաշնորհութիւն ՚ի կենցաղավարուէր իւրեանց. ՚ի լուսագոյն վիճակ հասոյց զՃեմարանն ճարտարուէց, և զցամաքային խումբն Քատէտաց (ա խումբ Քատետաց). հաստատեաց զբաղում զայլ զինուորական ուսումնարանս, նոյնպէս և զՃեմարանն Ռուսաց լեզուի. զԸնկերութիւն վասն դատաւարակեւոյ զազնիւ և զմիջակ կարգի օրիորդս, զորքանոցս, զԼեւոնսն վաթողութեան ուսումնարանաց և զայլս: ՚ի վարձերախտեաց հպատակաց իւրոց կատարինէ կարգեաց զպատուանշան սրբոյն Գեորգեայ մեծ նահատակին (1769) և սրբոյն առաքելաշնորհ Իշխանին Ալադիմիրի (1782): Յաւուրս արքայութեւն այսր Թագուհիւց բաղումք յանդամոց կայսերական Ս. Պետերբուրգայ Ճեմարանին գիտուէց գնացին Ճանապարհորդութեւն ՚ի Ռուսաստան, և ՚ի լոյս ածին զբաղում տեղեկութիւն ըստ մասին աշխարհագրութեւն, բնաբանութեւն, բնական պատմութեւն և այլոց:



Թագաւորութիւն կայսերն Պօլտսի ա. Պավլովիչի:

1796—1801=4.

Պօլտս ա. բաղմաւ ՚ի Գազ ամենայն Ռուսաց՝ դադարեցոյց զմարտն ընդ Պարսից, և դարձոյց ըզգիտողութիւն իւր յարեմտեան Եւրոպայ: ՚ի սմին ժամանակի խռովարարք Գաղղիոյ (Революционеры) վեր ՚ի վայր տապալեցին զամենայն Աստուածային և զքաղաքական օրէնս, սկսան ընդ բռամբ ածել ըզԵւրոպիայ և ընդ ամենայն տեղիս ավուել զանհաւատութիւն, զամբարշտութիւն և զերկպառակութիւն:

Ավտորիա, Գերմանիա, Անգղիա և այլ Տէրութիւնք
դարձան առ Ռուսսիա խնդրելով զհնարաւ առ 'ի
կործել զայսոսիկ թշուառութիւն՝ որք սպառնային
Ժողովրդոց Եւրոպիոյ։ Կայսրն Պօղոս իբրեւ նախան-
ձաւոր մարտադիր հաւատոյ և ամենայն օրինաւոր
իշխանութեց, վճռեաց հակառակ խաղաղասէր բա-
րուց իւրոց՝ առնուել զզէն ընդդէմ Գաղղիոյ, վն
զի բարին Եւրոպիոյ և միանգամայն մարդկութեան
պահանջին զայս։ Եւ բաց յայսմանէ Պօղոս իբրեւ
մեծ Մարիստրոս կարգին Ասպետաց Մալթայի, ըն-
կալաւ զպաշտպանութիւն նոցա յամենայն խռովարար
վտանգից 'ի Գաղղիացւոց։ Ուստի հաստատեցաւ
դաշնախօսութիւն 'ի միջի Ռուսաստանի, Ավտորիոյ,
Գերմանիոյ, Անգղիոյ և արքայութեան Նէպոլիտա-
նի։ Կոմսն Սուվորով Բիմիկսկի կարգեցաւ Գլխա-
ւոր սպարապետ դաշնաւոր Ռուս-Ավտորիական զօ-
րաց։ որք նշանակեալ էին 'ի մարտ պատերազմի ընդ-
դէմ Գաղղիացւոց յիտալիա։ Իսկ և իսկ անուն
այսր դիւցազին հռչակեցաւ ընդ համայն Եւրոպիայ։
Յաղթութիւնք 'ի հիւսիսայինն իտալիա առ Կապանո, 1799.
առ գետովն Տրիբիոյ, և մանաւանդ մերձ 'ի քա-
ղաքն Նովի յապուշ կրթեցին զԵւրոպայ, և ստի-
պեցին զԳաղղիացիս 'ի փախուստ աճաւորել յի-
տալիայ։ Գաղղիոյ իսկ մերձ էր վտանգն։ Բայց և այն-
պէս Սուվորովի հորկէր փութալ յօգնութիւն գնդին
Ռուսաց, որք էին 'ի Շվեդարիա։

Նա հանց ընդ զարհուրելի բարձրութիւն Սեն-
ճոտարդի և ընդ անդունդս յայսմ լեռնական ող-
նաշարս՝ յարմարեալս 'ի բնութէն իսկ։ Բայց իմա-
ցեալ՝ թէ Գաղղիացիք յառաջ քան զգալուստ իւր,
հարուածեալ են զխումբն զօրաց Ռուսաց՝ որ էրն

'ի Ավէցարիա, հարկաւոր դատեցաւ խաղալ 'ի Գեր-
 մանիա: Յայսմ վայրի Սուվորով յաղթեաց մարթէ
 ասել բնութի իսկ • վասն զի ընդ բարձրութիւնս
 Աւպիայ լերանց, ընդ անդունդս և ընդ տեղիս հա-
 մարեալս անանցանելի, էանց 'ի հիացումն բովան-
 դակ Եւրոպիոյ՝ 'ի Ավէցարիոյ և եմուտ 'ի Գեր-
 մանիա: Սխրագործութիք Սուվորովի յիտալիա և
 'ի Ավէցարիա էին մեծամեծք և անհամեմատք, բայց
 չեղին պսակեալ ցանկալին յաջողութք • ըստ որում
 դաշնաւորք Ռուսաստանի վարէին դանդաղ և ոչ
 համաձայն ընդհանրական ձեակերպութի: Աաղա-
 գոյն ելք Ավստրիացոց 'ի Ավէցարիոյ եղև պատ-
 ճառ այնմ, զի Գաղլիացիք կոտորեցին զգօրս Ռու-
 սաց անդ • իսկ 'ի թոյլ գործակցութենէ Անգղիոյ,
 զօրք Ռուսաց 'ի Հոլլանդիա՝ կարգեալք 'ի մարտ
 ընդդէմ Գաղլիոյ 'ի հիւսիսային կողմանէ՝ անյաջող
 գտան: Այսօրեկ հանգամանք ստիպեցին զԱյսսրն
 Պօղոս հրամայել իւրոց զօրաց դառնալ 'ի Ռու-
 սաստան: Այսու պատճառաւ դաշնակցութին ընդ
 մէջ Ռուսաստանի, Ավստրիոյ և Անգղիոյ նանրա-
 ցաւ, և ընդ վոյթ գործք կերպաւորեցին յինքեանս
 զայլ իմն ձկտումն: Անգղիոցիք տիրեցին սեպհա-
 կանութեան Ասպետաց կարգին Մալթայի՝ կղզոյն
 Մալթայի • յազապս բոյ Պօղոս իբրու մեծ Մա-
 գիստրոս այնր Ասպետութի, 'ի մտի եդ յայտնել
 զպատերազմն Անգղիոյ: 'ի միջի պատրաստութից առ
 այն պատերազմն՝ վախճանեցաւ: Այս Միսպէտ զար-
 դարեալ էր գերազանց յատկութք • աշխատասի-
 րութք, անխոնջ գործունէութք • սիրով առ կարգ
 և արդարութիւն, մաքուր աստուածապաշտութք և
 մտերմութք առ Հաւատն: Յաւուր թագադրութի

իւրոյ հրատարակեաց զկարգադրութի յազազս ժա-
ռանգութի Աթոռոյն ամենայն Ռուսաց: Հողագոր- 1797.
ծութի, վաճառաշահութի, դիտութիք և ճարտա-
րապետութիք գտանէին ՚ի նմա զպաշտպան իւրեանց:
Ասան կրթութի և դաստիարակութի Ռուսաց կա-
ռուցան ՚ի Տերպիթ Համալսարան. իսկ ՚ի Ս. Պե-
տերբուրգ որք զինուորական խումբն (Павловский
Корпус). Ուսումնարան կարգին սրբոյն Կատարի-
նէի, ինստիտուտն Մարինսկի և այլք:

Թագաւորութիւն Կայսերն Աղէքսանդրի ւն. Պալլադիէի
1801—1825=24.

Թագաւորութիւն Կայսերն Աղէքսանդրի ւն. ըսո-
քազմագումար և գերազանց առարկայից, որովք
լցեալ է, հանկէ բաժանել յերկուս զխաւոր յօդ-
ուածս, որոց առաջին տարունակէ յինքեան զխա-
ղական գործողութիւնս այս Միապետի. իսկ միւսն
զզինուորական սխրագործութիւնս նորա:

Խաղաղական գործողութիւնս Կայսերն Աղէքսանդրի ւն:

Բազմեալ ՚ի Գահ ամենայն Ռուսոց՝ Կայսեր
Աղէքսանդր եցոյց զբազում փորձս իւրոյ հեղութի,
ողորմածութի, մարդասիրութեան և փոթեռանդո-
ցանկութեան լուսաւորելոյ զհաստակս իւր լուսով
գիտութի: Նա թեթեւացոյց զխստութի քրէական
օրինաց, արգել զգործածութի տանջանաց, զոր տալ-
ին ՚ի հարցաքննութի քրէական գործոց. կարգեաց
զնախարարութիս և զժողով վասն յօրինելոյ զօրէնս.
՚ի լոյս ընծայեաց զբազում օրէնսդրութիս առ բար-
ւոքելոյ զվիճակ օսական ժողովրդոց, քաջալերե-

լոյ գհողագործութիւն, զառւտուրս և ընդհանրապէս
 զաղգային շահաւաճառութիւն: Զինուորական ցա-
 մաքային և ծովային զօրութիւք Ռուսաստանի կա-
 տարեկագործեցան: Քրուզենշտերն, Լիսիանսկի,
 Գոլովին, Ռիկորդ, Կոյնբու և Արանգել արարին
 զճանապարհորդութի շուրջ գերկրագնտով: Ասոն
 յառաջատուութի լուսաւորութի կառուցան 'ի Աիւ-
 նայ, 'ի խարկով և 'ի Ղալպն Համալսարանք. 'ի
 Ս. Պետերբուրգ մանկավարժական (Педагогический)
 Ինստիտուտ. 'ի Յարսկի Սելո Կայսերական Լիցէյն.
 Իսկ յՕդէս Լիցէյն Րիշեւիվի: Հաստատեցան
 բժշկական և վիրաբուժական Ակադեմիայք 'ի Ս.
 Պետերբուրգ և բաշխուած նորա 'ի Մոսկով: Յամ
 նահանգական քաղաքս հիմնեցան Գիմնազիայք, և 'ի
 զաւառս նոցա ուսումնականք: Մեծամեծ գումարք
 դրամոց նշանակեցան առ պահպանութի Ճեմարա-
 նայ, Համալսարանաց, Գիմնազիոց և ընդհանրա-
 պէս ամենայն տեսակի Կրթարանաց: Օրինակ Միա-
 պետի ներգործեաց և 'ի հպատակս նորա. յորոց
 բալովմք նուիրեցին յընչից իւրեանց 'ի կառուցումն
 ուսումնարանաց և զանապաւն աստուածահաճոյ շին-
 ուածոց: Յայսմ նուագի անմոռանալի մնացեն ան-
 ուանք Գոլիցինի, Շերեմետովայ, Դեմիտովայ, Կու-
 շեւով-Ռեզքօրոդկոյի, Լալարեանց (*) և այլոց: Ընդ-
 հանրապէս գիտութիւք և գեղարուեստք ծաղկեցան
 'ի Ռուսաստան ընդ բարերար հովանաւորութեամբ
 Կայսերն Աղէքսանդրի:

(*) Գիտութիւն եղի աստ և զանուն Լալարեանց. ըստ որում
 նք արարեալ են զբազում ինչ վասն ազգիս Հայոց. Ինստի-
 տուան, եկեղեցիք Ս. Պ. բուրգայ և Մոսկովայ և այլ պէսպէս
 շինուածք 'ի զանազան քաղաքս են յայտնի ապացոյց:

Ձինուորական Սերաֆործութիւն Կայսերի Աղէքսանդրի ան:

Ի ձեռն խաղաղական դաշնադրութեանց Կայսրն Աղէքսանդր հեռացոյց զմարտն առաջակայ ՚ի նստիւ իւրում յԱթոռ ընդ մէջ Ռուսիոյ և Անգղիոյ: Բայց այսու ամենայնիւ ՚ի սմին ժամանակի յանհնարիցն էր լինել խաղաղութիւն յԵւրոպայ. քանզի ՚ի Գաղղիոյ բարձրացաւ այր մեծահանճար, բայց փառամոլ և սիրող աշխարհակալութիւն: Սա էր արժանին յիշատակաց Բոնապարտէ, որ կառավարեալ ընդ քանի մի ամս զԳաղղիա կոչմամբ Հիւպատոսի, անուանեաց զինքն ընդ անուամբ Նապոլէոնի Կայսր Գաղղիացոյց և Արքայ Իտալիոյ: Յայսմ ժամանակէ սկսաւ ահաբեկ առնել զամենայն սահմանակից Տէրութիւն: Նապոլէոն բռնութիւն յափըշտակեաց զերկիրս յօրինաւոր տեսարց իւրեանց. զբաղումս ՚ի նոցանէ միացոյց ընդ Գաղղիոյ և զայլս բաշխեաց իւրոց ազգականաց և զօրագլխաց: Ըստ այսոցիկ պատճառաց Ռուսսիա, Անգղիա, Ավստրիա, Շվեդիա և Թաղաւորութիւն Նիսպոլիտանու կացուցին ընդդէմ Գաղղիոյ զմիաբանութիւն. պատերազմն բացու. բայց յետ մարտին յԱւստերլիոյ (ի Մորաւիա) Ավստրիա արար զհաշտութիւն ընդ Գաղղիոյ ՚ի Պրեսբուրգ (ի Վիեննայի): Այս պարագայ ստիպեաց զԿայսրն Աղէքսանդր յետս կոչել զզօրս իւր ՚ի Գերմանիոյ ՚ի Ռուսաստան: Հաշտութիւն Պրեսբուրգայ անկ ՚ի սիրտ Նապոլէոնի զամբարտաւանութիւն և զյանդգնութիւն: Բռնութիւն յափըշտակեաց զարքայութիւն Նիսպոլիտանու, և ետ զայն եղբօր իւրում Յովսեփայ. զհասարակապետութիւն Հոլանդիոյ դարձոյց ՚ի Թաղաւորութիւն. և յԱթոռ

1805.

այս թագաւորութիւն բարձրացոյց զեղբայր իւր Վա-
ղովիկոս. տարածեաց զիշխանութիւն իւր և 'ի Գեր-
մանիա. վասն զի 'ի բազում տեղեաց աշխարհին
Գերմանիոյ կացոյց զմիաբանութիւն Հռոմէնի, (Рейн-
ский Союзъ) և զինքն հրատարակեաց Պաշտպան
այնր Միաբանութեւն: Այսպիսի գործողութիւնք Նա-
պոլէոնի: սպառնային արեւմտեան Եւրոպիոյ ստրկուիւն:
1806. Առ 'ի զգէմ ունեւ այնմ՝ կայսրն Աղէքսանդր
արար զդաշնակցութիւն ընդ Պոլսսիոյ ընդգէմ
1807. Գաղղիոյ. Պատերազմ մերձ 'ի Պոլսոսի և 'ի
Պրէսիշ-Լյուառ սլոակեցին փառօք զգէն Ռուսաց.
բայց յետ պատերազմին առ Փրիշլանդիւ, կայսրն
Աղէքսանդր տեսեալ՝ թէ Անգղիացիք յայսմ մար-
տի, որ էր վասն բարութիւն բովանդակ Եւրոպիոյ,
ցուցանեն զթոյլ գործակցութիւն և հաշտիւ ընդ Գաղղիոյ:
Արար զտեսութիւն ընդ Նապոլէոնի 'ի Թիւրիթ, և
անդ հաստատեաց ընդ նմա զդաշն խաղաղութեան.
ըստ զօրութիւն որոյ՝ նահանգն Բելլոստոկայ միստորե-
ցաւ ընդ Ռուսսիոյ. ուստի Անգղիա քակտեալ ըղ-
ղաշն հաշտութեւն ընդ Ռուսաստանի՝ միացաւ ընդ
Հոլանդիոյ այնու դիտաւորութեւն՝ զի յարուսցէ զնա
ընդգէմ Ռուսաստանի: Թագաւորն Հոլան-
տաւ Դ. Ադոլփ հրամայեաց կալանաւորել առ
Դրան իւրում զգտեալն յայնմ ժամանակի զդիւ-
պանն Ռուսաց զԱլլապէուս: Այս ընթացք նորա
ստիպեցին զԱղէքսանդր տալ հրաման զօրաց իւրոց
խաղալ 'ի Ֆինլանդիա: Յայնժամ բացաւ պատե-
րազմ ընդ մէջ Ռուսաստանի և Հոլանդիոյ: Գրե-
թէ ամենայն գլխաւոր քաղաքք Ֆինլանդիոյ և մինչ
զի երեւի ամբողջն Սվեաբուրգ անձնատուր եղեն

Ռուսաց, որք հասին ցառաջս գետոյն Տորնէովայ, և
 ընդ ձեռն սառուցեալ յայնմ ժամանակի Բոնտի-
 կեան Նեղուցին մտին 'ի Հվէտիա: Ահաբեկ լեալ
 Հվէտաց՝ յորդոր եղեն թաղաւորի իւրեանց հաշ-
 տիլ ընդ Ռուսաստանի և կամ հրաժարիլ յԱթո-
 ոյ, Հուստով Դ. Ադուլի ընտրեաց զվերջինն:

Յաջորդ իշխանութի նորա Կարոլոս ԺԳ. խօսե-
 ցաւ զհաշտութի ընդ Ռուսաստանի 'ի Փրիդրիքս-
 գամ. ըստ զօրութե որոյ կղզիք Ալանդեան և բո-
 վանդակ Ֆինլանդիա ցգետն Տորնէով և մինչև
 ցոսհմանս Նորվեգիոյ միաւորեցան ընդ Ռուսաս-
 տանի: Յաւուրս թաղաւորութի Կայսերն Աղէք-
 սանդրի Ռուսաստան ընդարձակեցաւ 'ի հարաւային
 կողմն: Պատերազմ ընդ Պարսկաստանի վախճան
 էաւ հաշտութի 'ի Գուլիստան: Պարսկաստան ետ
 Ռուսաստանի զերկիրս յարեմտեան կողմն Կասպից
 ծովու ցգետն Երասխ: Պատերազմ, զոր Տաճիկք
 սկսեալ էին ընդ Ռուսաստանի ըստ գրգռելոյ Գաղ-
 ղիոյ (յառաջ քան զհաշտութին Թիւրիթու) փա-
 ռաւորեսոց զդէն Ռուսաց 'ի Մոլդաւիա, 'ի Աւ-
 լաքիա, 'ի վեր քան զԴանոբ, 'ի Սեաւ Ծովու և
 յԱրշակեղաղոսի: 'ի սմին ժամանակի մեծացաւ
 փառք Ֆելդմարշալի Ռուսաց Մեքայէլ Իլարիոնո-
 վիչ Կուտուղովայ. զոր վերին Տեսչութին 'ի միջի
 մեծամեծ վտանգից պահպանեաց վասն գերապանծ
 սխրագործութից (որպէս տեսցուք): Այս դիւցա-
 զուն Ռուսսիոյ ստիպեաց զՏաճկաստան հաշտիլ ընդ
 Ռուսաստանի: 'ի Բուքարեսթ ('ի Աւալաքիա) 16 Մայիս
 կռեցան դաշինք. որով Ռուսաստան ստացաւ զՊես-
 սարապիա ցգետն Պրուտ: Հուսկ ապա եհաս ժա-
 մանակ վասն Ռուսաստանի և Միապետի նորա գե-

1812.

րապանձ սխրագործութեց և փառաց: Բացաւ պատերազմ մեծ, անհամեմատ, անմոռանալի ՚ի տարեգրութեան մերս հայրենեաց ընդ մէջ Ռուսիոյ և Գաղղիոյ: Նապոլէոն նուաճեալ ընդ բռամբ իւրով գրեթէ զբոլանդակ արեւմտեան Եւրոպիայ, և յուսալով ունել ինքեան դաշնակից մտերիմ զժառանգ Աթուոյն Շվեդաց՝ զգորագլուխն Գաղղիոյ Բեռնադոտ, խորհեցաւ լինել Տիրապետ համայն Եւրոպիոյ. բայց յընթացս իւրոյ փառամոլութիւնն անհեշտ զմի միայն մեծագոյն խափան զՌուսաստան: Ուստի դիտաւորութիւն խորտակելոյ զկարողութիւնն Ռուսաստանի եղև գլխաւոր մտածմունք նորա: Սովին դիտաւորութիւն Նապոլէոն օժանդակեալ քսանութն հազար զորաց իւրովք՝ եմուտ ՚ի Ռուսաստան հանդերձ 580,000 զօրօք և բաւ զինուոր և թնդանօթօք: Սպարապետն զօրաց Ռուսաց Բարկլայ-դե-Տոլլի գծագրեաց զձև ընդ կռուին դառնալոյ ՚ի ներքին նահանգս դիտաւորութիւն ձգելոյ անդր զԳաղղիոցիս ՚ի կորուստ նոցա: Նապոլէոն տիրեաց Ալիւնայի, և շուտաւիութիւն Էսնոց ընդ բոլանդակ տարածութիւն Ռուսաստանի ՚ի Մեծկայ մինչև ցՍմոլէնսկ: Աստանօր տուաւ պտտերազմ սաստիկ: Սմոլէնսկ մեծամեծ տառապանս կրեաց ՚ի հրոյ և ՚ի սրոյ: Չօրք Ռուսաց դարձան ընդ կռուին ՚ի Մոսկով և ՚ի սմին ժամանակի գլխաւոր սպարապետութիւն յանձնեցաւ ՚ի վերայ բոլանդակ զօրուն Մեքայելի Ի արիոնութիւն Գոլենիշչեւ-կուտուղովայ: Սա մղեաց զպտտերազմ ընդ Նապոլէոնի ՚ի Գեղջն Բորոտին (ի Մաժայ՝. գաւառի Նահանգին Մոսկով): Արեւնահեղ հր այս մարտ, որ տևեաց զօրն ողջոյն, և ոչ ինչ շահեցաւ թշնամին: Ի լինել այսր՝ Սպա-

րապետն քարուք վարկաւ թոյլ տալ թշնամոցն
 մտանել 'ի Մոսկով. և ինքն զտեղի հառ 'ի Ճանա-
 պարհս Տուլայ, Կալուզայի և Օրոլի 'ի պատսպա-
 րել զհարուսային նահանգս Ռուսաստանի: Նապոլէոն
 եմուտ 'ի Մոսկով և եգիտ անդ զիւրն կորուստ. 2. Սեպտեմբ-
 վասն զի հրդէհ Մոսկովայ 'ի վրէժխնդրութի վա- 1812.
 ռեաց զամենայն Ռուսս: Շարժեցաւ բոլանդակ
 Ռուսսիա և սպառազինեցաւ. թիւ զօրաց՝ որք ըն-
 թանային 'ի մալտ վասն հաւատոյ և հայրենեաց օր-
 յօրէ առաւելոյր, և գերապանծ յաղթութիւն՝ զոր
 արալին զօրք Ռուսաց 'ի գեղջն Տարուսին ('ի Նահ' 4. Նոյեմբ-
 Մոս'.) գուշակեաց Նապոլէոնի և զօրաց նորա
 զկորուստ 'ի Ռուսաստան: Ելեալ 'ի Մոսկովայ Նա- 12. Նոյեմբ-
 պոլէոն խաղաց 'ի նահանգն Կալուզայի. և 'ի մալո
 Եարոսլավեց սաստիկս հարուածեցաւ: 'ի սմին ժա-
 մանակի առաջնորդ խալախաց Պլատով և Կոմսն
 Վիտգենշտէյն, որ պահպանէր զՍ. Պետերբուրգ,
 ամենայն ուրեք հասուցանէին զկոտորաց Գաղղիաց-
 ւոր: Պատերապմ մերձ Կրասնոյ ('ի Սմոլենս. Նահ.) 5. Նոյեմբ-
 եղև նորոգ տեսարան զինու Ռուսաց: Գաղղիացիք
 երկիւղիւ դարձան 'ի փախուստ. և յանցանելն ընդ 15. Նոյեմբ-
 դետն Բերոզին հանդիպեցան միմի տառապանաց.
 քաղումք 'ի նոցանէ սպանան. ոմանք 'ի ջուրս ընկըղ-
 մեցան և կէսք վարեցան 'ի գերութի. ազատեալքն
 'ի գերութի և 'ի մահուանէ մեծաւ երկիւղիւ փա-
 խան 'ի Վիլնայ: Այս թշուառականք, կիսամերկք,
 տանջեալք 'ի սովոյ, նեղեալք 'ի ցաւոյ, վշտագնեալք
 և կերպարանափոխ լեալ 'ի սաստիկ ցրտոյ մե-
 ռանէին հալարաւոր. բոլանդակ Ճանապարհն 'ի
 Դանսպրեայ մինչև ցՎիլնայ ծածկեալ էր ախտացե-
 լովք, վիրաւորելովք, սպանելովք և սառուցելովք,

նոյնպէս թնդանօթօք, սայլիւք և երիւարօք: Ի
 580,000 զօրաց Նապոլէոնի քանի մի հազարք և
 եթ, և այն ևս խօթացեալք և անպիտանացեալք
 հազիւ զերծան ՚ի Մեմել: Այսու օրինակաւ Բարձ-
 րեալն օրհնեաց զդէն Ռուսաց. վասն զի զէնն այն
 առաւ վասն Հաւատոյ, Ճշմարտութե և արդարուն.
 և վեհաճն Նախաճառութի և ապաստանութիւն
 Այսպերն Աղէքսանդրի ստուգեցան բարեբաստիկ
 լըութիւն. ՚ի 17 դեկտեմբերի 1812 ամի ոչ դտաւ
 ոք ՚ի զօրաց թշնամեցն ՚ի Թագաւորութի Ռու-
 սաց (*): Մատուցեալ զգովեստ և զգոհութի Աս-
 տուծոյ վասն այսպիսի յաջողութեան զինու իւրոյ՝
 Այսպն Աղէքսանդր ետ ՚իմտի զայլ իմն մեծագոյն
 սխրագործութի, այնէ՝ ազատել զբոլոր Եւրոպիա
 ՚ի բռնակալութէ Նապոլէոնի: Ուստի զօրք Ռու-
 սաց անցին ընդ Մեմել, և վաղվաղակի երևեցան
 առ ափամբք Ուերայ և Ելբայի: Արքայն Պաու-
 սաց և բազումք յիշխանաւորաց Գերմանիոյ միա-
 յան ընդ Ռուսաստանի: Օրինակի նոցա զհետ եղև
 և Ավստրիա: Յայսմ ժամանակէ Գերմանիա եղև
 գլխաւոր տեղի զինուորական ներգործութեց: Պա-
 14 և 15 (4) ւերազմունք առ Դրեզդենիւ, Աուլմայիւ (Ի Բոյե-
 17 (4) ֆոքս միա) և այլք բազումք վախճան առնուին գրեթէ
 միշտ ՚ի հանդէս փառաց զօրաց Ռուսաց և դաշնա-
 ւորաց նորա: Նապոլէոն ժողովեաց զամենայն զին-
 ուորական զօր իւր մերձ ՚ի Լիպսիա: Աստանօր

(*) Ի մտանէն Նապոլէոնի ՚ի Ռուսաստան Աղէքսանդր
 ՚ի հրովարտակի իւրում բացածանոց ՚ի միջի այլ բանից
 զիւր սրբազան կամա և զանիփոխ ապաստանութի. ոչ
 զնեւ ՚ի բաց զսուր, մինչև ոչ մնացէ ոք ՚ի զօրականաց
 թշնամեցն:

կատարեցաւ պատերազմն. մղեալ լի արհաւրօք վճռա-
կան մարտի. որ տեւեաց առուրս երիս: Նապոլէոն 4, 6 և 7 ձի-
կրեաց զմեծ հարուած. դրեթէ զօրք նր բոլորովմբ
խորտակեցան, ցրուեցան և ՚ի գերուի վարեցան. և ՚ի վերջ 1813
ինքն իսկ դարձաւ ՚ի փախուստս. և միայն լ մնացոր- ^{առնալն ՚ի ինչն}
դաց ինչ զօրու իւրոյ էանց ՚ի ձախակողմն գետոյն 1814.
Հռուէնի ՚ի Գաղղիա: Միապետք՝ Ռուսաց, Ավստ-
րիացւոց և Պոլսաց հաստատեցին ՚ի միջի իւրեանց
զդաշն միաբանութիւն, և վաղվաղակի զօրք նոցա ան-
յեալ ընդ Հռուէն՝ մտին ՚ի Գաղղիա: Պատերազ-
մունք առ քաղաքօք Բրիենի, Լաւրոտերի, Լավո-
նի, Ֆերշամպէնուաղի և հուսկ ապա Փարիզու վայն
հետեանս յառաջ բերին, զի մայրաքաղաքն Փարիզ
անձատուր եղև դաշնաւոր Միապետաց: Հաստա 19 Մայիս
տեցաւ հանրական հաշտութիւն ՚ի Փարիզ. որով ՚ի 18 Մայիս
միջի այլ բանից նորոգ կանգնեցաւ արքայական Ա-
թոռն, և ՚ի նմա հաստատեցաւ Տունն Բուրբոն-
եանց յանձն Լուդովիկոսի ԺԷ: Նապոլէոն առա-
քեցաւ յԵւրայ Կղզին. Գաղղիա դարձոյց օրինա-
ւոր տերանց զառեալն ՚ի նոցանէ զերկիրս յամէ 1792:
Առ ՚ի հաստատել ընդ համայն Եւրոպիայ զկարգ
և զանդորրութիւն, Կայսրն Աղէքսանդր առաջարկեաց
առնել Ժողով թագաւորաց ՚ի Աննա և յառաջ
քան զմտանելն ՚ի խորհրդածութիւն հաճեցաւ գնալ
Ճանապարհորդութիւն յԱնգղիա: Անդ Արքայն Անգ-
ղիացւոց Գէորգ Դ. և հպատակք նորա ընդ առաջ
ելին Միապետի Ռուսաց հրճուանօք: ՚ի ժամանա-
կի խորհրդածութեց ժողովոյն Աննայի, Նապոլէոն
փախեաւ յԵւրայ Կղզւոյն, և երեւցաւ ՚ի Գաղղիա: 1814.
Այս անցք կրկին շարժեաց զհամայն Եւրոպիա.
Դաշնաւոր Միապետք օգնականութիւն Կայսերն Ա.

- ղէքսանդրի առին զգէն իւրեանց ընդդէմ Գաղղիոյ.
 և այսպէս սկսաւ կրկին պրտեւագմ: Ի սկիւբան
 Նապոլէոն եղոյց ղյառաջագիւմութի. այլ ի մար-
- 6 Յանկէ: տին մերձ ի Ատտերլո (ի հարաւային մասին Թա-
 գաւորութի Նիդերլանդու) վճռեցաւ վիճակ նորա,
 յաղթեցաւ. և հարկ էր նմա հրաժարիլ յԱթոռոյն
 Գաղղիոյ. ուստի և առաքեցաւ ի կղզին սրբոյն
1815. Հելլենեաց: Կայսրն Աղէքսանդր կրկին անգամ եմուտ
 ի Փարեզ. և անդ հաստատեաց ընդ Գաղղիաց-
 ւոյ վերստին զգաշն խաղաղութի. որով Եւրոպիա
 կոյցուցաւ յապահովի ի կողմանէ Գաղղիոյ: Հուսկ
 ապա ըստ վճռահատութի ժողովոյն Անայի, հա-
 մայն Տէրութիւնք և Իշխանութիւնք Եւրոպիոյ մու-
 ծան՝ որչափ ներեցին պարագայք, յառաջին սահ-
 մա՛ս իւրեանց և դարձուցան օրինաւոր թաղաւո-
 րաց և տերանց իւրեանց: Կարգեալ ի Նապոլէո-
 նէ Դրսութիւն Ատրշալայ (ի բաց հանեալ զմասն
 նորա զՂաքսութիւն Պալանու, նոյնպէս զքաղաքն
 Կրակով) միաւորեցաւ ընդ Ռուսսիոյ ընդ անուամբ
 թագաւորութիւն Լեհաց: Առ ի պահպանել զկարգ
 և զանդորութիւն յԵւրոպիա՝ Կայսրն Աղէքսանդր
1815. հաստատեաց ընդ Կայսերն Ապստիոյ և Արքային
 Պաուսաց զսուրբ Միաբանութիւն. ի վերայ հիման
 որոյ այսոքիկ երեք դաշնաւոր Միապետք հանդիսիւ
 հրատարակեցին զիւձ իւրեանց և զկամս կեալ ի
 սէր և ի համաձայնութեան. օգնական գտանել մի-
 մեանց. և աշխատ լինել զբարեկարգութեան երջան-
 կութիւն հպատակաց իւրեանց: Սոյն սուրբ Միաբա-
1818. նութիւն վերստին հաստատեցաւ ի ժողովն Անկնու:
 Խորտակեալ զտիրապետութիւն Նապոլէոնի, և
 պարգևեալ զխաղաղութիւն Եւրոպիոյ, Կայսրն Աղէք-

սանդըր ընծայեաց զամենայն զգօրութի իւր և ըղ-
 ճիգն ՚ի բարեկարգութի բարւոյն իւրոց հպատա-
 կաց և ՚ի պահպանութի անդորրութե յԵւրոպայ:
 Ծաղկեալ առողջութի և առցդ հասակայս Միա-
 պետի տային Ռուսաստանի վոլրախարար ականկա-
 լութի երկարատև լինելոյ կենաց նորա: Անքնին
 են իրաւունք Աստուծոյ. Կայսրն Ալէքսանդր վախ-
 ճանեցաւ ՚ի Թադանրոգ ՚ի 49 ամեայ հասակի կե. ՚ի 19 Նոյեմբ.
 նաց իւրոց: Նմա յաջորդեաց օգոստոսիառ Եղբայր
 նորա, Թադաւոր Կայսրն ՆԻԿՈՂԱՅՈՍ Թ. որ
 ցարդ վարէ զԹադաւորութիւն իւր բարեյաջի:

1825.

Ա Ա Խ Ճ Ա Ն:

ԱՂԻԻՍԱԿ.

որ ցուցանէ զկարգ Գահակալութեան Իշխանաց, Թագաւորաց, Կայսերաց և Կայսրուհեաց Ռուսաց 'ի ժամանակէ հիմնարկութեան Ռուսսիական Միապետութեան ցժամանակս մեր:

Անունս իշխանաց, Թագաւորաց, Կայսերաց և Կայսրուհեաց Ռուսաց ըստ հարգի Գահակալութեան:	Եւ Գահակալութեան:	Դար
ՏՈՒՆ ՐԻՒՐԻԱՅ յամէ 862. յետ ծննդեան Քրիստոսի:		Ժ
ԻՇԽԱՆՔ		
Մէծիշխանական Աւուս 'ի Նովոգորոդ:		
ՐԻԼՐԻԿ	862	
Մէծիշխանական Աւուս 'ի Կիով:		
ՕԼԵԴ (Կառավարիչ Ռուսաստանի):	879	
Իգոր ւն ՐԻԼՐԻԿՈՎԻԷ	913	Ժ
ՕԼԳԱ, Կին Նորա (Կառավարիչ Ռուսաստանի).	945	
Սվետոսլավ ւն Իգորեւիչ	955	
Իարոսլու ւն Սվետոսլավովիչ	972	
Վլադիմիր ւն Սվետոսլավովիչ	980	
Սվետոսլու ւն Իարոսլուովիչ, որդեգիր Վլադիմիրի.	1015	Ժ
Իարոսլավ ւն Վլադիմիրովիչ (Մեծ).	1019	
Իվէսլավ ւն Իարոսլավովիչ	1054	
Սվետոսլավ ք Իարոսլավովիչ 1073—1077.		
Վսեվոլոդ ւն Իարոսլավովիչ	1078	
Սվետոսլու ք Իվէսլավովիչ	1093	

Անուանիք իշխանաց, Թագաւորաց, Աս-
պետաց եւ Աստուծոց Ռուսաց ըստ Աստ-
գի Գահաւանութեան:

Այ Գահաւան-
ութեան:

Դար

Ալադիմիր ք Ասելուդուիւն (Մոնո- մաքոս).	1113
Մստիսլաւ ք Ալադիմիրուիւն (Մեծ).	1125
Եարոսլաւ ք Ալադիմիրուիւն	1132
Ասելուդու ք Օլեգուիւն	1139
Իգոր ք Օլեգուիւն	1146
Իզեսլաւ ք Մստիսլաւուիւն	1146
Գէորգ ւն Ալադիմիրուիւն (Դուդո- բուկի).	1154
Իզեսլաւ ք Դանիւլուիւն	1157
Րոստիսլաւ ւն Մստիսլաւուիւն	1159
Մստիսլաւ ք Իզեսլաւուիւն	1167

Մեծ իշխանաւոր Անուանիք Ալադիմիր:

Անդրէյ ւն Գէորգիւիւն Պողոսեպսի,
տիրեալ ի Ալադիմիր յամ 1157
յամ 1174.

Մեքայէլ ւն Գէորգիւիւն	1174
Ասելուդու ք Գէորգիւիւն	1176

Գէորգ ք Ասելուդուիւն	1213
Եարոսլաւ ք Ասելուդուիւն	1238
Սլեպոսլաւ ք Ասելուդուիւն	1246
Անդրէյ ք Եարոսլաւուիւն	1249
Աղէքսանդր ւն Եարոսլաւուիւն Նիւս- կի սուրբ	1252
Եարոսլաւ ք Եարոսլաւուիւն	1264
Ատիլ ւն Եարոսլաւուիւն	1271
Իսմայիլ ւն Աղէքսանդրուիւն	1276
Անդրէյ ք Աղէքսանդրուիւն	1294

Մեքայէլ ք Եարոսլաւուիւն	1304
Իգոր ք Դանիւլուիւն	1318

ԺԲ

ԺԴ

ԺԴ

Անոանք իշխանաց, Թափառաց, Կայսրաց և Կայսրոհէաց Ռոմայ ըստ Կարգի Գահադարան լեւան:	Ա Գահադարան լեւան:	Գրք
Դեմետր ք Միքայելովիչ	1323	
Աղքատներ ք Միքայելովիչ	1326	
Մեծ իշխան և լեւան Մոսկովիչ:		
Յովհաննէս ան Դանիլովիչ (Կալիտա).	1328	
Սիմէոն ան իվանովիչ (Գորդի) Տաւրա.	1340	
Յովհաննէս ք իվանովիչ	1353	ԺԵ
Դեմետր ք Կոստանդինովիչ	1360	
Դեմետր ք իվանովիչ (Դոնսկոյ).	1362	
Վասիլ ք Դեմետրովիչ	1389	
Վասիլ ք Վասիլովիչ (Տեմնի).	1425	
Յովհաննէս ք Վասիլովիչ (Լեւոյ).	1462	ԺԶ
Վասիլ ք իվանովիչ	1505	
ԹԱԳԱՆՈՐԻ:		ԺԷ
Յովհաննէս ք Վասիլովիչ (Գրոզնի).	1534	
Ֆեոդոր ան իվանովիչ	1584	
Բարձուհի տոհմն Ռիւրիկայ յամի 1598	1598	
Բորիս Ֆեոդորովիչ Գորոնով		
Ֆեոդոր ք Բորիսովիչ Գորոնով	1605	
Սուր Դեմետր	1605	
Վասիլ ք իվանովիչ Շոյսկի	1606	
Դերարքայու թի յամի 1610 յամի 1613.		
ԹԱԳԱՆՈՐ ՏՈՒՆ ԲՈՒՐԱ- ՆՈՎԱՆՆՅ յամի 1613.		
Միքայել ան Ֆեոդորովիչ	1613 յուլի 1	
Ալեքսէյ ան Միքայելովիչ	1645 յուլի 13	
Ֆեոդոր ան Ալեքսիովիչ	1676 յուլի 29	
Յովհաննէս ան Ալեքսիովիչ և Պետրոս ան Ալեքսիովիչ	1682 ապրիլ 27	

Անուանի իշխանայ, Թագաւորայ, Այ-
սեփայ եւ Այսորահայ Ռուսայ ըստ Ասր-
գի Գահակալութեան :

Այ Գահակա-
լութեան :

Դար

Այսերի եւ Այսորահի :

ԺԸ

Պետրոս ԹԱԼԵՍԻՈՒԼԻԶ Ինքնակալ Թա.
գաւոր ամենայն Ռուսաց

Պետրոս ԹԱԼԵՍԻՈՒԼԻԶ (Այսոր ամե- 1689
նայն Ռուսաց յամի 1721.

Աստարինէ ԹԱԼԵՍԻՈՒԼԻԶ 1725 յուլ. 28

Պետրոս ԹԱԼԵՍԻՈՒԼԻԶ 1727 Տայնի 6

Աննա ԹԱԼԵՍԻՈՒԼԻԶ 1730 յուլ. 29

Առաւելարու Ռուսաստանի ՚ի Դքսուհ.
ւոյն Աննայէ յամի 1740.

Եղիսաբեթ ԹԱԼԵՍԻՈՒԼԻԶ 1741 Յուլ. 25

Պետրոս ԹԱԼԵՍԻՈՒԼԻԶ 1761 Գեղար. 25

Աստարինէ ԹԱԼԵՍԻՈՒԼԻԶ 1762 յուլ. 6

Պողոս ԹԱԼԵՍԻՈՒԼԻԶ 1796 Յուլ. 6

Աղէքսանդր ԹԱԼԵՍԻՈՒԼԻԶ 1801 Տարաի 12 ԺԹ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԹԱԼԵՍԻՈՒԼԻԶ 1825 Յուլ. 19



ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿԱՆՈՑ ՅԵՅՍ ԳԻՐՍ:

Յերէն:

Բաժանուիմ Ուսաց Պատմութեան 'ի շրջանս. . . 9

ԹԱԳԱԿԱՆ, ՏՈՒՆ ԲԻՒՐԻԿԱՅ:

ՇՐՋԱՆ Թ. 'Ի ժամանակէ սկզբնաւորութեան Ուսաց Միապետութեան ցվախձան Երրոսլալայ Թ. 11

Բնդհանուր ծանօթութիւնք զվիճակէ Ուսաստանի յայտմ շրջանի. 16

ՇՐՋԱՆ Բ. 'Ի մահուանէ Երրոսլալայ Թ. ցժամանակ ասպատակութեան Թաթարաց 'ի Ուսաստան. 17

Բնդհանուր ծանօթութիւնք զվիճակէ Ուսաստանի յայտմ շրջանի. 19

ՇՐՋԱՆ Գ. Յասպատակութեան Թաթարաց 'ի Ուսաստան մինչև ցՅովհաննէս Գ. 22

Բնդհանուր ծանօթութիւնք զվիճակէ Ուսաստանի յայտմ շրջանի. 27

ՇՐՋԱՆ Դ. 'Ի Յովհաննէս Գ. ցժամանակ ամբառնալոյ 'ի Պահամենայն Ուսաց Տան Բոմանովեանց. 29

ԹԱԳԱԿԱՆ, ՏՈՒՆ ԲՈՄԱՆՈՎԱՆՆՅ:

ՇՐՋԱՆ Ե. 'Ի ժամանակէ ամբառնալոյ 'ի Պահամենայն Ուսաց Տան Բոմանովեանց ցժամանակս Պետրոսի Թ. Թաթաւորութիւն Միքայէլ Ֆէոդորովիչի. Խ

Թագաւորութիւն Լէքսէյ Միքայելովիչի 42

Թագաւորութիւն Ֆէոդոր Լէքսէյեւիչի 45

Ընդհանուր ծանօթութիւնք զվիճակէ Ռուսաստանի 'ի Յովհաննէ ք. ց'Պետրոս ան. 47

ՇՐՋԱՆ 4. 'ի ժամանակէ Պետրոսի ան. ց'Բազմիչն 'ի Պաշտմենայն Ռուսաց Կայսրուհւոյն Կատարինէի ք. Թագաւորութիւն Պետրոսի ան. Լէքսէյեւիչի (Կայսեր յամէ 1721. 49

Թագաւորութիւն Կայսրուհւոյն Կատարինէի ան. Լէքսէյովնայի 64

Թագաւորութիւն Կայսեր Պետրոսի ք. Լէքսէյովիչի . 65

Թագաւորութիւն Կայսրուհւոյն Լենայի ան. Իվանովնայի . 67

Կառավարութիւն Ռուսմանի յիշխանուհւոյն Լենայի . 69

Թագաւորութիւն Կայսրուհւոյն Եղիսաբեթի ան. Պետրովնայի 71

Թագաւորութիւն Կայսերն Պետրոսի ք. Ֆէոդորովիչի . 73

ՇՐՋԱՆ 5. 'ի բազմեւոյ 'ի Պաշտմենայն Ռուսաց Կայսրուհւոյն Կատարինէի ք. Լէքսէյովնայի ց'վախճան Կայսերն Ըղէքսանդրի ան.

Թագաւորութիւն Կայսրուհւոյն Կատարինէի ք. Լէքսէյովնայի 74

Թագաւորութիւն Կայսերն Պողոսի ան. Պետրովիչի . 80

Թագաւորութիւն Կայսերն Ըղէքսանդրի ան. Պաւլովիչի . 83



ՀԱՄԱՌՕՏ ԱԶԳԱՐԱՆԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ

ԹԱԳԱԴԻՐ Ի ՌՈՒՍԵՍՏԱՆ ՏԱՆ ԲՈՄԲԱՆՈՒԷԱՆՑ Ի ԺԱՄԱՆԱԿԻ: ԵՄԲԼՈՆԱԼՈՅ
ՆՈՐԱ Ի ԳԼՀ ԵՄԵՆԵԹՆ ՌՈՒՍԱՆ Ի 1613 ԵՄԻ:

ՄԷՔԱՅԷԼ Թ. + 1645: (*)

ԱԼԷՔՍԵՅ Թ. + 1676:

ՖԵՏԴՈՐ Թ. + 1682:

ԹՈՎՏԱՆԷՍ Թ. 1696:

ՊԵՏՐՈՍ Թ. (ԱՅՍՐ) + 1725:

ԱՍՏԱՐԻՆԷ Թ. ԵՐԿՐՐԴ ԿԻՆ ՆՈՐԱ + 1727:

ԱՆՆԱ Թ. ամուսնացեալ ԱՍՏԱՐԻՆԷ ամուսնացեալ
Ը ԴԵՐԻՆ ԱՌԱՐԵԱՆԴԻՅ Ը ԴԵՐԻՆ ՄԵԿԼԵՆԵՐԱՐ .
+ 1740: Լ ԵՍՍՐՈՐԻ:

ՈՐԴԻ յԱՌԱՋԻՆ
ամուսնութիւն.

ԱԼԷՔՍԵՅ + 1718:

ԴԱՏԵՐԵ յԵՐԿՐՐԴ ամուսնութիւն.
ԱՆՆԱ ամուսնացել Ը ԴԵՐԻՆ
ՀՈՒՍՏԵՅՆՈՒ ՓՐԻՄԵՐԻԿՈՍԻ + 1728:

ԱՆՆԱ ամուսնացեալ ԸՆԴ
ԴԵՐԻՆ ԲՐԱՌԱՆՉՈՎԵՅԻ
ԱՆՈՐԻ:

ՊԵՏՐՈՍ Թ. + 1730:

ԹՈՎՏԱՆԷՍ + 1764:

ՊԵՏՐՈՍ Թ. + 1762:
ԱՍՏԱՐԻՆԷ Դ, ԿԻՆ ՆՈՐԱ + 1796:

ՊՕՂՈՍ Թ. + 1801:

ԱԼԷՔՍԱՆԴՐ Թ. + 1825: ԱՍՏԱՆԴԻՆ + 1851: ՆԻԿՈՂԱՅՈՍ Թ., ամուսնացեալ ԸՆԴ
ԻՆՍՏԱՆՈՒՀԼՈՅՆ արքայական տան
ՊՈՒՍՏԱՅ, ԱԼԷՔՍԱՆԴՐԱ ՖԵՏԴՈՒ
ՐՈՖԻՍԻ, ծնեալ Ի 1 յՈՒԼ 1798
ծնաւ Ի 25 յՈՒՆ. 1796:

ՄԷՔԱՅԷԼ՝ ամուսնացեալ Ը ԻՆՍՏԱՆ
ՆՈՒՀԼՈՅՆ ԱՐԽԱՅԻԿԱՆ ԱԼԻՐՈՒՄԸ
ԵՐԵՐԱ ՏԱՆ ԻՆՆԱ ՊԱՎԼՈՖԻԱ
ԵԼԷ, ծնեալ Ի 28 ԴԵԿՏԵՄԲ. 1806.
ծնաւ Ի 28 յՈՒՆԻ. 1798:

ԱԼԷՔՍԱՆԴՐ, Ծնեալ Ի 17 Ս. 1818:	ԱՍՏԱՆԴԻՆ, Ծնեալ Ի 9 Ս. 1827:	ՆԻԿՈՂԱՅ, Ծնեալ Ի 27 Ս. 1831:	ՄԷՔԱՅԷԼ, Ծնեալ Ի 13 Ս. 1832:	ՄԱՐԵՍ, Ծնեալ Ի 6 Ս. 1819:	ՕՂՈՍ, Ծնեալ Ի 50 Ս. 1822:	ԱԼԷՔՍԱՆԴՐ, Ծնեալ Ի 12 Ս. 1825:	ՄԱՐԵՍ, Ծնեալ Ի 5 Ս. 1826:	ԻՆՆԱ, Ծնեալ Ի 14 Ս. 1827:	ԱՍՏԱՆԴԻՆ, Ծնեալ Ի 16 Ս. 1827:	ԱՆՆԱ, Ծնեալ Ի 14 Ս. 1827:
--------------------------------------	------------------------------------	------------------------------------	------------------------------------	---------------------------------	---------------------------------	--------------------------------------	---------------------------------	---------------------------------	-------------------------------------	---------------------------------



